

ՀԱՐԱԾԻՆ

ԱՊՐ 146

7A-996



ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՍԻԱՇՆԻ

I



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒԹ Յ ՈՒՆ

Ամանորի և Ս. Մենդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Արքագնա- գույն Կաթողիկոս Նորին Ս. Օծուբյուն Ս. Տ. Գեորգ Զ.ի շնորհա- վարական հեռագիրը բոլոր թեմերին և բույր եկեղեցիների պե- տերին	3
Ամանորի և Ս. Մենդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Արքագնա- գույն Կաթողիկոս Նորին Ս. Օծուբյուն Ս. Տ. Գեորգ Զ.ի անունով թեմերից ստացված շնորհավորական հեռագրերն ու գրություն- ները	4
Ամանորի և Ս. Մենդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Արքագնա- գույն Կաթողիկոս Նորին Ս. Օծուբյուն Ս. Տ. Գեորգ Զ.ի անունով բույր եկեղեցիների պետերից ստացված շնորհավորական հեռա- գրերն ու գրությունները	9
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Ամանորի և Ս. Մենդյան բարեմադրություններ	12
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ—ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Հայ եկեղեցին և Ամենայն Հայոց Հայ- րապետությունը Սովետական երկրի մեջ	15
ԴԵՌԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱԹՅԱՆ.— Հիսուսի Մենդյան խորհուրդը	19
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԺԱԿԱՏՈՒՄ	22
ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ.— Անմահացալի հիշատակներ	24
ՊՐՈՖ. Լ. ՍԵՄՅՈՆՈՎ.— Վերադարձ շրջան	27
ՊՐՈՖ. ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.— Ֆրիկի Վիվանթի հրատարակու- թյան առթիվ	32
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ ՈՒ Մ	44
ՎԱԶԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Մեր վանքերը (բանաստեղծություն)	46
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒԻՐԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	48
ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ.— Զեկույց երանաշնորհ Ս. Գաբրիել Հայրապետի ձեռագիրներում մասին	51
Հայաստանում սովետական կարգերի հաստատման 33-րդ տարեդարձի հշումը Սփյուռքում	54
ՐԱՆԱՍԵՐ.— Հայ բառերական արվեստի պատմությունից	59

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ, ԷՋՄԻԱՄԻՆ

«ԷՋՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Ереванская Редакция журнала «Етчимадзин»

Redaction of the magazine „Etchmiadzin“, Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1954 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԴԷՈՐԴԱՅ Զ.Ի

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԵՆԱՓԱՆՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵԱՂԿՅԱ ԴԱՆԼԻՃՈՒՄ, ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ ՊԱՏԽԵՐՈՂ ՊԱՏԻ ԳՈՐԳԻ ՄՈՏ:



Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Ք

**ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ,
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ Ս. ՕՏՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի
ՇՆՈՐՀԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԲՈՂՈՐ ԹԵՄԵՐԻՆ,
ԵՎ ՔՈՒՅՐ ԵՆԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ**

ՓՐԿՁԻ Ս. ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ,
ՈՐ ՏԵՐԸ ՆԵՐՇՆՁԵ ԻՐ ՍԻՐՈ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՈԳԻՆ ՀԱՄԱՅՆ ՄԱՐԴԿՈՒ-
ԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍՁԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԵ, ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԱՂ ՈՒ ԵՐՋԱ-
ՆԻԿ ԱՊՐԻ: ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՏԵՐԸ ՊԱՐԳԵՎԵ ԶԵՁ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՐԵՎՇԱՏՈՒԹՅՈՒՆ:

Գ Ե Ո Ր Գ Զ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ Ս. ԾԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒՆՈՎ
ԹԵՄԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱՆԹՈՒԱՍԻՑ

Սրտագին շնորհավորություններ նոր տարվա և Ս. Ծննդյան տոների առթիվ: Սաղորում եմք Ձերդ Վեհափառության երկար կյանք: Ամենասուրբն Աստված անասան պանե Հայոց եկեղեցին և խաղաղությամբ պարգևե մարդկության:

**ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈ՝
ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶԱՊԱՀՅԱՆ**

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՏԻՑ

Նոր տարվա և Ս. Ծննդյան տոների առթիվ սրտագին շնորհավորություններ մեր և համայն ժողովրդից՝ սրտանց մաղբելով Ամենակալից շնորհք, երկար կյանք և առողջություն, և եկեղեցուն՝ առավել պայծառություն:

**ՊԱՏՐԻԱՐԺ ԹՅՈՒՐԹԻՈ ՀԱՅՈՑ՝
ԳԱՐԵԴԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱԶՈՏԻՍԻԱՆ**

ԵՐՈՒՍԱԿԵՄԻՑ

Ձերդ Վեհափառության մատուցում եմք հարգալիք շնորհավորություններ ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ: Աղոթում եմ Ամենակալին՝ շնորհեք Ձեզ երկար կյանք և անասան պանպանե մեր Մայր Աթոռ և Հայրենիք:

**ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՐՈՒՍԱԿԵՄԻ ՀԱՅՈՑ՝
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՍԻԱՆ**

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցու միաբանությունը շնորհավորում է Ձերդ Վեհափառության նոր տարին, Մեծնդն ու Մկրտությունը, Քրիստոսով ցանկանալով Ձեզ երկար կյանք, առողջություն և հաջողություն:

**Առաջնորդ Շիրակի թեմի՝
ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

ԹՐԻԼԻՍԻԻՑ

Շնորհավորում եմք Ձեր նոր տարին, ի սրտե ցանկանում եմք Ձեզ առողջություն և երկարատև կյանք:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՀԻՐՆԻՑ

Իմ և Նզիպտոսի հոգևորականության անունից խնդրում ենք Ձեր պատասխանությունը՝ հանեցե՛ք ընդունել մեր հարգալիք ցանկությունները նոր տարվա և Ս. Մենդյան տոների առթիվ: Խնդրում ենք հավատալ մեր կատարյալ անկեղծության և աղերսում ենք Ձերդ հայրապետական օրհնությունները:

Առաջնորդ Եզրեպտահայ բեմի՝
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԲՈՒՆԵՆՈՅ-ԱՅՐԵՍԻՑ

Ամանորի և Ս. Մենդյան տոների առթիվ հանեցե՛ք ընդունել մեր հոտի և մեր սրտագին մաղրանքները՝ Ձեր թանկագին կյանքի առողջության և Մայր Աթոռն պայծառության համար:

Խոնարհ արդի, աղաքակից,

Հայրապետական պատվիրակ Հարավային Օսմերիկայի հայոց՝
ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲՈՒՆԱՐԵՍԻՑ

Ռումինահայ բեմի և մեր անունով շնորհավորում ենք սիրո ու խաղաղության ավետաբեր Աստվածորդու Ս. Մնունդր և նոր տարին ու մաղրում ենք Ձեզ քաջառողջ և երկար կյանք, Մայր արոսին՝ անսասանություն, հաճախ առվեսական Հայրենիքին՝ խաղաղ առաջընթաց:

Առաջնորդ Ռումինահայ բեմի՝
ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՆՔՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐԳԻՑ

Քրիստոսի Մենդյան և Աստվածաբանության տոնի առթիվ ընդունեցե՛ք մեր և մեր բեմի հոգևորական դասի և հոտի սրտագին մաղրանքները՝ Ձերդ Արքության արևշատության և Մայր Աթոռն պայծառության համար:

Առաջնորդ Հյուսիսային Օսմերիկայի հայոց արևելյան բեմի՝
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ

ՓԱՐԻՋԻՑ

Նոր տարվա և Մենդյան տոների առթիվ մատուցանում ենք անձամբ ես, նմանապես խորհուրդն ու հավատացյալները՝ սրտագին շնորհավորություններ, լավագույն ցանկություններ, հարգալիք մեծարանք: Մաղրում ենք Ձերդ վեհափառության առողջություն և երկար կյանք, Հայոց Նկեղեցուն՝ բարգավաճում և փառավորություն, Ձերդ վեհափառության իմաստուն և քաջատես հովանու տակ:

Եզրեպտայի բեմի հայրապետական պատվիրակ՝
ՍԵՐՈՎՐԵ ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՖԻՆԱՆՍԻՑ

Ամանորի և Աստվածահայտնության երջանկաբեր տոների առթիվ կհայտնենք Ձեզ շնորհավորություններ իմ, եկեղեցական դասի, Երեսփոխանական ժողովո, կենտրոնական վարչության և բեմիս համայն եկեղեցական մարմինների և հավատացյալ հոտի անունով: Կմաղթենք աշխարհին խաղաղություն, եկեղեցուն՝ բարգավաճում, Մայր Աթոռին՝ անսասանություն, Վեհափառությանը՝ փառապաշտ կյանք և երջանիկ տարիներ:

Առաջնորդ Կալիֆորնիա քեմի՝
ՇՆՈՐՀ ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԳԱՊԵՏ ԳԱՍՏՅԱՆ

ԼՈՆԴՈՆԻՑ

Խնդրում ենք ընդունեցե՛ք մեր համայնքի շնորհավորությունները Մենդյան տոների առթիվ: Այսօր աղոթում ենք Ձերդ Վեհափառության և Ս. Էջմիածնի համար:

Հագևոր հովիվ Լոնդոնի հայոց՝
ՊԱՍԿ ՎԱՐԳԱՊԵՏ ԹՈՒՄԱՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Թեմական խորհուրդը, հոգևորականությունը, հավատացյալները և անձամբ և շնորհավորում ենք Ձեր նոր տարին և Մենդյան սուրբ տոնը: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկարատև կյանք՝ ի բարօրություն Հայ Եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի: Համբուրում ենք Ձեր Աչք:

Ազրբեջանի հայոց եկեղեցական քեմի առաջնորդ՝
ԳԱՐԵԳԻՆ ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԳԱՊԵՏ

ԵՐԵՎԱՆԻՑ

Մենդյան և ամանորի տոների առթիվ հոգաբարձությունը, Բանանյից դասը և հավատացյալ շնորհավորում են Ձեզ, բարեմալթելով, որ հայրապետական զանի վրա երկար տարիներ դանակալե՛ք, հոգուտ հայ ժողովրդի և հանուն խաղաղության:

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԳԱՍ
ԵՎ ՀԱՎԱՏԱՅՅԱԼ ԺՈՂՈՎՈՐԴ

ԵՐԵՎԱՆԻՑ

Նոր տարվա և Ս. Մենդյան առթիվ Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու Բանանյից դասի, հոգաբարձության և հավատացյալների անունից խնդրում ենք ընդունել առողջության, խաղաղության և երկար տարիների մաղթանքներ: Կատարեցինք Հայրապետական մաղթանք:

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԳԱՍ
ԵՎ ՀԱՎԱՏԱՅՅԱԼ ԺՈՂՈՎՈՐԴ

ՌՈՍՏՈՎԻՑ

Մենք, հոգևորականությունը, բնական խորհուրդը և հավատացյալները շնորհավորում ենք Ձեր նոր տարին, ցանկանում ենք Ձեզ առողջություն և երկարատև կյանք՝ ի բարգավաճումն Հայրենիքի և ի բարօրություն Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցու:

Հյուսիսային Կովկասի հայոց բժիշկ առաջնորդ՝
ՎԱՐԴԱՆ ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻՑ

Ա ս տ վ ա ծ ա Ր յ ա լ Ս. Հ ա յ ր ա պ ե տ,

Նոր տարին ու Փրկչին Ս. Մենդյան և Հայտնության տոներ՝ ողիական անկեղծությամբ և խորին ակնածանով շնորհավորելով, կհայցեմ մանուկ Հիսուսի աստվածային շնորհն ու գուրը, աշխարհի խաղաղության, ազգերու սիրելության, պետությանց հաշտության, Հայաստանյայց Ս. եկեղեցվո ամուր միասնականության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության համար, օչնականությամբ մաքուր աղոթից Ձերդ Վեհափառության, որուն ընդ երկար ֆառառող կյանքին և արևշատության՝ տիվ և գիշեր անդադար կաղոթեմ Հայրենիքի քե Սիյուտի Ձեր համայն հոտը:

Ազգիս ընդհանրական և ֆաշարբուն Հայրապետիդ Իանկազին կենաց համայր ամոք երկարության բարեմաղբու և Ձերդ Ս. Օծության հոգեսուն զավակաց տուպս՝ խոնարհաբար կմատչիմ ի համբույր օծյալ Ս. Աջույդ, մնալով միշտ հավատարիմ ծառա և ամենաճնազանդ ուղի՝

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄԻԼԱՆԻՑ

Շնորհավոր ամառուր և Մեռնդ: Կաղոթենք Ձեր առողջության, եկեղեցվո, աշխարհի բարօրության համար:

ՋԳՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ԱԹԵՆՔԻՑ

Ամանորի և Ս. Մենդյան տոների աղթիվ, հանձինս հունաճայ ցաղութին, պատիվ ունենք մատուցանելու շնորհավորություններ և բարեմաղբություններ՝ Ձերդ Վեհափառության և Հոգևոր հորհրդի արևշատությամբ համար:

ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ԽՈՇՈՐՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Ամանորի և Ս. Մենդյան տոների աղթիվ խոնարհաբար հայտնելով մեր սրտազին շնորհավորությունները, բարեմաղբում ենք Ձերդ Վեհափառության արևշատություն երկար տարիների համար:

ՔԱՀԱՆԱՅԻՑ ԻԱՍ
ԵՎ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԹԱՎՐԻՋԻՑ

Թեմական ժողովը, թեմական խորհուրդը և համայն ժողովուրդը ջերմեռանդորեն համբուրելով Ձերդ Ս. Աջը, շնորհավորում են նոր տարին և Ս. Ծնունդան տոները՝ մաղթելով Ձեզ երկար կյանք, համեմատ ընդ երկայն ավուրս տեսնել Ձեզ հայրապետական գահի վրա:

Հայաստանյայց Առաքելական Ս. Մկեղեցվո
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՆԱՆԱ

ԲԱՂԴԱԴԻՑ

Ամբողջ համայնքով շնորհավորում ենք նոր տարին և Ս. Ծնունդը՝ ցանկանալով Ձերդ Վեհափառության երկար կյանք և արեջատություն:

Առաջնորդական տեղապահ՝
ԳՐԻԳՈՐ ՔԱՆԱՆԱ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱԿԱԹԱՑԻՑ

Շնորհավորում ենք Ձերդ Վեհափառության և միաբանության նոր տարին և Ս. Ծնունդը:

ՔԱՆԱՆԱՑԻՑ ԴԱՍ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՀԱՄԱՅՆՔ

ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ

Կիրովականի հավատացյալ ժողովուրդը շնորհավորում է Ձեր նոր տարին, ցանկանում Ձեզ երկար կյանք և առողջություն՝ անսպառ ջանքով աշխատելու Հայրենիքի ու Ս. Եկեղեցու համար:

Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՆԱՆԱՑԻՑ ԴԱՍ
ԵՎ ՀԱՎԱՍՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՐԴ

ՆԻՍԻՑ

Կյուպենկյան և Էս Երախտացետ ենք Ձեր հեռադրերի համար: Աղոթում ենք, որ հայ ժողովուրդը երկար ժամանակ վայելի Ձեր հայրապետական հովանավորությունը:

ՎԱՆԱՆ ՄԱԼԵՅՅԱՆ

ՁԱՌԻՋԻԿԱՌԻՑ

Թեմական խորհուրդը, հավատացյալները և անձամբ ես շնորհավորում ենք Ձեր նոր տարին, ցանկանում ենք Ձերդ Վեհափառությանը առողջություն, երկարակյանք՝ ի բարօրություն և ի բարգավաճումն հարազատ եկեղեցու և հավատացյալների:

ԱՎԱԳ ՔԱՆԱՆԱ, ԹԱՎԱՐՈՅԵՑԱՆ

**ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ՄՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ Ս. ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒՆՈՎ
ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՑ ՍՍԱՑՎԱԾ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Հնդունեցեք ինձե՛կց ողջույն և հաղորդակցումն ուրախության ի Տերն մեր Հիսուս, որ իր ձեռքով բերել է աշխարհին խաղաղություն և մարդկանց երջանկություն, որը ավետեցին հրեշտակները, ինչպես և կյանք, որը բարբառել է նա իմե՛րը՝ «ես եմ յառաքիւն և կեանք»:

Թող նրա շնորհաբաշխ կյանքը հաստատուն պահի մեր բոլորի՝ Աստվածորդու մարմնավորման մեծ տոնը տոնույններս հավաք և բոլ նա իր բարձրագույն ուժով պահպանի և ամրացնի մեր երկրային կյանքը և հավելու ալլօգտակար, բարի և փրկարար զորձեր:

Քերպեճեմու՛մ ծնվածք և մտւում հանգչողք բող ընդունի մեզ՝ իր նվաստ երկրապաղողներին և պարգևի շնորհք՝ իրեն փառաբանելու և ուրախանալու համար:

Եվ բող վերահաս նոր տարին բոլոր ժողովուրդների համար լինի բարեբաւ խաղաղության տարի, աստվածային շնորհք բոլոր երկնային օգնությունը խնդրողների վրա լինելու և Տիրոջը փառաբանելու տարի:

Եղբայրական սիրով առ Ձերդ Սրբությունն ի Քրիստոս,

ՄՈՍԿՎԱՅԻՒ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐԺ՝

Ա. Լ. Ե. Ք. Ս. Ի

ԹԹԻԼԻՍԻՑ

Վերահաս ամանորի և Ս. Մենդյան տոների առթիվ մատուցանում եմ Ձերդ վեհափառությանը մեր շնորհավորանքը: Թող Քերպեճեմու՛մ ծնված մեր Փրկիչը պարգևի Ձերդ վեհափառությանը առողջություն և երկարատև կյանք: Թող այս նոր տարում աշխարհի վրա մարմնավորվի հրեշտակների ազդարարած աստվածային պատգամը՝ «և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Ձեր եղբայրն ի Քրիստոս,

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԺ՝

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Խնդրում եմ Ձեզ ընդունել մեր խորը և սրտագին շնորհավորանքները Քրիստոսի՝ մեր Աստուծո Մենդյան մեծ տոնի առթիվ, որը բերել է «խաղաղութիւն հեռաւորաց և մերձաւորաց» (Եսայի, ՄԷ 19): Ողջունում եմ Ձեզ նույնպես նոր տարվա առթիվ:

Ամբողջ հոգով ցանկանում եմ Ձերդ Սրբությանը երկար կյանք: «Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով գորութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ., ԺԵ 13):

Ուղիական նվիրական սիրով,

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈՒՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝

ՆԻԿՈԼԱՅ

ՏԱԼԼԻՆԻՑ

Ներքայրական սիրով ի սրտե հղում եմ Ձերդ վեհափառությանը և Ձեր կողմից գլխավորված Հայ եկեղեցուն լավագույն ցանկություններս՝ Քրիստոսի լուսապայծառ Մենդյան տոնի և նոր տարվա առթիվ: Թող օրհնվի այս նոր տարում Ձեր գործունեությունը բնականորեն խաղաղության, մեր եղբայրական եկեղեցիների, ժողովուրդների և սովետական ժողովուրդների բարօրության համար մղված պայքարում:

ԷՍՏՈՆԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝

ՅԱՆ ԿԻՅՎԻՏ

ՌԻԳԱՅԻՑ

Մտանց և աղոթքներով շնորհավորում եմ Ձերդ վեհափառությանը նոր՝ 1954 տարին և Քրիստոսի լուսապայծառ Մենդյան Բերդեհեմի մատուռ: Հրեշտակները օրհներգով մեծառել են մանուկ Քրիստոսին՝ աշխարհի բազմաթիվ: Թող ամրանա բոլոր քրիստոնյաների միությունը: Թող ծաղկի ժողովուրդների բարեկամությունը՝ Բալթիկ ծովից մինչև աստվածաշնչային Արարատ լեռ և ողջ աշխարհում:

ԼԱՏՎԻԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝

ԳՌԻՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ԼՈՆԴՈՆԻՑ

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Շնորհ և խաղաղություն յԱստուծոյ Հօռէ մերմէ և ի Տեառն, մերմէ ձիւսուէ Քրիստոսէ:

«Եկայք երբիցոյ մինչև ցերեպեհեմ, և տեսցոյ գինչ է բանս այս, որ եղև զոր Տէր եցոյց մեզ» (Ղուկ., Բ 15): Հասարակ հովիվների հետ, յուրաքանչյուր քրիստոնյա հոգի, Տիրոջ Մենդյան տարեկան տոնախմբության առթիվ, ֆայլում է այն ճանապարհով, որ առաջնորդում է դեպի «մանուկն եղեալ ի մտուր»: Միտեղ կատարելով այս, քրիստոնյաները, մեծապես տարբերվող ավանդություններով, ցուցաբերում են աշխարհին իրենց էական միությունը՝ նվիրմամբ Հիսուս Քրիստոսին, որ «յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջնալ ի յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալագէտ ի Մարիամայ Սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով» (Նիկիական հանգանակ):

Հովիվները ուղևորվեցին դեպի գոմը, որովհետև նրանք տեսան մի մեծ լույս, «և փառք Տեառն ծագեցին առ նոսա», և որովհետև նրանք լսեցին հրեշտակի պատգամը: Ինչպե՞ս կենսականորեն այս լույսը անհրաժեշտ է այսօրվա աշխարհին, որտեղ անվստահությունն ու կասկածը մթազնում են մարդկանց խորհուրդները և սովեր են գցում աշխարհի ժողովուրդների վրա:

Քրիստոսի փրկելու և բժշկելու իշխանության վկայությամբ, միայն խորը զգացմունքով է, որ ես շնորհավորում եմ Ձեզ, Սիրեցյալ Աղբյուր, մեր Փրկչի Մենդյան տառելարի առթիվ: Ազդեմք, որ աստվածային իշխանությունը, որ զալիս է իր մեջ բազուկների մեջ գտնվող այդ մանուկից, հաղթանակի խավարի, ատելության և հարստահարության ուժերին:

Ազդեմք եմք Ձերդ Սրբության և Ձեր հավատացյալ ժողովրդի համար, Ձեզ և նրանց ցանկանալով օրհնելով Մենդ:

Մենամ Ձեզ սիրով եղբայր ի Քրիստոս,

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏՐՐԵՐԻՆ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՈՍ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈՒ
ԶԵՆՈՅՈՐԻ

ՍՈՖԻԱՅԻՑ

Եղբայրական սիրով շնորհավորում եմ Ձերդ վեհափառությանը՝ Քրիստոսի Մենդյան տոնի առթիվ: Ցանկանում եմ Ձեզ և Ձեր հոտին երջանիկ նոր տարի, խաղաղություն ամբողջ աշխարհում:

ԲՈՒՆԱՐԵԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԺ
ԿԻՐԻՆ

ԲՈՒՆԱՐԵԱՅԻՑ


Ի բոլոր սրտե շնորհակալություն՝ անթելով նոր տարվա և Մենդյան մեծ տոների առթիվ Ձերդ վեհափառության արտահայտած բարի ցանկությունների համար: Խնդրում եմ նմանապես հանձնել բնորոշ մեր մաղրանները և եղբայրական ողջույնները Հիսուս Քրիստոսի Մենդյան տոնի առթիվ:

ԲՈՒՄԻՆԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԺ
ՀՈՒՍՏԻՆԻԱՆ

ԶԱԳՈՐՍԿԻՑ

Մոսկվայի Հոգևոր հեմարանը շնորհավորում է Ձերդ վեհափառությանը՝ ամանորի և Ս. Մենդյան տոների առթիվ: Ի սրտե ցանկանում եմք Ձեզ առողջություն, երկարատև կյանք և ամեն տեսակի բաբոություն:

ՌԵԿԽՈՐ՝ ԿՎԱԳ ԲԱԽԱՆԱ ՌՈՒԺԻՑԿԻՑ
ՊԵՏԵՂ՝ ԿՐԵՓԻՍՈՐ ԴՈՎՏՈՒՄՈՎ





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ՄՆԵՂՅԱՆ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ



մանորի և Քրիստոսի հրաշափառ Ս. ՄՆԵՂՅԱՆ կրկնակի տոների առթիվ, Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետի՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Կաթողիկոսի անունից, «Էջմիածին» ամսագիրը սրտագին շնորհավորում է Մայր Հայրենիքի և Սփյուռքի հավատացյալ հայ ժողովրդի հոր տարին և Ս. ՄՆԵՂՅԱՆը:

Նոր տարվա շնմփին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Նրա հայրենաօր Քանաճայապետի անկեղծ ու լավագույն բարեմադրությունն այն է, որ 1954 թվականը լինի կայուն և երկարատև խաղաղության տարի և՛ հայ ժողովրդի, և՛ երկրագնդի բոլոր ժողովուրդների համար, «մարդկանց միջև հաճության» տարի և «երկրի վրա խաղաղության» տարի, ըստ ՄՆԵՂՅԱՆ սուրբ պատգամների (Ղուկ., Բ 14):

Նոր տարվա և մանկացյալ Աստվածաբնու հրաշափառ Ս. ՄՆԵՂՅԱՆ տունը իր «մեծ և սքանչելի խորհրդի» շուրջն է հավաքում հորից ողջ աշխարհի մարդկությանը: Մարդկությունն այսօր ևս, հին Արևելքի իմաստունների նման, Բեթղեհեմի աստվածային խորհրդավոր աստղին է հետևում՝ գտնելու իր հազար խաղաղությունը:

«Եւ ժողովուրդ, որ նստէր ի խաւարի, ետես զլոյս մեծ»:

Ամանորի և Ս. ՄՆԵՂՅԱՆ այս նվիրական օրերին, մի անգամ ևս ողջ աշխարհով մեկ

ազդարարվում են քրիստոնեական կրոնի խաղաղության, համերաշխության, երջանկության ու բարօրության աստվածային պատգամները: Քսան ձիգ դարեր անցնելուց հետո ևս, ամանորի ու Ս. ՄՆԵՂՅԱՆ պատգամները չեն կորցրել իրենց այժմեականությունն ու պատմական հշանակությունը աշխարհի ու մարդկության համար: «Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդն աստուածպաշտութեան, որ Երևեցաւ մարմնով» (Ա Տիմ., Գ 16):

Քրիստոսի քերած խաղաղությունը ովի-րակիան բաղձանքն է եղել տանջված, հարստահարված ու նախառված ժողովուրդների:

«Քսան ձիգ դարեր են սանել-անցել Փրկչի ՄՆԵՂՅԱՆից, — գրում է Վահագնաբ — ...բայց Փրկչի ոգին դեռ չի իջխում ո՛չ պետությունների, ո՛չ ընտանիքների, ո՛չ անհատների սրտում... Ո՛ր է այն խաղաղությունը, որ Աստված ծրագրել էր աշխարհի համար, յուր Որդու ձեռքով, ո՛ր է խաղաղության բազմությունը, որ Բեթղեհեմի բարի հովիվը երկրի վերա հաստատելու եկավ...: Այսօր էլ դեռ շատ վեհեր ու կռիվներ կան երկրի վերա, արտասուքներ են հոսում հեղեղներով, արյան ծովերն ողողել են երկիրը, ցավով ենք նայում պատերազմում բափված արյան վերա...»:

Քրիստոսի ՄՆԵՂՅԱՆ պատմական մեծ իրադարձություն էր համաշխարհային պատմության մեջ: Այն դարերով ոգեշնչել և գաղափարապես զինել ու դաստիարակել է քրիս-

տանյա սերունդներ ընդդեմ տգիտության, մեղքի, չարիքի, նախապաշարումների իրենց պայնարում: «Նկայք առ իս ամենայն վաստակեալի և բեռնաւորի և ես հանգուցից գծեմ»:

Պատմության գիրկն անցաւ ևս մի տարի, ողջ աշխարհի և մարդկության համար մեծ իրադարձություններով հարուստ մի տարի: Երկրագնդի բոլոր ժողովուրդները հավաքւել էն ամառնորի ուվանդական սեղանների շուրջը՝ հաճապարհելու մեռնող տարին, ու նոր հուլգերով, խոկումներով դիմավորելու նոր տարին:

Նայում ենք մերք թախիծով, մերք խիւղով մեռնող տարվա վրա: «Ամենայնի ժամանակ է և ժամ ամենայն իրաց ի ներքոյ երկնից» (Ժողովուրդ, Գ 1): Մեռնող, գնացող տարին ինչե՞ր է տանում մեր կյանքից, մեր երազներից հավերժի գիրկը: Անցաւ 1953 թվականը և մարդկության կյանքից ինչ-որ մի բանկազին ու պայծառ մասնիկ ընդմիշտ գնաց անցյալի գիրկն անվերադարձ:

Նոր տարին ևս, իր սրբազան խոհերով ու զգացմունքներով, իրար է կապում երկրագնդի ֆաղափական, կրօնական տարբեր համոզմունքների, տարբեր աշխարհայացքի տեւ մարդկանց, որոնք նույն խաղաղասիրական ու ազնիվ ցանկություններով, հույսերով են դիմավորում նոր տարին:

Նոր տարի, նոր օր, նոր կյանք է սկսւել աշխարհի և երկրագնդի ողջ մարդկության համար: «Ամենայն ձաբ լցցին և ամենայն լեւինք և բլուրք խոհարհեսցին» (Նսայի, Խ 4): Եվ անհա հարավի ջերմ արևի տակ քե հյուսիսի ցրտաշունչ բեռնում, արևելքում քե արևմուտքում, այդ ջերմ ու հարազատ հակումներով ապրող մարդկության համար բացվում է նոր տարվա պայծառ առավոտը, ու քարի կամքի տեւ միլիոնավոր մարդիկ, որոնք հազու հազարավոր քելերով անփակեկորեն կապված են միմյանց, ողջունում են իրար երևանից մինչև Մոսկվա, մինչև Փարիզ, մինչև Շանհայ...:

Աշխարհի քրիստոնյա և ոչ քրիստոնյա ժողովուրդները է՛լ ավելի հանդարտ խղճով ու վառ հույսերով են դիմավորում 1954 թվականը այն պայծառ համոզմունքով, որ իրապես այդ թվականը կլինի աշխարհում

«մարդկանց միջև հաճության և երկրի վրա խաղաղության» պատմական տարի:

1953 թվականը, արդարև, իզուր չի անցել մարդկային կյանքի պատմության մեջ: Պատմականորեն շատ կարև այդ ժամկետի աչքի ընկնող մեծագույն բարիքներից մեկը մարդկության և աշխարհի համար այն է, որ 1953 թվականը իր մի շարք դառն հուսախաբությունների հետ, որոշակի հաջողություններ բերեց միջազգային հարաբերությունների լարվածությունը թուլացնելու գործում: 1953 թվականը պատմության մեջ մտավ առավելապես որպես խաղաղության համար պայնարի միջազգային մեծ իրադարձություններով հարուստ տարի: Այսօր մարդկությունը նոր տարվա սեմին դեռևս իր անցյալի վեճերն է բուծում խաղաղ աշխատանքի վառ հավատով ու հույսով, ու նա ավելի՛ փան երբեք վճռական է իր սեփական կյանքով ընդմիշտ փակելու նոր պատերազմների, նոր արհավիրքների արյունոտ հաճապահր:

Օրեցօր անում ու ամրապնդվում է ողջ աշխարհում խաղաղության մեծ ու եզուր շարժումը:

Խաղաղության երգը շրթներին, բերկրանքով ու մեծ հուլգերով դիմավորում է նաև հայ ժողովուրդը, քե՛ Հայրենիքում և քե՛ Սփյուռքում, իր նոր տարին և իր Փրկչի հրաշափառ Ս. Մենդյան տանը:

Անցնող յուրաքանչյուր օր ու տարի ազնիվ հպարտությամբ է լցնում ճշմարտապես հայրենասեր ու հավատացյալ յուրաքանչյուր հայ մարդու սիրտը: Նոր տարվա սեմին Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, մեր պանծալի Հայրենիքը, հայ աշխատասեր և խաղաղասեր ժողովուրդը գտնվում են իրենց ուժերի ծաղկման, զարգացման և կատարելագործման շրջանում: Շինում և ստեղծագործում է հայ ժողովուրդը և՛ իր, և՛ ապագա սերունդների համար, անապատները վեր է ածում ծաղկաստանների և կյանքը դարձնում յուր ու օրհնություն:

Անցնող 1953 թվականին, իրապես մեծ ու անմոռանալի էին մեր Հայրենիքի և հայ ժողովրդի ձեռք բերած հաջողություններն ու նվաճումները գիտության, արվեստի, գյուղատնտեսության, արդյունաբերության և այլ

բնագավառներում: Է՛լ ավելի մեծ ու հոյակապ էն 1954 թվականին հայ ժողովրդի առաջ կանգնած հարցերը: Օրերի հետ անում ու մեծանում է հայ ժողովուրդը թվով ու որակով: Ամեն տարի ավելի գեղեցիկ է հզոր են դառնում և՛ մեր Հայրենիքը, և՛ հայ ժողովուրդը:

Հայ հավատացյալ ժողովուրդը 1954 թվականը քակոխում է ազգային-եկեղեցական կուռ միասնությամբ, սերտորեն համախմբված իր ծերունագարդ ու իմաստուն Հայրապետի շուրջը, իր Հայրենիքի շուրջը:

Ազգային-եկեղեցական տեսակետից, անցնող տարին զգալի հաջողություններ բերեց հայ ժողովրդին: Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, Հայրենասեր Հայրապետի իմաստուն առաջնորդությամբ, բոլորեց հոգևոր զարթոնքի մի խոստումնալից և բեղմնավոր տարի: Վեհափառ Հայրապետի ամենօրյա հոգատարության շնորհիվ վառ ու անմար է ավելի բան երբեք հայ երկնակամարի վրա Լուսավորչի կանթերը՝ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հավատի ջանք, նախնյաց նախանձախնդիր ոգին:

Նոր տարվա և Ս. Ծննդյան այս նվիրական օրերին, վառ ու պայծառ է հայ ժողովրդի հառազատ առնեն իր հայրենի հողերի վրա:

Գարերի մղձավանջներից հետո, հայ ժողովուրդը նորից է վառել իր գոյության օջախը իր սրբազան պապերի հողերի վրա և նորից ու նորից է կերտում աննահանջ սիրով իր անմահ արվեստն ու մշակույթը: Հայ ժողովուրդը կերտում է և ստեղծագործում, և այսօր, ավելի՛ բան մի այլ ժամանակ, մեծ հույսով ու պայծառ հավատով նա նայում է իր ապագային:

Նոր տարվա սեմին և «Խաղաղության իշխան»ի մսուրի առաջ խոնարհած, Հայաստանյայց Առաքելական եկեղեցին և հայ ժողովուրդը՝ աշխարհի ամենահին և քաղաքակիրթ ժողովուրդներից մեկը, որ իր անցյալ կյանքում հազարամյակներով զուրկ է մեացել խաղաղությունից, ուխտում է փայլել խաղաղության հանապարհով, վառ պահելով իր հոգում իր փառապանծ նախնիների կրոնական նախանձախնդրությունը, հայրենի ավանդությունների հանդեպ հավատարմությունը, հայրենասիրությունը, իր բազմախնդիր անձնագոհության, եկեղեցասիրության, խաղաղասիրության, մարդասիրության բոցավառ ավանդությունները:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ Ս. ԾՆՈՒՆԴ, ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅ ՀԱՎԱՍԱՑՑԱԼ ԵՂԱՍՅՐՆԻՐ ԵՎ ՔՐԻՅՐԵՐ:





ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԻ ՄԵՋ

(Տեսակցությունն Ամենայն Հայոց Մայրազույն Պատրիարք և Սբրազնազույն
Կաթողիկոս Նորիկ Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի հետ)

«ՀԱՅՐ, ԲԱՅԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ, ԶՈՒՆԻ ԱՅԻ ՀԱՎ-
ԲԵՆԻԹ: ՀԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԳՈՒՐՈ ԶՈՒՆԻ ԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՆ
ԿՈՎԱՆ, ԲԱՅՑ ԵԹԵ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻԹՐ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՆՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐՈՂ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, Ո. ԷՋ-
ՄԻԱՆԵՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՎԱ:

ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



մենայն Հայոց ազգընտիր Հայ-
րապետի՝ Նորին Ս. Օծություն Տ.
Տ. Գեորգ Զ. Վեհափառ Կաթողի-
կոսի այս պատգամը եղած է և
պիտի շարունակե միշտ ըլլալ ճշգրիտ ուղե-
ցույցը Սփյուռքի հայության:

Արդարև, երկրագնդի վրա հողմացրիվ
ապրող բոլոր հայերը, ինչպես անցյալին,
նույնպես և այսօր, իրենց աչքերը մշտա-
թարծ հույսով են սևեռած դեպի իրենց Սըր-
բությունն Սրբոցը հանդիսացող Մայր Հայ-
րենիքը, Հայաստանյայց Առաքելական Եկե-
ղեցին և անոր աննկուն պաշտպան Ամենայն
Հայոց Հայրապետությունն ի Ս. էջմիածին:

Այս իրողության մեջ պետք է փնտրել
պատճառն այն անսահման շահագրգռու-
թյան և հետաքրքրության, որ շեշտված կեր-
պով կարտահայտվի Սփյուռքի մեջ տակա-
վին պանդուխտ ապրող հայության կողմն,
Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի
ծոցին մեջ գոյատևող և գործող Հայ Եկեղե-
ցին և Ամենայն Հայոց էջմիածնանիստ
Հայրապետության իրական կացությունն
իմանալու կապակցությամբ:

Որպես արտասահմանն նոր հայրենա-
դարձ, ուստի և մոտեն ծանոթ Սփյուռքի հա-
յության կողմն արտահայտված այդ բուռն
շահագրգռության և հետաքրքրության, դեկ-
տեմբերի 13-ին, ժամը 2-ին ներկայացա

Ամենայն Հայոց Հովվապետ, Կրոնապետ և
Ազգապետ Գեորգ Զ. Վեհափառ Կաթողիկո-
սին և խնդրեցի, որպեսզի Նորին Վեհափա-
ռությունը բարեհաճի ունեկողություն մը
շնորհել ինձի, ինչպես նման շնորհի արժա-
նացած էի ասկե առաջ, ուրիշ առիթներով:

Պատմական Վեհարանը, այդ պահուն
ողողված լայնաբաց պատուհաններն ներս
թափանցող արևի ճառագայթներով, առավել
ևս պայծառագեղ էր դարձած Ամենայն Հա-
յոց մշտաբնակ Կրոնապետի և քաջակորով
Ազգապետի շնորհափառ դեմքն արտածո-
րող հոգևոր լույսով:

Մերունազարդ Հայրապետը, սիրալիր,
արտոնելի հետո, որ Ս. Աջը համբուրեմ և
տեղ գրավեմ բազմաթիվ գրքերով ծանրա-
բեռն իր աշխատասեղանին առջև, առանց
ակնոց գործածելու, մի քանի վայրկյանի
մեջ կարդաց իմ կողմն ներկայացված գրա-
վոր հարցադրանք և, առույգ ու ժպտուն, ին-
ձի վերադարձնելով զայն, ըսավ:

— Վերջերս արտասահմանից ևս նման
հարցումներ եղել են: Ուրեմն, պատասխա-
նելով քո հարցումներին, բավականություն
տված կլինեմ այն բոլոր մարդկանց, որոնք
հետաքրքրվում են այդ հարցերով:

Միջանկյալ, անհրաժեշտ կհամարեմ այս-
տեղ նշել այն, թե հարցումներու պատաս-
խանները բառ առ բառ թելադրած է ինքր՝
Վեհափառ Կաթողիկոսը և ես զրի եմ առած

զանոնք հավատարմաբար, որպեսզի արտասահմանի հայ ընթերցողը անոնց մեջ զգա և լսե իր ազգընտիր Հայրապետի, Կրոնապետի և Ազգապետի գերազնիվ հոգիին հարազատ թրթիռը և անոնց բովանդակած ճշմարտություններով գրահված, պաշտպանվի աջեն ու ձախեն, ներսեն ու դուրսեն զայից օտարոտի և ալյասերիչ քարոզություններու դեմ:

ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑՈՒՄ.— Արտասահմանի մեջ, մասնավորաբար Արևմտյան Եվրոպայի և ամերիկյան երկիրներու մեջ կապրին օտար դաստիարակություն ստացած բազմաթիվ հայ երիտասարդներ, որոնք հստակ գաղափար չունին Հայ Առաքելական Եկեղեցիի կառուցվածքի մասին: Ոչ միայն անոնց, այլ նաև համայն հայ ժողովուրդի համար հույժ օգտակար պիտի ըլլար լսել, թե իրենց Վեհափառ Հայրապետը ի՞նչ ձևով կրնորոշե Հայոց Եկեղեցիի կառուցվածքը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Հայոց Առաքելական Ս. Եկեղեցին քրիստոնեական հնագույն եկեղեցիներից մեկն է և հայտնի՝ իր առաքելական ծագմամբ: Հայաստանը աշխարհում առաջինը եղավ, ուր թաղավորը, նախարարները, բանակն ու ժողովուրդը ազգովին և պետականորեն քրիստոնեության հարեցան և քրիստոնեությունը երկրի պաշտոնական կրոնը հռչակվեցավ:

Տիեզերական Քրիստոնեական Եկեղեցու պատմության մեջ, այս՝ աշխի գարնող արժեքավոր երևույթ է Սակայն ավելի նշանակալից և արժեքավոր է այն երևույթը, որ Հայ Եկեղեցին միայն է, որ հավատարմությամբ և ճշտությամբ պահպանել է Տիեզերական Եկեղեցու պատկերը: Հայ Եկեղեցին նույնությամբ պահել է Տիեզերական Եկեղեցու դավանանքը, որ է Տիեզերական Եկեղեցու գոյության շրջանի առաջին երեք տիեզերական ժողովների դավանանքը: Հայոց Եկեղեցին որոշում ունի աստվածային հայտնության այս ավանդի վերա որևէ հավելում չընդունել, որպեսզի նախնական տիեզերական դավանանքը չայլայլվի: Հայոց Եկեղեցին համարում է ճշմարիտ և պարտադիր բոլոր քրիստոնեական եկեղեցիների համար միայն Տիեզերական Եկեղեցու որոշումները, որոնց մասնակցել են բոլոր քրիստոնյա եկեղեցիները և որոշումները աստվածային ներշնչման բնույթ ունեն:

Տիեզերական Եկեղեցու շրջանը վերջանում է 451 թվականով, երբ Եկեղեցիները բաժանվում են և տիեզերականությունը լուծվում է, մինչդեռ Հայոց Եկեղեցին աճել է և շարունակում է պահել նաև Տիեզերական Եկեղեցու սովորություններն ու ավանդները,

ինչպես նաև նորա դեմոկրատիկ վարչակարգը, ընտրական և ժողովական սկզբունքներն ու բոլոր տեսակի ժողովներում աշխարհիկ տարրի մասնակցությունը:

Վերոհիշյալ տեսակետներով, Հայոց Եկեղեցին հանդիսանում է Տիեզերական Եկեղեցու միակ փոքրիկ նմուշը: Նա իր այս հատկություններով յուրատեսակ մի ծաղիկ է՝ գոյություն ունեցող քրիստոնեական եկեղեցիների ծաղկեփնջի մեջ, որ հավատի և քրիստոնեական-բարոյական վսեմ գաղափարների համար իր վարած պայքարով և թափած արյամբ մարտիրոսացած ու սրբացած է և պատվով պարծի, ապրում է և իրավունք ունի ապրելու և բարոյական պահանջ հայտարարելու մյուս քրիստոնեական եկեղեցիներին, որպեսզի իրեն հովանավորեն ու անարդար և միտումնավոր ձգտումների դեմ պաշտպանեն:

Հայ Եկեղեցին, բոլոր մյուս եկեղեցիներին և կրոնների հանդեպ, ունի համբերատար ու ներողամիտ վերաբերմունք, իր ծագման օրից ինքնուրույն, անկախ և վեհերալ է, ոչ ոքիս էլ ճանաչում է մյուս եկեղեցիներին: Միանգամայն հեռի է և հակառակ եկեղեցիների միաձուլման գաղափարին, սակայն միշտ պատրաստ համագործակցության մյուս եկեղեցիների հետ՝ բարոյական դադափարների և ձեռնարկների հոգի վերա:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին մի Գլուխ ունի, որ է Հիսուս Քրիստոս, և կառավարվում է մի Պատով, որ է Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետը՝ հանուր հայությունից ընտրված Ազգային-Եկեղեցական Ժողովով: Ազգային-Եկեղեցական Ժողովը իր նախագահով, որ է Ամենայն Հայոց Հայրապետը, հանդիսանում է Հայաստանյայց Եկեղեցու միակ օրենսդիր մարմինը:

Հայոց Եկեղեցին միասնական է եղել ի սկզբանե՝ Ս. Գրիգոր Լուսավորչից սկսած ցայսօր, որ պահպանվել է Հայ Եկեղեցու Պատրիարքական շնչոված խոշոր դեմքերի և հանուր հայ ժողովրդի կամքով ու ջանքերով, և այսօր էլ պահպանվում է ու կպահպանվի Հայ Եկեղեցու եպիսկոպոսական դասի և պալարող նույն հայ ժողովրդի կամքով: Հայ Եկեղեցին միասնական է իր Պատով, իր դավանանքով, դեմոկրատիկ վարչակարգով և իր ձեռքերով ու արարողություններով:

Հայ Եկեղեցին կառավարվում է Եկեղեցական Սահմանադրությամբ, որի տարրերը դարերի ընթացքում մշակված են ազգային-եկեղեցական ժողովների որոշումներով: Նորա ամփոփումը ընդունված է 1945 թվականի Ազգային-Եկեղեցական Ժողովով, իսկ ամբողջական ամփոփումը այժմ կազմ ու

սխառարարություն է և անկեղծությամբ է կրքերից զերծ պատեճ ու խաղաղ ժամանակի, որպեսզի ենթարկվի բոլոր հայ մարմիններին, հաստատությունների և անհատ հայազնեաների վերանայման և ապա լրացվի, փոփոխություն ենթարկվի և վերջնականապես խմբագրվի ու Ազգային-Եկեղեցական Ժողովի հավանությունը ստանալուց հետո, Ամենայն Հայոց Հայրապետի կողմից հայտարարվի ու գործադրության դրվի:

Հայ Եկեղեցին, թե՛ Սփյուռքում և թե՛ քաղաքում, թե՛ քաղաքում է բաժանված, որոնք կառավարվում են առանձին-ինքնուրույն, համաձայն հայրապետահաստատ կանոնադրության, որ խմբագրված է Հայ Եկեղեցու Սահմանադրության սկզբունքների հիմամբ, նկատի առնելով նաև տեղական որոշ պայմաններ:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑՈՒՄ.—Վեհափառ Հայր, Սփյուռքի հայությունը լափազանք երախտապարտ պիտի ըլլա, եթե Ձերդ Վեհափառությունը բարեհաճի ներկայացնել այնպես, ինչպես որ է Հայ Եկեղեցին և անոր սպասավորներուն վիճակը՝ Սովետական Երկրի մեջ, Ըսել կուզեմ՝ իրավունքներու լիիրավ ազատություն գոյություն ունի, թե ոչ Եկեղեցին կոգտվի՝ արդյոք կրոնական ծիսակատարություններու կատարման լրիվ իրավունքներն ունի, Եկեղեցին իրավունք ունի՝ հողային, կալվածային և այլ սեփականություն ունենալ, թե ոչ Եկեղեցական մամուլ գոյություն ունի, կրոնի սպասավորները կոգտվի՞ն արդյոք քաղաքացիական (քնտրական և այլ) իրավունքներն:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Սովետական Միության մեջ, պետական օրենքով Եկեղեցին և Պետությունը բաժանված են և Պետությունը իրավասու չէ խառնվելու Եկեղեցու ներքին գործերին և չի խառնվում:

Հայ Եկեղեցին ո՛չ միայն ազատ և լիիրավ է ամենատեսակ կրոնական ծիսակատարություններ կատարելու, այլև ազատ է հսկողությունից՝ ազգային-կրոնական քարոզներ տալու:

Էջմիածինը, որպես Հայ Եկեղեցու գլխավորող հաստատություն, իրավասու է թերթ ունենալու և ինչպես հայտնի է, 1944 թվականից սկսած հրատարակվում է «Էջմիածին» ամսագիրը, մոտավորապես նախկին «Արարատ» ամսագրի ծրագրով:

Ամենայն Հայոց Հայրապետությունը ունի նաև բարձրագույն Հոգևոր Ճեմարան, ժամանակակից պահանջների համապատասխան կուսակրոն և աշխարհիկ հոգևորականություն, պատրաստելու նպատակով, և արտոնված է նաև ունենալու տպարան՝ կրոնական և եկե-

ղեցական գրքերի հրատարակության համար:

Պետության ընդհանուր օրենքով խորհրդային իշխանության մեջ մասնավոր սեփականություն ունենալու իրավունք չկա, կարելի է միայն տուն և տնամեք հողաբաժին ունենալ, Այս սկզբունքի համաձայն, հայ կառավարությունը տվել է նաև Գեղարդի վանքին բավականաչափ հող՝ Ս. Էջմիածինի և Հոգևոր Ճեմարանի տնտեսական կարիքները հոգալու համար:

Կրոնի սպասավորները, սկզբում, կարճ ժամանակ ձայնազուրկ էին, սակայն այժմ նորա ճանաչվում են հավասարազոր մյուս քաղաքացիներին և հավասարապես վայելում են քաղաքացիական բոլոր իրավունքները:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑՈՒՄ.—Արտասահմանի մեք մեծ հետաքրքրություն կա իմանալու, թե Սովետական Երկրի մեջ Հայ Եկեղեցին ի՞նչ ձևով կպատրաստե իր եկեղեցական սպասավորները և ի՞նչ է Հոգևոր Ճեմարանի գործի դրվածքը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Հատուկ գրությամբ, Ամենայն Հայոց Հայրապետության, ի շարս այլ իրավունքների, տրված է նաև իրավունք բարձրագույն հոգևոր դպրոց ունենալու, որ 1945 թվականից բացվել է և ցարդ գործում է: Նա ունի երեք սեմինարական կուրս և լսարան, հատկապես քահանաներ և կուսակրոն հոգևորականներ պատրաստելու համար: Այսօր ունենք Հոգևոր Ճեմարանն ավարտած 11 կուսակրոն սարկավազ և հինգ քահանայացու, որոնք այժմ վանքում են և, մի տարի անհրաժեշտ լրացուցիչ պատրաստություն ստանալուց հետո, կձեռնադրվեն և կուղարկվեն կարևոր վայրեր՝ քահանայադրածելու համար:

ՉՈՐՈՐԴ ՀԱՐՑՈՒՄ.—Սփյուռքահայ հավատացյալ ժողովուրդը անսահմանորեն պիտի ուրախանար Ձերդ Վեհափառության օրհնածիր բերանեն իմանալով, թե ի՞նչ վիճակի մեջ է Հայ Եկեղեցին և եկեղեցական սպասավորներու նյութական ապահովվածությունը, ինչպես նաև այն, թե Էջմիածինը ունի՞ իրավունքներ և արտոնություններ ֆինանսական գործարքներ կատարելու, ինչպես Սովետական Միության ներսը, նույնպես և արտասահմանի հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Եկեղեցական սպասավորներից քահանայությունը ապրում է Հայոց Եկեղեցում ընդունված հին ձևով, այն է՝ օրինակատարություններից և այլ աղբյուրներից ստացած ժողովրդի կամավոր տուրքերով և նվերներով, և ապրում է նյութականապես



ապահով վիճակի մեջ: Կուսակրոնությունը ապրում է Ս. Էջմիածնում և վարում է թեմերում՝ վարչական, իսկ վանքում՝ ինչպես վարչական, նույնպես նաև տնտեսական պաշտոններ: Նորիս պահպանության աղբյուրներն են՝ թեմական եկամուտները, մոմավաճառությունն ու կամավոր նվերները և Գեղարդի վանքից ստացված տնտեսական եկամուտը:

1945 թվականից Էջմիածինը բացարձակ իրավունք ունի ֆինանսական գործարքներ կատարելու ինչպես միութենական երկրներին, նույնպես նաև արտասահմանի հետ: Նրան տրված է հատուկ իրավունք օտարերկրյա վալյուտա ստանալու և արտահանելու՝ վանքի և Հոգևոր Ծննդարանի կարիքների համար ապրանքներ ստանալու նպատակով, և հատուկ հաշիվ ունենալ Պետական բանկում:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶԱՐԶՈՒՄ.— Ներկայիս ի՞նչ է Հայաստանի եկեղեցիներու և վանքերու վերանորոգման և պահպանման գործի վիճակը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Թե՛ եկեղեցիների և թե՛ վանքերի շինքերը, մանավանդ պատմական և ճարտարապետական արժեք ունեցողները, որպես հուշարձաններ, վերանորոգվում և պահպանվում են ամենայն խնամքով:

Եկեղեցիների վերանորոգման դեպքերում, Կառավարությունը ընդառաջում է և օժանդակում, ինչպես մասնագետներ, նույնպես և շինանյութեր տրամադրելով եկեղեցական հոգաբարձությանց: Ինչ վերաբերում է պատմական հուշարձաններին՝ հոքա գտնվում են Կառավարության կից ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի վերահսկողության ներքո և խնամքով պահվում ու վերանորոգվում են Կառավարության հաշվով:




Հարցումներու թիվը սպառած և անոնյ պատասխանները լիովին ստացած ըլլալով, երախտագիտությանը կրկին անդամ հոսիքների ամենօրհնյալ Հայրապետի Ս. Աջր և հրաժեշտ առի:

Մայր Տաճարի ընդարձակ բակին մեջ, ինչպես ամեն կիրակի, այսօր ալ, ուխտավորներու հոծ թաղմանը մը ուրախ-զվարթ պար էր բռնած, մինչ շնորհալի սարկավազ մը, հանդիպակաց վանքապատկան շինքի յաց պատուհանին առջև կանգնած, քաղցրաձայն կերգեր:

«Թագաւո՛ր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա՛, և զերկրպագոս աճաւանդ քով պահեա՛ ի խալաղութեան»:

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ





Ք Ա Ր Ո Ջ

ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱԹՅԱՆ

ՀԻՄՈՒՄԻ ԾՆՆԴՅԱՆ ԽՈՐՀԱՅԻՐԻԷ

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յեկեղիս խաղաղութիւն, ի մարդիկ ճանօթիւն»:

ՂՈՒՆԱՍ, Թ 14:



ուրբ ծննդան լուսարուցին խաղաղութիւն էր լսվում, խաղաղութիւն էր աղարարվում մարդկության համար:

Ու խաղաղության այդ իշխանը աշխարհ եկավ, ծնվեց ո՛չ թե պալատների շքեղ սենյակներից մեկում, ո՛չ թե իշխանի, մեծատան հարկի տակ, այլ մսուրի մէջ: Ա՛յդ էր Աստուծո կամքը: Եվ ո՞վքեր էին մանուկին ոռչի տեսնողները, ո՞վքեր էին երկնքից խաղաղության ավետման քաղցրահնչյուն երգի լսողները:— Հովիվները, բնության դրկւմ ապրող ու աշխատող, բարոյապես բարձր ու վեհ, արդար աշխատանքի մշակ հովիվները, հարուստ՝ հավատով ու ազնվութեամբ, միշտ աղքատ, միշտ աշխատող ու քրով դոհացող այդ մարդիկը, որոնք Ս. Մենդան առաջին վկաները եղան:

Իմ հավատացյալ եղբայրներ՝ և քույրեր՝.

Մանկացյալ Աստվածորդու հրաշափառ Ս. Մենդան տոնը այս տարի էլ իր մեծ ու «բանշելի խորհրդով ողջ քրիստոնյա աշ-

խարհն ու նաև խաղաղասեր մարդկութիւնն իր մսուրի շուրջն է հավաքում:

Քսան ձիգ դարեր մարդկութիւնը հավատով, մեծ սիրով և անհուն երախտագիտութեամբ սրտադինս ծնրադրել է խաղաղության իշխանի նվիրական մսուրի առաջ ու Ս. Մենդան խորհրդավոր ու պատմական սուրբ դիշերվա մեջ ունկնդրել հրեշտակների անսուտ բերնից խաղաղության, համերաշխության սրբազան պատգամը՝ «Սեւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն...»:

Քրիստոսի Ս. Մնունդը խաղաղության, համերաշխության իր վեհ դադափարներով, այսօր էլ շի կորցրել երբե՛ք իր նշանակութիւնն ու պատմական արժեքը աշխարհի համար, մարդկության համար:

Ինչքա՞ն քաղցր ու հուսադրիչ էին հնչում ժամանակին տառապանքի, դրկանքի, կեղեքման անմխիթար վիճակում ապրող մարդկության համար Քրիստոսի Ս. Մենդան պատգամները, մարդկության եղբայրության մեծ քարոզը:

«Մնաւ մեզ Փրկիչ, որ է Օծեալ Տէր»:

Նրկներ պատգամը հրեշտակների բերանով ավետում է խաղաղություն երկրի վրա և մարդկանց մեջ հասնություն: Աստվածորդին աշխարհ էր դալիս մարդկության փրկության համար, վերացնելու բռնությունը, շարիքը, մեղքը: Նա խաղաղությունը պիտի թագավորեցներ աշխարհում, կյանք և ճանապարհ, լույս և փրկություն էր բերում աշխարհին և քրիստոնեական լուսով լուսավորում ամբողջ աշխարհն ու մարդկությունը:

Բեթղեհեմի ալրում ծնված մանուկ Հիսուսը մի հզոր ուժ էր, որ աշխարհը պիտի կերպարանափոխեր, նոր կյանք, նոր արդարություն, սեր, ճշմարտություն և խաղաղություն էր բերում կյանքի մեջ, մարդկանց համար՝ իրագործելու Աստծու կամքը, որպեսզի նրանք դառնան տաճար Աստծու, լինեն կատարյալ, որպես երկնավոր Հայրն է կատարյալ և ապրեն երջանիկ այդ նոր կյանքով, նոր ճշմարտությամբ:

Քրիստոսի ծնունդը մի նոր ու փառավոր էջ էր բաց անում մարդկության կյանքում և պատմության մեջ: Քրիստոսի մսուրի առաջ եղբայրացան բոլոր ազգերն ու ժողովուրդները, Արեւելի իմաստուն մոգերն ու Պաղեստինի պարզամիտ հովիվները: Քրիստոսի Ս. Մենդյան գիշերը փշովեցին ազգերն իրարից բաժանող կեղծ պատնշները, փշովեցին ստրկության բոլոր շղթաները, փարատվեց խավարի, տգիտության, մեղքի թանձր մշուշը և մարդկության համար ծագեց մի նոր ու խոստումնալից առավոտ:

Բեթղեհեմի Ս. Մենդյան ալրից մարդկության համար սկիզբ է առնում մի մեծ կյանք, որը Ավետարանը կոչում է Աստծու թագավորություն, և սորը ո՛չ այլ ինչ է, եթե ոչ մարդկանց նոր միություն, որ նպատակ է դրել Աստծու կամքը կատարել երկրի վրա:

Ուրեմն ի՞նչ էր բերում աշխարհին՝ Արեւելի մի հեռավոր ու մոռացված անկյունում ծնվող Փրկիչը— Ամենաթանկագին բանը՝ խաղաղությունը, որի համար մարդկությունը պայքարել է ու պայքարում է մինչև այսօր էլ: Պատերազմների, աղյան նախճիրների մղձավանջը միշտ էլ դամոկլյան սրի նման կախված է նշել մարդկության գլխին: Եվ ահա Ս. Մենդյան գիշերը հրեշտակները Բեթղեհեմի հովիվների միջոցով աշխարհին ավե-

տեցին աստվածային խաղաղության պատգամները:

Ժամանակի իշխողները, դպիրներն ու փարիսեցիները, իրենց գործի և կյանքի վախճանն էին տեսնում Հիսուսի ծննդյամբ: Նրանք սարսափում էին մանուկ խաղաղությունից և սրեցին իրենց զենքերը, պատերազմ հայտարարեցին խաղաղության դեմ: Սակայն Բեթղեհեմի անմեղ մանուկների խուժողուժ կոտորածն էլ չփրկեց նրանց: Աստծու շնորհիվ և իմաստությամբ Բեթղեհեմի մանուկը մեծացավ ու դարձավ մի հզոր ու աստվածային անհաղթելի ուժ, պայքարի ելավ հին աշխարհի դեմ, խարազանով Տաճարից դուրս քշեց կեղծ բարեպաշտներին իրեն ավազակների, որոնք մարդկության կյանքը դժոխքի էին վերածել և Աստծու Տաճարը՝ ավազակների որչի:

«Տուն իմ, տուն աղօթից կոչեսցի...»:

Սիրելի եղբայրներ՝ և քույրեր՝:

Այսօր էլ աշխարհում կան կեղծ քրիստոնյաներ և «բանի վաճառականներ», որոնք մարդկային խիղճը քարացրած, Բեթղեհեմի մանկանց նոր կոտորածներ են պատրաստում, մարդկությունը բնաջինջ անելու նոր զենքեր են հնարում, և փարիսեցիների նման, եկեղեցիներում կանգնած մի ձեռքով խաչ են հանում Քրիստոսի մսուրի առաջ և մանկացյալ Հիսուսի Մենդյան ավետիքն են երգում՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», մյուս ձեռքով զենք են բարձրացնում անմեղ մանուկների, կանանց, մայրերի վրա և աշխարհի խաղաղության վրա:

Իմ հավատացյալ եղբայրներ՝ և քույրեր՝:

Քրիստոսի Ս. Մենդյան այս ուրախ տոնի առթիվ, եկե՛ք մեր հավատի ու մոգի թեկնով զնանք մինչև Ս. Բեթղեհեմ, մենք էլ հոգով հրկրապահենք պարզամիտ հովիվների և երկյուղած մոգերի նման Նրա մսուրի առաջ և մեր հոգու բոլոր հույզերը, մեր սրտի սերը մատուցենք մանկացյալ Աստծուն և ծնրադրենք մանուկ խաղաղության օրորոցի առաջ և մի անգամ ևս հնչեցնենք Ս. Մենդյան ավանդական երգը՝ «Յորհուրդ մեծ և սրանչեւի, որ յայսմ սուրբ յայանեցաւ»:

Ս. Մենդյան այս սրբազան օրերին շո-
ռանանք, որ դեռես աշխարհում կան մար-

դիկ, որոնք ձգտում են մի անգամ ևս իաշ հանել խաղաղությունը, նշմարտությունը, շնայեցե՛ք մարտնչող քրիստոնյա ազգերին, որոնք անխնա հռչակում են միմյանց, հայեցե՛ք մարդկային հասարակության, ուր իրր թշնամի բանական կանգնած են դեմ առ դեմ հարուստ ու աղքատը, գիտուն ու ուսմիկը, տերն ու ստրուկը: Մինչ մենք հնչեցնում ենք Ս. Մենդյան ուրուխ ալելուիաները, մարդկանց հղբայրության սրբազան բարոյը, «Հազարավոր մարդիկ իրենց վերջին շունչն են փչում աղքատության մեջ, հազարավոր երեխաներ մերկ, բոկոտն ու քաղցած իրենց վշտոտ ու մարած հայացքն աշխարհի բախտավորներին են ուղղել...» (Գեորգ Զ. Կաթողիկոսի քարոզարարքից):

Տեսնում և լսում է քրիստոնյա աշխարհի մեծ մասը մարդկային այս ամենօրյա տխուր տեսարանը և, Ավետարանի ղետացու նման, անցնում անտարբեր մարդկային ծով վշտերի կողքով:

Այսօր ալելիի քան մի այլ ժամանակ քրիստոնյա աշխարհը սպասում է Քրիստոսի Ս. Մենդյան պատմական ու զարավոր պատգամների կենսագործմանը:

Քսան ձիգ դարեր հայ հավատացյալ մու-

ղովորդը ժերադրել է իր Փռկչի Ս. Մսուրի առաջ մեծ հավատով և երկյուղածությամբ ու լսողթեւ սրտագինս Ռվասն խաղաղութեան ամենայն աշխարհի: Այսօր էլ աղոթենք, որ մանկացյալ Աստվածորդին, իր սուրբ ու հրաշափառ Մենդյան տոնի առթիւ, մարդկանց սիրտն ու հոգին լուսավորի խաղաղության սրբազան լույսով, որպեսզի ընդմիջտ հեռանան աշխարհից թշնամությունն ու ատելությունը և թաղավորեն ամենուրեք սերն ու արդարությունը:

Ս. Մենդյան այս սրբազան օրերին, թո՛ղ խաղաղության հողին իբր մանանա իջնի մարդկանց սրտերի վրա և թո՛ղ միշտ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կամարների տակ հնչի խնկելի երգերնացու Ս. Մենդյան զողորմիկ երգը՝ «Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աուր յայտնեցաւ»:

Իմ հավատացյալ հայ եղբայրենք և քույրենք:

Մեր աչքի լույսի պես պահենք Ս. Մենդյուն մեծ պատգամները, որոնց հավատացել ու ապրել է մինչև այսօր մեր ժողովուրդը:

«Փա՛ռք նրաշուփսս ձնեղևակ Դո, Տէ՛ր», ամէն:





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԺԱԿԱՏՈՒՄ

«ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Դեկտեմբերի 9-ին և 12-ին Մոսկվայում ակադեմիկոս Դ. Վ. Սկորելցիևի նախագահությամբ տեղի ունեցան «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակների կոմիտեի նիստերը:

Կոմիտեն քննության առավ ընթացիկ տարվա համար Միջազգային Ստալինյան

մրցանակներ շնորհելու վերաբերյալ սաայվա՝ առաջարկները և որոշում ընդունեց այդ հարցի առթիվ:

Սաորև հրապարակվում է «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու վերաբերյալ կոմիտեի որոշումը:

«ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» 1953 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 1953 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՈՐՈՇՈՒՄԸ

Խաղաղության պահպանման և ամրապնդման համար մղվող պայքարի զործում մատուցած աչքի ընկնող ծառայությունների համար «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհել հետևյալ անձանց:

ՊՅՅԵՐ ԿՈՏԻՆ — Ազգային ժողովի դեպուտատ (ՖԲԱՆՍԻԱ).

ՍԱՀԻՐ ՍԻՆԳ ՍՈԿԷՅՈՒՆ — պրոֆեսոր, դեներալ-մայոր, Հնդկաստանի պառլամենտի նահանգների խորհրդի անդամ:

ԱՆԴՐԵԱ ԳԱԶԵՐՈՅԻՆ — քահանա (Իտալիա).

ԻՋԱԲԵԼԼԱ ՔՆՅՈՒՄԻՆ — պառլամենտի դեպուտատ (Բելգիա).

ՀՈՎԱՐԳ ՖԱՍՏԻՆ — գրող (ԱՄՆ).

ՋՈՆ ԲԵՌՆԱԼԻՆ — Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր (Անգլիա).

ԼԵՈՆ ԿՐՈՒԶԿՈՎՍԿԻՆ — գրող (Լեհաստան).

ՊԱՐԼՈՆԵՐՈՒՏԱՅԻՆ— զբոլ (Զիլի)։

ԱՆԴՐԵԱ ԱՆԴՐԵՆԻՆ— բժշկականության դոկտոր, Ստոկհոլմ քաղաքի
կլինիկական լաբորատորիայի ղեկավար թիշկ
(Շվեդիա)։

ՆՈՒԱՎԱՍՏԻՆԱՎԱՆ ՊՈՊՈՎԱՅԻՆ— Պրոֆեսոր Մանսթրի Համալսարանի
կան կենտրոնական խորհրդի քարտու-
ղար (ՍՍՏՄ)։

Կոմիտեի ճախագահ՝ Դ. Վ. ՍԻՈՐԻՆՅՈՒՆ

Կոմիտեի ճախագահի տեղակալներ՝ ԴՈՒՄԻՆ (Զինատյան),
ԼՈՒԻ ԱՐԱԳՈՆ (Ֆրանսիա)։

Կոմիտեի անդամներ՝

Մ. ԱՆԴԵՐՍՆԵՆ-ՆԵՔՍԵ (Դանիա),
ՅԱՆ ԴԵՄԵՐՈՎՍԿԻ (Լեհաստան),
ՄԻՆԱՅԻՎ ՍԱԴՈՎԱՆՈՒ (Ռումինիա),
Ա. Ա. ՖԱԳԵՆԵՎ (ՍՍՏՄ),
Ի. Գ. ԷՐԵՆԲՈՒՐԳ (ՍՍՏՄ)։

12 ղեկառնորդներ 1953 թվականի,
քաղաք Մոսկվա։

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 22 ղեկառն-
որդներ 1953 թ.)





ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՀԻՇԱՏԱԿՆԵՐ

Սեպտեմբերի 27, կիրակի, Ս. Էջմիածին կոտնվիմ Տաճարին խորհրդասքող կամարներուն ներքև աստվածային պաշտամունք կկատարվի: Հավատացյալներու հոծ բազմութիւն մը լեցուցած է հինավուրց Կթողիկէն: Իսկ դուրսը՝ ընդարձակ բակը և պարտեզները նույնպէս կհորդին ժողովուրդով: Բարձր ծառերուն շուքին ներքև, բակի սալահատակին վրա և կաթողիկոսներու դամբարանին մոտ ուխտավորներ զվարթորեն շուրջպար կդառնան: Տեղ-տեղ երիտասարդներ խմբված եռանդազին ծափ կզարնեն գինիին արքշիռ կախողներուն: Մամիկներ մատաղ կպատրաստեն, ու շարաճճի փոքրիկներ դու չեփած զայն կճաշակեն: Երբ ու պարերգ, ծափ ու ծափողջույն, սրինգ, թառ ու թմբուկ կթնդացնեն մթնոլորտը:

Հայ ժողովուրդը իր ցնծատունը կապրի: Ամենայն Հայոց Հայրապետի անվանակոչութեան տոնախմբությունն է:

Բայց ես ինձի հարց կուտամ. սկստեալան ցնծեցին հետ, ինչու՞ աշխարհիկ խրախճանքը ժողովուրդին: Ու ատոր պատասխանը. սկստեալան մկրտում են, վանքումը պսակում են, վանքումը թաղում են, վանքումը քնք են անում, վանքումը լաց են լինում. վանքն է նրանց ամբողջական կյանքի արտահայտիլը:

Կհնչեն Տաճարին զանգակները քաղցր ներդաշնակությամբ: Պարերը կդադրին ու աշխարհախումբ բազմությունը կհորդի դեպի Վեհարանի դուռը: Ժողովուրդի ալիքը հետըզհետ կաճի, կուտի...

Սկստեալան Հայրապետը եկեղեցի է իջնում:

Վեհարանի գոնեն մինչև իր Աթոռը՝ քարենկեց մը միայն. երկու բոպէ կապի կտրելու այդ միջոցը. բայց... չիք անցը: Խոնաված են հավատացյալները. ոմանք, ծառերուն

վրա բարձրացած, ոմանք պատշգամներու և աստիճաններու, իսկ ոմանք ալ ծունկի եկած են, ու ինչպիսի՞ հոգեկան երանութեան մեջ պիտի ըլլան, եթե իրենց շրթունքները կըրնան հպեցնել Սրբազան Հայրապետի փեշերուն: Ենթահագարդ Վեհը նոր վերադարձած է օդափոխութենէն. Հայոց աշխարհի հավատացյալները երկու ամիսն ի վեր կարոտով կսպասեն իր օրհնենքին: Ու հիմա հոս է ան. եկեղեցի կիջնէ. պետք է մոտենալ անոր, համարուել իր Ս. Աջը, փեշերը: Հավատացյալներ ալեւի կխոնվին, ալեւի կկուտակվին, իզուր եկեղեցականներ և շաթիրներ կջանան ճանապարհ բանալ: Ո՞վ կարող է արգիլել ժողովուրդի զեղուն հավատքին հորդումը: Ու ձայներ շրթներէն օդին մեջ.

— Երկա՛ր կյանք մեր աւելիառ Հայրապետին:

— Հողո՞ւք մեռնեմ, Վեհափա՛ռ:

— Թողե՛ք ինձ, նրա օրհնությունը ստույնամ:

— Բաքվից եմ եկել, ուղում եմ նրա Աջը համարուել:

Ու ամբողջ ժով է կոհակաման:

Բոպենները կսահին... վերջապէս կհասնինք Տաճար: Վեհը կբազմի իր Աթոռին վրա:

Կշարունակվի հայոց սուրբ պատարագը: Հազիվ մատուցող և դպիրք կարող են գիրար լսել: Հսկա Տաճարը խոնված է ամեն հասակի հավատացյալներով. շարժելիք տեղ չկա: Ոմանց շրթներէն մաղթանք ու աղոթք կբարձրանան առ Աստված, ոմանց՝ երգ: Ոմանք կաշխատին ճամբա բանալ, որպէսզի մոտենան Հայրապետական Աթոռին՝ նորին Ս. Ոծութեան օրհնությունը ընդունելու: Իսկ երեխաներու կանչը, դպրաց օրհներգութեան հետ, խորհրդավոր Վեհավարին մեջ կստեղծեն աններդաշնակություն մը, որ ինձ համար այդ պահուն կհանդիսանա գերագույն ներ-

դաշնակցությունը, որովհետև երեխային մինչև ծերունին, իր ապրումին համաձայն, իր Հայրապետին առաջ և իր հայրապետներու ոգեղեն ներկայության մեջ, կաղոթե Ամենակալ Հոր:

պատվանդանին երկարած, որպեսզի ուխտավորները համրուրեն: Բայց անոնք կխուժեն ուժգնորեն... Այդ պահուն ահա հանկարծ քանի ժը երիտասարդներ, եկեղեցականներու և շաթիրներու օգնությամբ, կճեղքեն հավա-



Գերաշնորհ Տ. ԳԵՐԵՆԻԿ ԼԱՎԻՍԿԱՅԱՍ ՓՈՒԱՏԱՆԵՐ
ՆՐԷԱՆԻ ԿՈՆԳԻ Ս. ՀՈՒՐԱՆՆԵՆՍ ԵԿԷԼԵԳՈՒՄ, պատարագից ճևուռ:

Աստվածային պաշտամունքը կավարտի Վեհը հագիվ իր օրհնությունը տված հավատացյալներուն, ահա հորդազեղ խուժում մը իր անձին վրա: Եկեղեցականներու օգնությամբ Վեհը կբաղմի Հայրապետական դահին վրա, ձեռքերը անոր ամպհովանիին

սացյալներու կուտակվող բաղմունն ու Տաճարի հյուսիսային դռնեն Վեհարան կառաջնորդեն Հայրապետը:

Հավատքի նման պոռթկման ժողովուրդի կողմն քիչ անդամ ահանառես եղած եմ: Դուրս կելլեմ Վեհարանեն, որուն արտաքին

դռան մուտքին առջև հավատացյալներու հոծ բազմություն մը, ամեն սեռեւ և տարիքեւ, անասելի շերմեռանդ զգացումով մը, կսպասեւ, որ ներս մտնեւ Վեհին օրհնությունը ստանալու: Մինչ կուղղվիմ դեպի Տաճար, բազմության մեջն մեկը, կարծելով, որ էջմիածնի միաբաններն եմ, թախանձազին կխընդրե ինձմե, որ Վեհարան առաջնորդեմ զինք, որպեսզի Սրբազնագույն Հայրապետին Աջը համընթեւ:

— Նոր-Նախիջևանից եմ եկել, խնդրում եմ:

— Ի՛նչ անեմ, ես էլ Կիլիկիայից եմ եկել, — կըսեմ ու կմտնեմ Կաթողիկէն ներս:



Մկրտության խորհուրդը կկատարվի Քահանա մը հազիվ ատեն կունենա երեխաները շուրին մեջ ընկղմելու, ուրիշ մը՝ զանոնք մյուտնելու, իսկ երրորդ մը՝ Ս. Հաղորդություն տալու:

Ու Վեհավայրեն ներս ամեն կողմ ձայներ...

— Տեր հա՛յր, հեռու տեղից եմ եկել, նախ ի՛մ երեխայիս մկրտի:

— Ավտոն սպասում է, տեր հա՛յր, պետք է գնամ, մյուտն քսիր երեխայիս:

— Մի՛ լա, բալա ջա՛ն, սպասի՛ր:

Քահանաներ հոգնած են. քրտինքը կհոսի իրենց ճակատներեն շուրջառներուն վրա: Ու երկարորեն կշարունակվի այդ սրբազան գործողությունը:

Այդ օր Ս. էջմիածնի Տաճարին մեջ 230 մկրտություն տեղի ունեցավ:



Ավագ սեղանի բեմին վրա երկու եկեղեցական ծնրադրած են. երկուքն ալ պար-

տասած երևույթ մը ունին: Փրկչին Ս. Մարմինն ու Արյունն կհաղորդեն ժողովուրդը: Սրբության ճաշակումը պատարագի վերջավորության սկսած է. մոտ երկու ժամ անցեր է, ու դեռ սրբագործված հացն ու գինին կմատակարարվին հայ հավատացյալներուն: Կհատնի սրբությունը, բայց ո՛չ՝ զայն ճաշակողները: Հայ հոգիներ հավերժական Կաթողիկէին մեջ Հավերժը կընդունին, Հավերժին հետ ապրելու:

Տաճարին կեդրոնը Իշման սեղանն է, Աստվածորդույն իշած տեղը. խաչ ու Ավետարան զրված են հոն. ուխտավորներ ծրարադիր կհամբուրեն զանոնք: Մեկուսի, կգիտեմ հավատացյալներու շարանը. ոմանք ծնրազնաց կմոտենան, ոմանք ձեռքերին բազկատարած և աչքերին գմբթին հառած, իշնող յուսին բացած են իրենք հոգին: Ոմանք կարտասվեն, իսկ ոմանց դեմքին վրա ալ ժպիտը անպակաս է: Տարեցներ երեխաներու ձեռքն բռնած են: Ու այդ երեխաները, կզարմանամ, ի՛նչ աշխուժով կհամբուրեն խաչն ու Ավետարանը: Բազմությունը կհորդի. ոմանք կարգի սպասելու ժամանակ շունին, կհրմշտկեն, բայց իզուր. ու ճարահատ, սեղանին սյունները համբուրելով կմեկնին: Ոմանք ոտաբորիկ կմոտենան Սրբություն Սրբոցին:

Սքանչացած, կգիտեմ հայ ժողովուրդը, որ Ս. էջմիածնի Տաճարին մեջ կաղոթեւ, Սրբազան Խորհուրդով կհաղորդվի, իր հայրերուն հոգիովը կվերապրի:

Տե՛ր, Դուն անսասան պահե այդ հոգին, այդ ժողովուրդը, այդ Կաթողիկէն իր այեզուրդ Գահակալով:





Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՐՈՖ. Լ. ՍԵՄՅՈՆՈՎ

ՎԵՐԱԴՐԱՑ ՇՐՋԱՆ



նդրկողականի մի քանի գրություններում գյուղացիք շատ արագ կներպով հաշվում են թե՛ լուսնի օրը և թե՛ լուսնի ծագման ու մայրամուտի ժամկետները: Քաղաքացիների համար այս անհասկանալի է, որովհետև նրանցից շատերը գաղափար չունեն այսպես կոչված վերադարձի մասին, մինչդեռ այդ լավ ծանոթ է գյուղացիներին դեռ հին դարերից: Մեր նպատակն է այս հոգվածում բացատրել վերադարձի գաղափարը, տվյալ տարվա վերադարձը հաշվելու (գտնելու) և նրանից օգտվելու եղանակը:

Գիտության պատմությունից հայտնի է, որ 433 թվականին մի քանի օրվա ընթացքում, որ 19 արեգակնային տարիների տևողությունը համարյա թե ճշտորեն հավասար է 235 լուսնի սինոդիկական՝ ամիսների տևողությանը, և որ 19 տարուց հետո լուսնի փուլերը կրկնվում են նախկին հաջորդականությամբ: Օրինակ, եթե 1952 թվականի նոյեմբերի 10-ին լուսինը 23 օրվա փուլում է գտնվելիս եղել, ապա 1971 թվականի նոյեմբերի 10-ին լուսինը նորից կլինի 23-րդ օրվա փուլում:

Իրապես, 19 արեգակնային տարիները պարփակում են 228 ամիս կամ 6939,602 միջ. օր, եթե ընդունենք, որ տրոպի-

կական տարվա տևողությունը հավասար է 365,2422 միջ. օրվա (կամ 365 օր, 5 ժամ, 48 րոպե և 46 վայրկյան): Իսկ 235 լուսնի սինոդիկական ամիսների տևողությունը կազմում է 6939,691 միջ. օր, եթե ընդունենք լուսինն այդ ամսվա տևողությունը հավասար 29,5306... միջ. օրվա: Այսպիսով 19 տարվա ընթացքում տարրերությունը կազմում է 0,089 միջ. օր կամ 2 ժամ, 8 րոպե և 9,6 վայրկյան:

Հին հայկական էֆիմերտներում ընդունում էին, որ 19 արեգակնային տարիների տևողությունը հավասար է 6939 միջ. օրվա և 18 ժամի, 235 լուսնի սինոդիկական ամիսների տևողությունը հավասար է 6939 միջ. օրվա, 16 ժամի և 31,5 րոպեի. այնպիսի որ, ըստ նրանց տվյալների՝ 19 տարում տարբերությունը կազմում է ընդամենը 1 ժամ, 28,5 րոպե, փոխարեն վերև բերված թվական արժեքի:

Այդպիսով, ըստ նրանց տվյալների, եթե տվյալ տարում նորալուսինը տեղի է ունեցել հունվարի 1-ին, ապա 19 տարուց հետո նորալուսինը նորից տեղի կունենա հունվարի 1-ին, միմիայն մոտավորապես 1,5 ժամ առաջ:

Եթե մենք 19-ամյա ժամանակաշրջանի կիրառության ժամանակ սխալը դեռ աչքի չի ընկնում, ապա 312,5 տարուց հետո այդ տարբերությունը կուտակվելով կազմում է արդեն մի քիչ օր: Սխալն արդեն դառնում է նկատելի և միջոցներ պիտի ձեռք առնվեն այն լուսնի վերադարձի: Այդպիսի փորձը պատկանում է Կալիպսին (330 թ. մ. թ. ա.), որը և որոշ չափով կարգավորեց 19-ամյա ժամանակաշրջանի հարցը:

1. Լուսնի սինոդիկական ամիս կոչվում է այն ժամանակամիջոցը, որը տևում է նորալուսնից մինչև հաջորդ նորալուսինը, կամ լուսնի մինչև հաջորդ լուսնալիսին: Այդ ժամանակամիջոցը հավասար է 29 օրվա, 12 ժամի, 44 րոպեի և 2,9 վայրկյանի, կամ կրճի թվով ընդունվում է 29,5306... օր:

Ամենա հավանականն այն է, որ Մեթոնը իր տվյալները վերցրել է Բաբելացիներից, որոնց մոտ կիրառության մեջ էր դեռ շատ վաղուց կիրգենիի 19-ամյա ժամանակաշրջանը: Բաբելացիներից այդ 19-ամյա ժամանակաշրջանի դադափարը փոխ էին առել երրայնցիք երր գերված էին Բաբելացիների կողմից և գտնվում էին Բաբելոնում, իսկ մնացած ժողովուրդներն այդ 19-ամյա ժամանակաշրջանի գաղափարը փոխ են առել կամ անմիջապես Բաբելացիներից, կամ էլ երրայնցիներից:

325 թվականին Նիկիայի առաջին տիեզերական ժողովում որոշված է եղել այդ ժամանակաշրջանի առաջին օրը համարել մարտի 23-ից, այդ տարում հենց այդ օրը տեղի է ունեցել զատկական լուսնի նորալուսնի փուլը, թեպետև ըստ տրագիցիայի և ըստ սովորության բոլոր ժողովուրդների մոտ պահպանվել է հին սովորությունը՝ այն է հաշվել ժամանակաշրջանի սկիզբը հունվարի 1-ից:

Քանի որ 19-ամյա ժամանակաշրջանի տարվա համարը որոշելն ռեյի մեծ նշանակություն տարվա վերագրելը գտնելու համար, ուստի և մշակված են եղել համապատասխան կանոններ՝ դրանք հաշվելու նպատակով: Այն թվանշանները, որոնք ցույց են տալիս 19-ամյա ժամանակաշրջանի տվյալ տարվա հերթական համարը, հաշվերի մաս առնվազն են ոսկեգիր, այնպես որ եթե տարվա ոսկեգիրը հավասար է 12-ի, դա նշանակում է, որ տվյալ տարին 19-ամյա ժամանակաշրջանի 12-րդ տարին է:

Այդ հանգամանքի վրա մենք հրաշիրում ենք ընթերցողի ուշադրությունը, քանի որ ուրիշ ժողովուրդների (արևմտյան) մոտ ոսկեգիրը ասելով հասկացվում են Մեթոնի տված թվերը:

Ոսկեգիր	Ա	Բ	Գ	Դ	Ե	Ձ	Է	Ը	Թ	Ժ	ՃԱ	ՃԲ	ՃԳ	ՃԴ	ՃԵ	ՃԶ	ՃԷ	ՃԸ	
Վերագիր	2	13	24	5	16	27	8	19	0	11	22	3	14	25	6	17	28	9	21

13 ոսկեգիր ունեցող տարվա համար վերագրելը պիտի լինի 14 (Հուլյան տոմարով), իսկ Նեբկայումս դա կլինի սխալ, որովհետև ա) նոր տոմարին անցնելիս ավելացվել է 13 լրացուցիչ օր և բ) Նիկիայի ժողովից մինչև այսօր այն տարբերությունների պատճառով (որի մասին խոսեցինք վերելում) կուտակվելով արդեն տվել է 5 օրվա տարբերություն: Հետևաբար նոր վերագրելը պիտի լինի $14 + 13 + 5 = 32$, կամ հանելով "ի լրիվ լուսնի ամիս" $32 - 30 = 2$: Այսպիսով 1952 թվականի վերագրելը պիտի լինի հավասար 2-ի:

Բերենք տարվա ոսկեգիրն որոշելու կանոններից մեկ-երկուսը: Այդ կանոնները վերցրել ենք հայկական հին ձեռագրերից, և հետևաբար, հաշվել տարվել է Վին (Հուլյան) տոմարով: Այդ կանոնները մենք տալիս ենք աշխարհաբար (գրաբարի փոխարեն):

1) Վերցրու տարեթիվը ըստ հայկական դարագլխի, դրանից դուրս եկ 1-ը և հանիր մեկ կամ երկու անգամ 532, մնացորդը բաժանիր 19-ի՝ դրանից ստացված նոր մնացորդը ցույց կտա տարվա ոսկեգիրը:

կամ՝

2) Վերցրու տարեթիվը ըստ հայկական դարագլխի և հանելով նրանից 1141, բաժանիր ստացված թիվը 19-ի՝ բաժանման մնացորդը կլինի տարվա ոսկեգիրը: Այսպես, օրինակ, 1952 թվականի համար կունենանք.

ա) ըստ առաջին կանոնի՝

1) $1952 - 551 = 1401$ ըստ հայկական դարագլխի.

2) $1401 - 1 = 1400$.

3) $1400 - 2 \times 532 = 336$.

4) $336 : 19 = 17 + 17$ մնաց. 13:

Ոսկեգիրը կլինի 13:

բ) ըստ երկրորդ կանոնի՝

1) $1952 - 551 = 1401$.

2) $1401 - 1141 = 260$.

3) $260 : 19 = 13 + 17$ մնաց. 13:

Երկու դեպքերում էլ ստանում ենք մնացորդով 13 և այստեղից եզրակացնում, որ 1952 թվականի ոսկեգիրն է 13 և ուստի այդ տարին հանդիսանում է 19-ամյա ժամանակաշրջանի 13-րդ տարին:

Հայկական վերագրիչների հին աղյուսակն է հետևյալը.

Նոր տոմարին անցնելը խախտել է նաև ճախկին կանոնները և նրանցից արդեն օգուտվել կարելի է միայն մտցնելով որոշ փոփոխություններ:

1. 532 տարվա ժամանակաշրջանը, կամ այսպես կոչված մեծ ինդիկտոնը, լայն դորժածության մեջ էր հին և միջին դարերում տոմարական հաշիվներ կատարելու ասպարիզում, որովհետև 532 տարուց հետո կրկնվում են սկզբից նույն հաշվարկականությամբ թվերը՝ լուսնի փուլերը և թվերը: $532 = 19 \times 28$,

Այսպես՝ առաջին կանոնը կարող ենք նորից օգտագործել, եթե 1-ը հանելու փոխարեն (2-րդ գործողությունում), ավելացնենք 1. կատարվի՝

$$2) 1401 + 1 = 1402.$$

$$3) 1402 - 2 \times 532 = 338.$$

$$4) 338 : 19 = 17 + \text{մնաց. } 15:$$

Երկրորդ կանոնի համաձայն, փոխանակ հանելու 1141, պետք է հանել 1139.

$$2) 1401 - 1139 = 262.$$

$$3) 262 : 19 = 13 + \text{մնաց. } 15:$$

Այսպիսով տեսնում ենք, որ նոր տոմարի մոտքը փոխել է նաև տարվա ռեկվիզիտը (13-ի փոխարեն 15)։

19-ամյա ժամանակաշրջանի կապակցությամբ և նրանից կախված՝ հանդես է եկել թվերի մի նոր աղյուսակ, որը հարևան ամսվան է հանդիմանաբար շրջանո, արևմտյան ժողովուրդները՝ «Ոսկե թվեր», իսկ արևելյան ժողովուրդները՝ «Լուսինի շրջան»։

Այդ թվերի աղյուսակի նպատակն է հնարավորություն ստեղծել պարզ և հարմար կերպով հաշվելու լուսնի օրը, ինչպես նաև նորալուսնի ու լիալուսնի օրերը։

Հայկական վերագիրը ցույց է տալիս այն տարբերությունը, հաշված միջին օրերով, որն առաջանում է տարեցտարի արեգակնային և 12 ամսից բաղկացած լուսնային տարիների միջև։ Նոր տարվա օրը վերագրանում է մոտ 365 օրից հետո և եթե մեկը ընդունենք այն տարին, որում նորալուսինը համընկել է նոր տարվա հետ, որպես սկզբնական տարի, ապա հաջորդ տարում նոր տարվա օրին լուսինը չի գտնվի նորալուսնի փուլում, այլ կունենա 11 օրական փուլ,

այսինքն կլինի նախորդ լուսնային տարվա 13-րդ ամսում։ Դրան հաջորդող տարում նոր տարվա լուսինը կլինի 22 օրական փուլում, երրորդ (հաջորդող) տարում՝ 33 օրական փուլում և կամ դուրս հանելով մեկ լրիվ լուսնի ամիս՝ 3 օրական փուլում և այլն։

Վերև բերված թվերը (0, 11, 22, 33 և այլն) հանդիսանում են որպես հայկական վերագրաց շրջանի թվերի աղյուսակ և նրանք ցույց են տալիս թե ի՞նչ փուլում կգտնվի լուսինը պահանջվող տարվա նոր տարվա օրին՝ 10-ամյակի իրար հերթական կարգով հաջորդող տարիներին, ինչպես տեսնում ենք, տարեցտարի այդ տարբերությունն ավելանում է 11-ով և քանի որ $11 \times 19 = 209$, իսկ $209 = 30 \times 7 - 1$ (այսինքն 7 կերտացված լուսնային ամիս առանց 1 օրի), ապա 7 ամիսը լրացնելու համար հայերը նկատի էին ունենում Շահ ժամանակի մասունքները (տե՛ս Անանիա Տիրակացի, «Տիեզերագիտություն և տոմար», § 49, Հայպետհրատ, Երևան, 1941 թ.) և տարիներից մեկում ավելացնում էին 11-ի փոխարեն 12 օր։

Սովորաբար հայերի տոմարում 12 ամիսացվում էր 19-ամյա շրջանի 18-րդ տարվա վերջին, և դրա հետևանքով վերագրաց շրջանի տոնաշին տարին ունենում էր վերագիր 2։

Ներկայումս նոր տոմարին անցնելու հետևանքով փոփոխվել են ինչպես ռեկվիզիտը, նույնպես և վերագիրները։

Վերագրաց շրջանի թվանշանների ճիշտ արժեքները կլինեն հետևյալները.

Ռեկվիզիտ	Ա	Բ	Գ	Դ	Ե	Ղ	Է	Ը	Թ	Ժ	ՃԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ	ԺԵ	ԺԶ	ԺԷ	ԺԸ	ԺԹ
Վերագիր	27	8	19	0	11	22	3	14	23	6	17	28	9	21	2	13	24	5	16

Հետևապես ներկայումս ավելացվում է 12՝ 19-ամյա շրջանի 13-րդ տարվա վերջին։ Եթե համեմատենք վերագիրների հին աղյուսակը

Նոր աղյուսակի	Ե	տարվա	վերագիրը	(11)
»	»	Ժ	»	(6)
»	»	ԺԱ	»	(17)
»	»	ԺԳ	»	(9)
»	»	ԺԵ	»	(2)

Համեմատական այս փոքր ցուցակից պարզ երևում է, որ վերագիրների նոր աղյուսակ ստանալու համար կարելի է օգտագործել հին աղյուսակը, միայն տարվա տակերից փոքրացնելով 5-ով։ Պատճառը այն հանգամանքն է, որի վրա կանգ առանք սկզբում՝ ստորերբութունը կուտակվելով 312,5 տարուց հետո տալիս է մեկ օրվա տարբերություն։

սակը (տե՛ս նախորդ էջում) նոր աղյուսակի հետ, կուտանենք, որ թվանշանների մեջ ո՛ր մի տարբերություն չկա։ Իրապես՝

Համապատասխանում է հին Ժ տարվա (11).
» » » ԺԵ » (6).
» » » ԺԶ » (17).
» » » ԺԸ » (9).
» » » Ա » (2).

րութուն։ Նիկիայի ժողովից (325 թ.) մինչև 1952 թ. անցել է 1952—325=1627 տարի։ Եթե բաժանենք $1627 : 312,5 = 5,2$ կատարվի մոտավորապես, այսինքն այդ 1627 տարիների ընթացքում մեր հաշիվը խախտվել է 5,2 օրով կամ 5,2 օր առաջ է վաղել։ Այժմ պետք է փոքրացնենք այդ թիվը 5-ով, որպեսզի հաշիվը լինի ճիշտ (կո-

ուորակային մասերը, վերադիրները հաշվելիս, նկատի չեն ունենում, սպասում են, որ տարբերությունը կուտակվելով կազմի լրիվ օր)։

Այդ հաշիվներից ելնելով պիտի ասել, որ էշմիածնի լույս ընծայած օրացույցում 1951 և 1952 թվականների վերադիրները տրված են սխալ, Բերում են թվական տվյալները.

1947 թ.	»	ոսկեգիր Ժ, վերադիր 6.
1948 թ.	»	ԺԱ, » 17.
1949 թ.	»	ԺԲ, » 28.
1950 թ.	»	ԺԳ, » 9.
1951 թ.	»	ԺԴ, » 22?
1952 թ.	»	ԺԵ, » 3?

Բերված տվյալներից մենք տեսնում ենք, որ 1950 թվականի վերադիրն է 9, փսկ 1951 թվականինը՝ 22, Այս տարում 12 ավելացնելու փոխարեն, ավելացված է 13, որը ոչ մի դեպքում ճիշտ լինել չի կարող։ Դրանից էլ առաջացել է հետևյալ 1952 թվականի վերադրի սխալ լինելը՝ $22 + 11 = (3)3$, այսինչ 1951 թվականին պիտի լիներ 21, փսկ 1952-ին՝ 2.

Տարվա վերադիրը գիտենալով, աշխատում ենք որոշել լուսնի օրը (այսինքն ցանի՝ օրական փուլում է նա գտնվում)։ Այդ նպատակին ծառայում են բազմաթիվ կանոնները. բերում ենք ամենաընդունվածը և պարզը.

Լուսնի օրն որոշելու համար գումարի մասաթիվը, անցած ամիսների թիվը և վերադիրը՝ գումարը կտա լուսնի օրը, ճիշտացված գումարը մեծ լինի 30-ից, այդ դեպքում պիտի հանել նրանից 30, մնացորդը ցույց կտա լուսնի օրը։ Օրինակ, լուսնի քանի՞սը պիտի լինի 1952 թվականի դեկտեմբերի 10-ին Գումարում ենք՝ 10 (ամսաթիվը) + 11 (անցած ամիսների թիվը) + 2 (տարվա վերադիրը) = 23։ Սակայն այդ հաշիվները կատարելիս չպիտի է մոռանալ մի հանգամանք. հայերը, ինչպես արևելյան մյուս ժողովուրդները, սովորություն են ունեցել հնում օրվա սկիզբը համարել արևամուտից հետո, այսինքն դրանից հետո արդեն սկսում է դեկտեմբերի 11-ը։ Հետևապես, ճիշտ հաշիվը կատարվում է մինչև արևամուտը, դա դեկտեմբերի 10-ն է, իսկ արևը մայր մտնելուց հետո՝ 11-ը։ Այդ սովորությունը հնում մտած է եղել կենցաղի մեջ։ Պարզ օրը, արևը մայր մտնելուց հետո, չեն աշխատել, համարելով, որ արդեն կիրակի օրն սկսել է, իսկ կիրակի օրը մայրամուտից հետո աշխատել կարելի էր, քանի որ համարվում էր, որ կիրակին անցել է և երկուշաբթին սկսել։

Ինչպես տեսանք, լուսնի օրն որոշելու համար անհրաժեշտ է գտնել երեք միությունների գումարը՝ ա) ամսաթիվը, բ) անցած ամիսների թիվը սկսած հունվարից և գ) տարվա վերադիրը։

Այդ կանոնի հիման վրա կարելի է որոշել և՛ նորալուսնի օրը և՛ լիալուսնի օրը։ Առաջին դեպքում պահանջվում է, որ այդ երեք միությունների գումարը հավասար լինի 30-ի (կամ 60-ի), իսկ երկրորդ դեպքում՝ 45-ի (կամ 15-ի)։ Օրինակ՝ դեկտեմբերի քանիսի՞ն պետք է տեղի ունենա նորալուսին, կամ քանիսի՞ն՝ լիալուսին։

Նորալուսնի համար՝ 11 (անցած ամիսների թիվը) + 2 (վերադիր) + ամսաթիվ = 30. կամ ամսաթիվը = $30 - 11 - 2 = 17$, այսինքն՝ դեկտեմբերի 17-ին.

Լիալուսնի համար՝ 11 (անցած ամիսների թիվը) + 2 (վերադիր) + ամսաթիվ = 45, որտեղից ամսաթիվը = $45 - 11 = 32$, որից կհանենք դեկտեմբերի ամսվա 31 օրերը և կստանանք 1 (հունվարի) կամ դեկտեմբերի 31-ի գիշերը, Նույն կանոնում կարելի էր 45-ի փոխարեն վերցնել 15 և կստանալինք՝ $15 - 11 - 2 = 2$, այսինքն 1952 թվականի դեկտեմբերի ամսում լիալուսին տեղի կունենա 2 անգամ՝ դեկտեմբերի 2-ին և 31-ին (գիշերը)։

Այդ տեսակետից հետաքրքրական է էշմիածնի կողմից հրատարակվող օրացույցը, Այսպես, 1952 թվականի օրացույցում չլրումն լուսնի»՝ նշանակված է դեկտեմբերի 3-ին (էջ 202), հոկտեմբերի 5-ին (էջ 171), անդեմբերի 5-ին (էջ 155), օգոստոսի 7-ին (էջ 139), հուլիսի 7-ին (էջ 123), հունիսի 9-ին (էջ 106), մայիսի 10-ին (էջ 89) և այլն, միաժամանակ էլ երբի կողքից ամենուրեք ցույց է արված, որ այդ օրերին լուսնի փուլը 16 օրականից անցնում է դեպի 17 օրականը, երբ հայտնի է, որ լրումն լուսնի կամ լիալուսնի համարվում է երրորդ փուլը գտնվում է 15 օրական փուլում։ Ինչ պիտի ենք անմիջապես կարելի է ուղղել և դա առաջացիլ է նրանից, որ 1952 թվականի իսկական վերադիրն է 2 և ոչ թե 3։ Տեղադրեցեք և վստահացեք, որ այդ օրերին լուսինը 15 օրական փուլից անցնում է դեպի 16 օրական փուլը, այսինքն իրապես այդ օրերին լիալուսին է (լրումն լուսնի)։

Դեռ 7-րդ դարում Անանիա Շիրակացին իր աշխատությունում տվել է այն կանոնը, որով վարելի է հաշիվել, թե լուսինը քանի՞ ժամ է լուսավորելու կամ չե երևալու (լիալուսնից հետո), Նույն մասին խոսվում է

1. Անանիա Շիրակացի, «Տիեզերագիտություն և տոմար», § 36, ՀայկաՏՀրատ, Երևան, 1941 թ.

նաև Հայկական ՍՍՏ Պետական մատենա-
դարանի (Զեռագրատան) № 4166 ձեռագրի
տոմարական մի տեքստում: Կանոնը պիտի
կարգալ այսպես.

«Եթե կամենաս գիտենալ, թե լուսինը
քանի՞ ժամ լույս է տալու գիշերը կամ
քանի՞ ժամ լինելու է խավար (անտեսա-
նելի), վերցրու լուսնի օրը, բազմապատ-
կիր 4-ով, ստացած թիվը բաժանիր 5-ի
վրա և կստանաս պատասխանը, միայն
նորալուսնի լուսատվության ժամերը հաշ-
վիր սկզբից, իսկ լիալուսնից հետո համա-
րիր նրանց խավարը:

Այս կանոնը, իհարկե, մոտավոր ճշտու-
թյամբ տալիս է լուսնի լուսատվության ժա-
մերը: Մտուգենք օրինակով: Ննթադրենք, որ
լուսնի 6-ն է: Բազմապատկելով 4-ով և բա-
ժանելով 5-ի վրա, կստանանք $\frac{24}{5} = 4\frac{4}{5}$ ժ. =
= 4 ժ. 48 ր.: Դա նշանակում է, որ լուսինը
երկնակամարի վրա կդիտվի մինչև 6 ժ. +
+ 4 ժ. 48 ր. = 10 ժ. 48 ր.: 6 ժամ ավելաց-
նում ենք՝ նկատի ունենալով, որ ըստ հին
հայկական սովորոթյան, երեկոյան ժամը
6-ից հետո համարվում էր արդեն գիշեր:
Ուտի 6 օրական լուսինը լույս է տալիս
մինչև գիշերվա 10 ժ. 48 ր. (կամ դեկրետա-
լին ժամանակով՝ մինչև 11 ժամ 48 ր.):
Նույն ձևով կարելի է հաշվել և լուսնի մյուս

օրերը: Լիալուսնի օրը կստացվի $15\frac{4}{5}$ =
= 12 ժ., այսինքն լուսինը կլուսավորի եր-
երկիրը 12 ժամ, սկսած երեկոյան ժամը 6-ից
մինչև առավոտյան 6-ը (կամ դեկրետալին
ժամով՝ երեկոյան ժամը 7-ից մինչև առա-
վոտյան ժամը 7-ը):

Ուսումնասիրելով այդ կանոնը, մենք գա-
լիս ենք այն եզրակացության, որ Անանիա
Շիրակացին ընդունում է լուսնի ծագման ա-

մենօրյա ետ մոտավոր՝ $\frac{4}{5}$ ժ. կամ 48 րոպեով,

քանի որ նա ընդունում է, որ լուսինը 30

օրում կատարում է մի լրիվ պտույտ իր

ուղեծրով (օրիտայով) և հետևաբար $\frac{360}{30}$ =

= 12⁰, Բայց Շիրակացուն արդեն հայտնի էր,

որ երկնային ոլորտի պտույտը մեկ ժա-
մում հավասար է 15⁰-ի (360⁰: 24 ժ. = 15⁰), և

ուստի $\frac{12^0}{15^0} = \frac{4}{5}$ (ժ) = 48 ր.: Իրականում


լուսինն իր օրիտայով ամեն օր անցնում է

13⁰-ից մի քիչ ավելի և նրա ծագումն օրեցօր

ուշանում է մոտ 50 րոպեով (48-ի փոխա-
րեն): Մենք տեսնում ենք, որ սխալն այն-

քան էլ մեծ չի, եթե նկատի ունենանք դարը,
մյուս կողմից էլ կանոնը շատ պարզ է և
լարդ հաշիվներ չի պահանջում:





ՊՐԱՅ.-ԴՈՒՏ. Ա. Գ. ԱՅՐԱՀԱՄՅԱՆ

ՅՐԻԿԻ «ԴԻՎԱՆ»Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, «ՅՐԻԿ. ԴԻՎԱՆ»

(Աշխատություն՝ պատկած Ռուսական Գիտությունների ակադեմիայի կողմից)
Հրատարակություն Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Մեկնեյան
նիմնադրամի

§ 1. «Յրիկի Դիվանը» — էջմիածնի միաբանության անդամ Տիրայր արքեպիսկոպոս Մելիք-Մուշկամբարյանի (Տեր-Հովհաննիսյանի) տասնյակ տարիների տեղացան աշխատանքի արդյունքն է։ Փաստորեն առաջին անգամ է, որ լույս է տեսնում միջնադարյան մեր ականավոր տաղերգուի՝ Յրիկի ամբողջական ստեղծագործությունը՝ բնագրով, գիտական համեմատություններով և բնորոշակ ծանոթագրություններով, եթե չհաշվենք պրոֆ. Մ. Մկրյանի և Ն. Թորոսյանի 1941 թվականին հրատարակած «Յրիկի բանասերություններ»-ի ժողովածուն։ Որի հիմքը նույնպես Տիրայր արքեպիսկոպոսի ներկա աշխատության սեպհի օրենսդրական հանդիսացել է։

Տիրայր արքեպիսկոպոսի շնորհակալ այս գործը արժանավայել վարող են գնահատել միայն նրանք, ովքեր ծանոթ են գիտական համեմատական տեքստեր կազմելու հոգեմաշ աշխատանքի հետ և ովքեր գիտեն՝ թե որքան աչքի լույս պիտի թափել մեր խոնացած ձեռագրերի վրա՝ նման մի գործ ստեղծելու համար։

Յրիկի տաղերը հավաքելու ուղղությամբ Տիրայր արքեպիսկոպոսի կատարած պրոպագանդային ու որոնումները երկար տարիների պատմության ունեն։ Նա այդ աշխատանքը սկսել է 1907 թվականից. Յրիկի ստեղծ

ագործության մեղ հասած փշրանքները հավաքելու համար հրատարակվող պատել է աշխարհի բոլոր ծայրերը, եղել է գրեթե բոլոր խոշոր մատենադարաններում, հավաքել է Յրիկի տաղերը, համեմատել, ուսումնասիրել և պատրաստել հրատարակության։ Աշխատանքը ավարտել է 1912 թվականին և ներկայացրել Ռուսական Կայսերական գիտությունների ակադեմիային՝ տպագրության խնդրանքով։ Ակադեմիայի գիտական խորհուրդը արդ աշխատությունն ընդունել է ռաբժր գնահատականով և իր վրա վերցրել հրատարակության ողջ ծախսերը։ Տպագրությունն սկսվել է, սակայն Համաշխարհային առաջին պատերազմի ծանր օրերին՝ ընդհատվել և մնացել անավարտ վիճակում։ Այնուհետև տպագրության համար պատրաստ Յրիկի «Դիվանը» սպասել է եւս 35 տարի, մինչև որ 1952 թվականին լույս է ընծայվել Հայ Բարեգործական Ընդհանուր Միության կողմից։

Որպես հայ մատենագրությամբ զբաղվող մասնագետ, չենք կարող վշտով շարժանագրել, որ Յրիկի «Դիվանը» հրատարակության տարիների արքա Քաջազունը խոսում է մի ցավալի երևույթի մասին — որ Մայր Հայրենիքի հեռու, պետական հովանավորությունից զուրկ Սփյուռքի մեր հայագետները նախանձելի վիճակում չեն, որ արտառահմանի մեր

որոշ համայնքներում դեռ հասարակական կարծիք չի ստեղծվել այն մասին, որ մեր անցյալի մշակույթի ուսումնասիրումն ու դիտության սեփականություն դարձնելը—առանձին հայագետների պատվի գործը չէ՝ միայն, այլ մեր ժողովրդի պատվի պորձն րնդհանրապես, ուստի և հայագիտական նման աշխատությունների հրատարակման համար հարկավոր է յուրացրել սրտացավ վերաբերմունքը:

Տիրայր արքեպիսկոպոսի Ֆրիկի «Դիվանքը կազմված է երեք մասից՝ ա) Քննական ուսումնասիրություն (էջ 1—238), բ) Տաղերի գիտական-համեմատական տեքստը (էջ 243—500) և գ) Հավելված-ժանոթագրություններ (էջ 503—621): Վերջում ունի բառարան, անունների ցանկ (էջ 624—715) և նկարներ: Ամբողջ «Դիվանքը» բաղկացած է 756 մեծադիր էջերից:

Մենք նպատակ չունենք այժմ գրախոսել Տիրայր արքեպիսկոպոսի աշխատությունը: Այս շնորհակալ գործի նկատմամբ մեր վերաբերմունքը լիովին դրական է: Մեր ցանկությունն է կանգ առնել Ֆրիկի անձնավորություն և նրա ստեղծագործության հետ կապված վիճելի մի քանի հարցերի վրա, և մեր ձեռքի տակ եղած նյութերի հիման վրա փորձել որոշ լրացումներ և ճշտումներ անել:

§ 2. Էջմիածնի նախկին Մասենադարանում Ֆրիկի տաղեր պարունակող ձեռագրերից հրատարակչին հայտնի են եղել միայն երեք ձեռագիր, որոնց տարբերակները և ոգտագործել է «Դիվանքում»: Այդ ձեռագրերը հետևյալներն են. № 238 (որ ներկայումս ունի Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի 7707 համարը), № 281 (որ ներկայումս ունի 3081 համարը) և № 679 (որ ներկայումս ունի 3595 համարը):

Տիրայր արքեպիսկոպոսի էջմիածնի մատենադարանում աշխատած ժամանակ, ինչպես երևում է, գոյություն չի ունեցել ձեռագրաց թեմատիկ ցուցակ, և նա հնարավորություն չի ունեցել ժանոթանալու Ֆրիկի տաղերը պարունակող կարևոր ձեռագրերի հետ: Նա ի վիճակի չի եղել ժանոթանալու նմանապես Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում կենտրոնացված մյուս ձեռագրական ժողովածուների հետ, ուր կան Ֆրիկի տաղերի որոշ ընդօրինակություններ:

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի թեմատիկ ցուցակում, Ֆրիկի անունով, այժմ գրանցված են ո՛չ թե երեք, այլ քառասուն ընդօրինակություն, որոնց համառոտ րիքրիդգրաֆիան բերում ենք մեր հոդվածի հավելվածում: Անշուշտ, եթե Տիրայր արքեպիսկոպոսը ի վիճակի գտնվեր օգտվե-

լու սովետական մեր մատենադարանի ընդօրինակություններից, Ֆրիկի տաղերի հրատարակությունն անհամեմատ ավելի անթիքի կլիներ:

§ 3. Ֆրիկի «Դիվանքի» մեջ մտել են տաղերգուին վերագրվող հիսունմեկ տաղերը, ինչպես և նրա ստեղծագործության հետ կապված, բայց նրան չպատկանող ինը այլ տաղեր ևս: Ցավալի է, որ Ֆրիկի տաղաշարքից դուրս է մնացել «Կամիմ (ընդ ձեզ) բան մի խօսել» տաղը¹, Այս տաղը բերում ենք մեր հոդվածի հավելվածում:

§ 4. Տիրայր արքեպիսկոպոսը Ֆրիկի «Դիվանքի» մեջ գետնեղել է ընդարձակ ուսումնասիրություն՝ նվիրված Ֆրիկի անձնավորության և նրա ստեղծագործությանը: Նրա արձարժած հարցերից ուշագրության արժանի է Ֆրիկ անվան պարզարանությունը—ի՞նչ անուն է այդ, իր ուսումնասիրության մեջ Տիրայր արքեպիսկոպոսը բերում է հայագիտության մեջ հայտնված բոլոր վարկածները, ինչպես և իր անձնական ենթադրությունները և եզրակացնում, որ Ֆրիկ անունը տաղերգուի իսկական անունը չէ, այլ՝ գրական:

Տիրայր արքեպիսկոպոսի բերած կարծիքներից մեզ ամենից հալանականը—«Ֆրեդիկ», «Ֆրեդիկի», պատող, թափառող իմաստ տվող բացատրությունն է թվում:

«Ֆրիկը» որպես «թափառական» իմաստ տվող մակդիր գործածած ունենք մեր մատենագրության մեջ, և հրատարակիչը մեջ է բերում այն. «Վերս որ կարգայ՝ թող յիշաղճատախու Գրէ Աւոն: Զէս տողեր մրտոնց, Շէնքքց Օսմանի ճոռիկ խազաւ» (Ֆրիկի «Դիվան», էջ 94), այսինքն՝ տողերը գրեց թափառական Ղազարը:

Ի դեպ, «Ֆրեդիկ» բառը «թափառական» իմաստով մտել է հանգուցյալ պրոֆ. Ո. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում. «Ֆրեդիկ,— կարդում ենք այնտեղ,— ճռալուով պտույտ եկող, հուլ» (Դ հատոր, էջ 629):

Ֆրիկ անունով անձնավորություն, 1517 թվականից հիշված է Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 1047 ձեռագրի հիշատակարանում: Հակոբ գրիչը խնդրում է հիշել ձեռագրի պատվիրատու մահտեսի Սահակին, որ ռստացաւ զսա ի հալալ (ը)ռզակէ... յիշատակ իւրն և ծնաւալացն իւրոց Ֆրիկն, և կողակիցն, և քուրդն...» (թ. 234ա):

§ 5. Տիրայր արքեպիսկոպոսն իր ուսումնասիրություն մեջ մի շարք փաստերի հիման

1. Ֆրիկի այս տաղը հրատարակել է Ա. Մնացականյանը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրեր» 1948 թ. № 2—3-ում, էջ 90—84:

վրա ապացուցում է, որ Ձրիկը աշխարհական անձնավորություն է եղել: Նրա հիմնական կուլանն այս հարցում վեներտիկի Մխիթարյանների մատենադարանի Ա 1330 ձեռագրի պարունակած «Իմ սլուտ, վատին մի՛ լսե՞ր» տաղի խորագիրն է հանդիսանում, որը, ըստ հրատարակչի տեղեկության, գրված է կարմրադեղով և հագիվ կարդացվում է: Այլ տաղ վասն քաղեզոթուրեան մառդկան ի Ձրիկէ աշխարհականէ աւացեալ: Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի Ա 7707 ձեռագրում ընդօրինակված՝ «Է՛ անաւրէն և անառակ երիտասարդ» տաղի խորագրում Ձրիկը նույնպէս հիշված է որպէս աշխարհական՝ «Ձրիկ ճարտար աշխարհականէ» (թ. 272 ա): Այս վերնագիրը նույնպէս գալիս է հաստատելու Ձրիկի աշխարհական լինելու փաստը:

Անշուշտ շափազանցություն է բանասերներից ոմանց հայտնած կարծիքն այն մասին, որ իբր Ձրիկը սկսականծանքի է ենթարկում «Աստվածաշնչում» նկարագրված աշխարհի և մարդկանց արարչագործությունը, «Ձրիկը չի հավատում Ադամ-Եվայի լեզունդին» և այլն: Այդ սխալը ժամանակին մատնացույց է արել պրոֆ. Մ. Արեղյանը (տե՛ս «Հայոց հին գրականության պատմություն», 2-րդ դիրք, էջ 268):— Ձրիկին ամբիստ համարելը, ինչ խոսք, որ անհեթեթություն է:

§ 6. Տիրայր արքեպիսկոպոսը ենթադրում է, որ Հ. Ալիշանի ձեռագրերից հավաքած տեղեկության մեջ՝ Ձրիկն էր «որդի թագվոշին, եղբորորդի Դագուայիւն», երգել է «ի վերայ իր մեղացն որ ի վանս բանասիրաց» (տե՛ս «Յուշիկը Հայրենեաց», էջ 125): Թագվոշը պիտի եղած լինի Ղարաբաղում ընդհանրացած թագուշ անունը, իսկ Թագուշը եղել է Ձրիկի ո՛չ թե հայրը, այլ՝ մայրը: Հրատարակչի այս ենթադրությունը հիմնավորված չէ: Եթե ճիշտ է Հ. Ալիշանի բերած տեղեկությունը Ձրիկի մասին, ապա այնտեղ Թագվոշը հիշված է որպէս Ձրիկի հայրը և ոչ մայրը: «Ձրիկն էր որդի Թագվոշին»:

Բերված Թագվոշ անունը, իհարկե, անսովոր է, այդպիսի անուն չգիտեմ նույնպէս պրոֆ. Հ. Աճառյանի անձնանունների քառարանը: Մեր կարծիքով, «Թագվոշ» անունը աղավաղումը պիտի լինի «Թագվոր» անվան, իսկ Թագվոր անունով մի քանի այլ մարդիկ հիշված են պրոֆ. Հ. Աճառյանի Անձնանունների քառարանում (տե՛ս «Հայոց անձնանունների քառարան», հատոր Բ, էջ 243—244):

§ 7. Համոզեցուցի՜լ է հրատարակչի եզրակացությունը Ձրիկի խեղճ, թափառական վի-

ձակի մասին: Հայտնի է, որ Ձրիկի ողջ ունեցվածքը ավար էին վերցրել մոնղոլները: Այդ մասին տաղերգուն իր «Հանց մեծամեծ խորհուրդ արի...» տաղի մեջ հետևյալն է ակնարկում.

«Զինչ Տէրն երես՝ ձերթ շածի. այլ մեծութեան սիրտ ունէի. ժողովեցի շատ մի րարի՝ ըռզակ արի զինք թաթարի...»:

(Դիվան, տաղ Ը, տող 9—10):

Ավելին, բանաստեղծը հարկի դիմաց գրավ է դրել իր որդուն և պարտքի տակ է ընկել: Այդ մասին նա իր մի տաղում գառնացած գանգատվում է.

«Ո՛ր տուն, ո՛չ տեղ ունիմ, կու խոցիմ ի յանհաւատնուն.

կասեն, թէ խրմէ զինի. որ լինիս դու մի պահ ի քուն,

Ուսկայ ի պարտուց յահուն, կու դողամ զինչ ունի ի քամուն,

Դըրի զիմ որդին գըրաւ, ուստի ճուղալ զընալուն.

Միթէ Թագաւորն երկնից՝ նա բերէ զիմ որդին ի տունս:

(Դիվան, տաղ ԺԷ, տող 6—10):

Շատ ծանր է անցել Ձրիկի ծերության շրջանը. նա կորցրել է իր բոլոր հարազատներին, գրկվել իր տուն ու տեղից և թափառական կյանք վարել:

«Զի գիտեմ թո՛ւր մեռանիմ, ո՛չ կոր ունիմ, որ թաղէ զիս,

Ո՛ր ունիմ տեղ հանգստեան, ո՛չ խնդացել եմ յիմ որդիս.

Ո՛ր եղբայր, 'ւ ո՛չ զոք ունիմ, որ աւագէ. ափսոսայ զիս,

Ո՛ր ծըլիմ, ո՛չ լուսանիմ, զերդ զաղընեւած սերմ եմ գերիս...»:

(Դիվան, տաղ Դ, տող 9—12):

Զարմանալի չէ, որ այս վիճակում նա հուսահատության մեջ է ընկնում և դառնացած նշում.

«Ես ան հաւերուն էի, որ դետինըն կուտ լուտէի,

Թըռչէի, երկնաւքն անցնէի, թէ սիրուն՝ ակնատ չընկնէի.

Ակնատն ի ծովուն կըղզին լարած էր՝ 'ւ ես չգիտէի,

Ամէն հաւ ոտօքն ինկեր, ես ոտաւքս ու թեւ աւելիս:

(Դիվան, տաղ ԽԳ, տող 23—26):

Հրատարակչի բերած փաստերը այս ամէնի մասին ճիշտ են: Մենք չենք ուզում միայն համաձայնվել հրատարակչի հետ Ձրիկի ծննդավայրի հարցում, Մեր կարծիքով, Ձրիկը ո՛չ թե Արենիյան Հայաստանից է, այլ Արեւմտյան Ձրիկի դարաբաղի լինելու մասին արդեն խոսք լինել չի կարող: Ըստ որում, «Բանասիրաց վանքը», որի հետ, ըստ

տեղեկությունների, կապված է եղել Ֆրիկը, չպիտի անվիճելի համարել Գլաձորի պարոցը: Քառասներորդ տարեկան կոչվել նույն Կիլիկիայի երրորդ Անաստասի և գրչության մի քանի այլ պարոցներ:

§ 8. Մեր կարծիքով, ճիշտ չէ հրատարակել «մասա» բառին տված բացատրությունը: Նա «մասա» բառը համադրելով «մասասլի» բառին, գտնում է, որ առաջինը նշանակում է «հայ», իսկ երկրորդը՝ «ուշ հայ» (1) (Դիվան, էջ 102): Տիրալը արքայիսկոպոսն իր կազմած «Դիվան»ի բառարանում բացատրել է. «Մասա» — պայմանական խոսք կամ զաղտնի լեզվի արտահայտություն, որ նշանակում է ՀԱՅ, ազգակից, արյունակից, ցեղակից» (էջ 662): «Մասասլի» — ծածկալեզու բառ, որ նշանակում է ուշ-ՀԱՅ, օտար, թշնամի» (էջ 663):

Մեզ թվում է, որ «մասա» բառին տրված այս բացատրությունը ճիշտ չէ: Մեր կարծիքով այս բառը պարսկերեն *مسا* (մասա) բառն է, որ նշանակում է գործ, ձեռնարկ: նպատակադրում: Ֆրիկն այստեղ ուզում է ասել՝ ռոբերտ անցան իմ ձեռնարկների, գործերի, իմ երազանքի հետ միասին:

Ինչ վերաբերում է «մասասլի» բառին, ապա այդ ունի «գործակալ» իմաստը, հավանական է մոնղոլական հարկեր հավաքող գործակալ: Մասա — գործ, մասասլի — գործակալ (ինչպես՝ «բաղա» — «բաղմանչի», «դուքան» — «դուքանչի» և այլն): Այս իմաստով է գործածված «մասասլի» բառը Ֆրիկի «Լասն Արդուն ղանին և Բուլային» տաղի մեջ.

«Գեմ չի մընաց լեռներ ու դաշտ»,

Որ մասասլիքն չկոխեցին:

(Դիվան, տաղ ԼԵ, տող 67—68):

Այսինքն՝

Չմնաց այլևս լեռ ու դաշտ,

Որ մոնղոլ գործակալները ոտք չդնեին: Կամ՝

«Ապա դալս այլ կամիմ ասել,

Չինչ մասասլիքն գործեցին:

(Դիվան, տաղ ԼԵ, տող 114—115):

Այսինքն՝

«Ցանկանում եմ այն էլ պատմել,

Բն ինչ արացին [մոնղոլ] գործակալները»:

§ 9. Ֆրիկի վերև բերված տաղում հիշված «մասա» բառը, մեր կարծիքով, ո՛չ մի կապ չունի Ֆրիկին վերագրվող «Յիշէ զբանն Անետալանին» տաղի տնապուխ տառերից կազմվող «նովասալի մազադ» հետ: Ժամանակին իրավացի է եղել նորայն Բյուզանդացին, որ այդ տաղը համարել է Հովասափ Անքաստացուն և նախագրողացուն է հրատարակել: Նմանակում այն Ֆրիկի «Դիվան»ի մեջ: Ավելորդ չենք համարում նշել, որ այդ

տաղը Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2672 ձեռագրում (որն ընդօրինակված է 1607 թվականին) հիշված է Հովասափ Անքաստացու անունով՝ «Պաղատան» ապաշխարութեան Սեբաստացի Յովասափին: — Տիշէ պրանն Անետալանին...» (թ. 348ա):

§ 10. Դժվարանում ենք համաձայնել «Դիվան»ի հրատարակչի հետ՝ Ֆրիկի «Դիվան»ի ԻԴ տաղի մեջ հիշված Հարգա անվան տված բացատրության հարցում: Նա այդ անունը համարում է Կիլիկիայի Հարգա քաղաքի անունը (նորագույն Հաջըն): և այդ անվան հիշատակության հիման վրա փորձում է ապացուցել, որ Ֆրիկը լինելով Արևելյան Հայաստանից, մշտապես չի մնացել այնտեղ, այլ տարագրվելով եկել է Կիլիկիա և շատ տարիներ ապրել Հարգա քաղաքում (Դիվան, էջ 224):

Այդ նույն տեսակետը պաշտպանել են նաև պրոֆ. Մ. Մկրչյանը՝ Ֆրիկի «Քառասներորդ տարեկան կոչվել նույն Կիլիկիայի երրորդ Անաստասի և գրչության մի քանի այլ պարոցներ»-ի առաջարկում (էջ 11) և բանասեր Ա. Ղանալանյանը՝ իր «Ֆրիկի կյանքն ու ստեղծագործությունները» հոդվածում: Վերջինս այդ մասին դրում է. «Ֆրիկը լավական երկար ապրել է Կիլիկիայի պատմական Հարգա (այժմյան Հաջըն) քաղաքում, որի մասին իմանում ենք նրա Յաղագս փոշիվաճուրկան տաղից (տե՛ս «Ֆրիկ, ժողովածու», Երևան, 1937 թ., էջ 99): Միայն պրոֆ. Մ. Մկրչյանն է, որ կասկածելի է նկատել այդ անվան բացատրությունը: «Հարգա անունը փորձել են նույնացնել Կիլիկիայի «Հարգա» տեղանվան հետ, — գրել է նա, — բայց այդ դեռ կարելի չէ հաստատ համարել: Սակայն պրոֆ. Մ. Մկրչյանը այդ անվան հիման վրա մի այլ տեսակետ է զարգացրել. ճիշտ համարելով այդ բառի «Հարգա» փոփոխակը, այն համարում է Աղձնիքի նշանավոր կենտրոն Հազրան (տե՛ս Մ. Արեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», Երևան, 1946 թ., էջ 251):

Ֆրիկի մոտ այդ անունը գործ է ածվել նրա հետևյալ պարբերության մեջ.

«Եստ մի դատեցալ, եղբարք, ի Հարգալ

ես շատ մի տարի,

Ասցի թ՝ իմ ջանալս առնեմ մեծութիւն՝

առանց հրամանի»:

(Դիվան, տաղ ԻԴ, տող 9—10):

Ծիծե ճիշտ է, որ Ֆրիկը թափառականի ցուպ վերցրած եկել էր Հարգա քաղաքը, և եկել է «Եղբար՝ որդին որդնելու», այն դեպքում անհիմաստ է դառնում Ֆրիկի «Ջանալս առնեմ մեծութիւն» արտահայտությունը, քանի որ թափառական Ֆրիկը Հարգա քաղաքում հաղիվ թե՛ ձգտեր մեծություն:

Մեր կարծիքով, «Հարգա» բառին տված այս բացատրությունը բացահայտ թվուրի-

մացութեան արդունք է: Այդ բառի ճիշտ ձևն է ո՛չ թե Հարգա, այլ հարգա, որը տալիս են Օքսֆորդի համալսարանի, Բողոքական գրատան F. 16 Агп. Ms. և Լոնդոնի Բրիտանական թանգարանի օր. 2622 Յրիկի ձեռագրերը՝ «Շատ մի դատեցայ, եղբարք, ի հարգայ ես շատ մի տարի»: «Հարգա» բառը հատուկ անուն չէ, այլ՝ հասարակ, փոխառված պարսկերենից և ունի «ունայն», «ապարդյուն» իմաստը: Պրոֆ. Բ. Միլլերի «Պարսկերեն—ռուսերեն» բառարանում այդ բառը թարգմանված է «защ. hāpze) тшетный, напрасный, пусто» (տե՛ս Բ. В. Миллер, «Персидско-русский словарь, Москва, 1953 г., стр. 592): Վերև բերված տողերում Յրիկը պարզապես ուզում է ասել, որ «ես շատ տարիներ, եղբայր, ապարդյուն աշխատեցի, իզուր աշխատեցի», և ո՛չ թե «Հարգա քաղաքում աշխատեցի»:

Այս բառին տված նոր բացատրությամբ մենք չենք ցանկանում ընդհանրապես մերժել Յրիկի կիլիկյան Հայաստանում գտնվելու փաստը, սակայն գտնում ենք, որ Յրիկի Հարգա քաղաքում գտնվելու փաստը անհիմն է:

§ 11. Տիրայր արքեպիսկոպոսն իր ուսումնասիրության մեջ այն կարծիքն է հայտնում, որ Յրիկը գրել-կարդալ չի իմացել, ժերես (ժամանակակիցների մեջ) կային և այնպիսիները, — գրում է նա, — որոնք անձնապես ճանաչելով Յրիկին և շատ լավ իմանալով երա անուսումն լինելն ու գրակարդաց լուկ շիհնը (ընդգծումը մերն է. — Ա. Ա.), կասկածանքով էին վերաբերվում նորա բնական քանքարի արդյունք քնարի առատ և առատարան արտագրություններին... (Դիվան, էջ 18):

Բանասերներից ոմանք կրկնել են այս կարծիքը՝ Յրիկին համարել են անուս, անկիրթ, Ստացվում է, որ միջին դարերում սոցիալական մոտիվներով զրոգ մենք միայն մի տաղերգու ենք ունեցել, այն էլ անգրագետ: Այս տեսակետի հետ չի կարելի համաձայնվել ո՛չ այն պատճառով, որ այն ստվեր է ձգում անցյալի մեր զարգացած մշակույթի վրա, այլ որ փաստական տեսակետից ճիշտ չէ: Այս սխալին ժամանակին շատ իրավացի անդրադարձել է հանդուցյալ պրոֆ. Լ. Արեղյանը: Յրիկի ծանոթ լինելը Ասավածաշնչին և նրանից հետոն մեջբերումներ անելը, նրա տաղերի մեջ մշակված արվեստը և այլն — միանգամայն հակառակն են ապացուցում: Յրիկը ո՛չ միայն գրագետ, այլ իր ժամանակի ամենազարգացած, կարգացած մարդկանցից մեկն է եղել, այնքան զարգացած, որ ըմբռնել է ժամանակի սոցիալական հակադրությունները և կարողացել է այն արտահայտել իր տաղերում:

Յրիկն անգրագետ համարող բանասերները, սովորաբար, մատնացույց են անում բանաստեղծի հետևյալ խոսքերը.

«Յրիկն ի՛նչ հող է կամ մոխիր, որ հանց գոհար բան շար է նա,

Ո՛չ ծառայել վարդապետի, ո՛չ կարգացել ալիկ մի նա,

Ո՛չ ի հօր է առել մերաթ, այլ յԱստուծոյ տուած նորա.

Նա ե՛րբ կար է հանց բան ասել, ով որ կարդայ ալահն է ղնառ:

(Դիվան, տաղ է. տող 69—72):

Բայց այստեղ Յրիկի խոսքը վերաբերում է ո՛չ թե կրթության չունենալուն, այլ ուսուցչի և հոր մոտ սխատեմատիկ կրթություն չստանալուն: Սակայն ինքնակրթությամբ Յրիկը կարող էր շատ մեծ արդյունքների հասնել: Բացի այդ, Յրիկի այս տողերում մենք նկատում ենք համեստության հետ և որոշ հեղանակ՝ ուղղված գրչության դպրոցներում սովորած «գիտունների այն հերյուրանքին՝ թե Յրիկը «ի՛նչպես կարող է այնպիսի լավ բաներ գրել», որ նրանք հավանեն: Ասում ենք՝ հեղանակ, որովհետև Յրիկը ծանոթ էր ժամանակակից հայ տաղերգության հետ, և լավ գիտեր, որ իր ստեղծագործությունը անհամեմատ ավելի բարձր է եղածներից, ավելի է սիրված ժողովրդից, քան պաշտոնական անարյուն տաղերգությունը:

Պիտի նկատի ունենալ նաև, որ արտահայտության այդ ոճը միջնադարյան մեր գրիչների սովորական ոճն է եղել: «Յիշեսցիք և դիս՝ տգետ, ծուլս, յոլս...», — կարգում ենք ձեռագրերի հիշատակարաններում, նայելով հավարավոր էջերից բաղկացած ձեռագրին, արտագրության գրագիտությանը, ո՛չ որ կարող է ասել, որ հիշատակագիր գրիչը, իրոք, ծուլ է եղել կամ անգրագետ: Հակառակը, ձեռագրին նայելով մարդ զարմանում է գրչի աշխատասիրության և վարժ գրագիտության վրա: Տարօրինակ ոլինչ չկա. այն ժամանակվա արտահայտության ոճն այդ է եղել: Յրիկն էլ իր ժամանակի մարդն է:

§ 12. Տիրայր արքեպիսկոպոսը Յրիկի «Դանդառար, որ նրա ստեղծագործության գլուխ գործոցն է նկատվում, Յրիկինը չի համարում, այլ՝ ոմն Բարսեղի: Այդ մասին նա աներկբա գրում է. «Յրիկին վերագրված «Դանդառար, որն փիճման ընդ ամենագորին Աստուծոյ վերտառությամբ տաղը, մեր կարծիքով, Յրիկինը չէ, ինչպես համառ կերպով պնդվում է ամենքի կողմից և ամեն պատահությամբ, Ավելին ես. «Դանդառար հեղինակի անունը ես, բարեբախտաբար, ժամանակը պահել է մեզ համար: Այդ երգի հեղինակը հայտնի է թե ով է — Բարսեղ ոմն իմաստուն» (Դիվան, էջ 108):

Աշխատելով ապացուցել «Գանգատ»-ի Ֆրիկի ստեղծագործությունը լինելը, նա մատնացույց է անում հետևյալ փաստերը.

ա) Ֆրիկը սովորություն ունի իր տաղերում հիշատակել իր անունը, իսկ «Գանգատ»-ում այդպիսի հիշատակություն չկա:

բ) «Գանգատ»-ը Ֆրիկինը լինել չի կարող, քանի որ նրա երկու ընդօրինակությունների խորագրում հեղինակ է հիշված Բարսեղը:

գ) Նույն ընդօրինակությունների տեքստում ևս Բարսեղը հիշվում է որպես «Գանգատ»-ի հեղինակ:

դ) Եվ, վերջապես, «Գանգատ»-ը, որոշ ձևազրկում, վերնագրված է «Գանգատ». բանի Ֆրիկ գրելը: Այս վերնագրից հրատարակիչը եղբակացում է, որ ընդօրինակողը այդ տեքստը համարել է ո՛չ թե Ֆրիկինը, այլ վերցված մի ձևազրկից, որը Ֆրիկի տաղերի ժողովածուն է, իսկ այդ ժողովածուում ընդօրինակվել կարող էին ո՛չ միայն Ֆրիկի, այլ՝ ուրիշ հեղինակների գործեր ևս:

Տիրալը արքեպիսկոպոսի քերած փաստարկները, մեր կարծիքով, հիմնավոր չեն:

Նախ՝ «Գանգատ»-ը, ժողովրդի մեջ, ժամանակի մտավորական առաջադեմ շրջաններում տարածված և դնահատված մի երկ է եղել, այն խմբագրվել և մշակվել է մի քանի անգամ: Համենայն դեպս, նրա մշակող հեղինակներից երեքը, անուններով, մեղ հայտնի են՝ Ֆրիկը, Բարսեղը և Հովհաննես Սարկավազը: Եթե մենք նկատի չունենանք այս երեք հեղինակների յուրաքանչյուրի խառնվածքը, նրանց սիրած թեման, արտահայտվելու արվեստը և այլն, այն դեպքում մենք կզօվարանանք ճիշտ որոշել նրա հեղինակը: Ձևական մոտեցման դեպքում մենք ավելի հիմք ունենք «Գանգատ»-ը վերագրելու Հովհաննես Սարկավազին, քան թե մյուս երկու հեղինակներին: Զէ՛ որ Հովհաննես Սարկավազն ավելի վաղ է ապրել, քան Ֆրիկը և Բարսեղը (Հովհաննես Սարկավազի մահվան տարին (1129), հավանական է, Ֆրիկը դեռ չէր ծնված): Զէ՛ որ «Գանգատ»-ի ձևազրկից մեկը շատ պարզ վերնագրված է. «Գանգատ առ Քրիստոս յաղագս տարբե վիճակաց մեծատուն և աղհատի Սառկավազ վարդապետի ասացելալ» (Դիվան, էջ 541): Սակայն մենք գտնում ենք, որ «Գանգատ»-ը Հովհաննեսի ստեղծագործությունը չէ, որովհետև նրա լեզուն, ոճը, շարադրության եղանակը, բանաստեղծության ձևը միանգամայն այլ են: Անշուշտ թյուրիմացությունը տեղի է ունեցել հետևյալ ձևով՝ Հովհաննես անունով մեկը յուրովի մշակել է «Գանգատ»-ի տեքստը և իր անունը դրել նրա վրա, իսկ նրա արտագրող գրիչներից մեկը, ցանկանալով ճշտել Հովհաննեսի ո՛վ լինելը,

սխալմամբ դրել է Սարկավազի մականունը և քաղաքացիություն տվել իր սխալին:

Մեր կարծիքով, նույնը պիտի պատահած լինի և Բարսեղի հետ: Բոլոր դեպքերում, մենք Բարսեղին համարում ենք «Գանգատ»-ի մշակող հեղինակներից մեկը: Հավանական է թյուրիմացությունը ստեղծվել է հետևյալ ձևով՝ Բարսեղը «Գանգատ»-ի մշակած տեքստում մտցրել է և իր անունը այն ձևով, ինչ ձևով հասել է մեզ.

«Ա՛մ, ցույց թէ ո՛րմ է պիտանի,

Որ Բարսեղս այլ գիտուն լինի...»:

(Դիվան, Հավելվածի տաղ 2, տող 59—60):

Իսկ ընդօրինակող գրիչը կարդալով այս անունը, տեհրածելու է համարել տաղի վերնագրում ևս գնել հեղինակի անունը՝ «Վարսեղի ոմն մաբղուս կամ Վարսղի ոմն զիտականի» ձևով: (Անվիճելի է, որ վերնագրի Բարսեղ անվան դնողը գրիչն է):

Հայկական ՍՍՏՌ Պետական մատենադարանում մենք ունենք «Բանի Ֆրիկ գրելը» խորագրի ունեցող մի ձևազրկի փոփոխակը, որ խախտում է Տիրալը արքեպիսկոպոսի վերև լրված կովաններից մյուսը ևս: Հայկական ՍՍՏՌ Պետական մատենադարանի № 7703 ձևազրկում Ֆրիկի «Գանգատ»-ը վերնագրված է՝ «Բանի Ֆրիկ գրեցն», որից պարզ երևում է, որ ընդօրինակողն ուղեցել է տեսլ ո՛չ թե Ֆրիկի տաղերը պարունակող ձևազրկից՝ «Ֆրիկ գրեցն», այլ Ֆրիկի ստեղծագործություններից՝ «Ֆրիկ գրեցն»:

§ 13. Ո՛վ է Ֆրիկի «Գանգատ»-ի Հայկական ՍՍՏՌ Պետական մատենադարանի № 3595 ձևազրկի տեքստը մշակող Բարսեղը: Մեղ հավանական է թվում, որ նա լինի Կիլիկիայի խորին կոչվող առապատի գրիչ Բարսեղ քահանան, որի ընդօրինակած մի ձևազրկը, իր լավածո գեղեցիկ հիշատակարանով, մեղ է հասել և այժմ Հայկական ՍՍՏՌ Պետական մատենադարանի սեփականությունն է կազմում (դրանցված է № 1418-ի տակ, ունի 1298 թվականի գրություն):

Չափածո այդ հիշատակարանը, իր տեսակով, բացառիկ մի ստեղծագործություն է, նա մեղ հասած միակ հիշատակարանն է, որի մեջ գրիչը անողորմ և համարձակ քննադատում է իր ժամանակի քաղաքական և եկեղեցական երկու խոշոր պետերին՝ թագավորին և կաթողիկոսին: Նա թագավորին՝ Սմբատին, Հեթումի եղբորը (1296—1298 թ.թ.) համարում է անգութ դեպի աղքատները, անողորմ դեպի վտանգվածները, անփույթ դեպի երկրի վիճակը, շահավաճառ մի անձ: Հիշատակարանում կարդում ենք.

1. Այս հիշատակարանից փոքրիկ քաղվածքներ մենք հրատարակել ենք մեր «Հայկական պատմագրաֆիա» աշխատության մեջ (էջ 178—179):

Այլ և մեղաց մերոց չարի
Գոլով արգել յամենայնի,
Ի գլխոյն սկսեալ լինի,
Իւ յարքայէն մերոյս ազգի:
Պատահեալ անձն իմ եղկելի
Նմա յաւտ արա տէրունի,
Յայլակերպման աւուրն մեծի,
Ձանձաւաւաւ վարս նորա տեսի,
Եւ անդ վայր մի ես ողբացի:
Զի որ նմա (թագաւորին — Ա. Ա.) հոգը
պիտանի,

Անփոյթ առնէր յամենայնի,
Եւ որ չէր նմա յարգի,
Միշտ յայն փութալի զի հպեցի,
Եկեղեցի հրկէզ լինի,
Եւ քրիստոնեայ գերի վարի,
Նա ոչ ցաւ, ոչ հոգ լինի,
Ո՛չ ի փրկել լին փոյթ ունի:
Աղքատաց անգուց լինի,
Վտանգելոց ո՛չ ողորմի,
Շահավաճաւ յաւէտ լինի,
Եւ ընդ այլոյ բարիս չարի,
Է զոր աշաւք իմաւք տեսի,
Եւ որ զուկամբ ես յսեցի...»

Հիշատակագիրը ժամանակակից կաթողիկոսին՝ Գրիգոր Անավարզեցուն (1293—1307 թ. թ.) համարում է օսոտակասպաս, «հացկատակ», թագավորի՝ «կամակատար», իսկ կաթողիկոսի «խրայիւնեաներին» օլորը և լկտի»:

Բերենք այս հատվածը եւս.
«Զի հայրապետն որ յիշեցի,
Անփոյթ առնէ զեկեղեցի,
Հաւատոյ խնամ շտանի,
Ոչ շար կարգաց թե խել պիտի,
Գայթակղութեան պատճառ լինի,
Զթագաւորին կամս հաճի,
Յանգիմանել րնա՛ւ շլաւարի,
Զի ի փառաց մի՛ զրկեցի:
Սոստակասպասք զոյ արքայի,
Եւ հացկատակք յամենայնի,
Առաջնորդ և վարդապետ՝
Թագաւորին կամաւք վարի,
Յանգիմանել ոք շլաւարի,
Եւ ո՛չ ի յելս բանի հայի:
Եւ նա նոցին հետեւեցի,
Որ կարծեցեալ սիւնըն կոյի:
Հայրապետական գահի պատուի,
Եւ այդ հոգոց րնա՛ւ փոյթ շտանի,
Եւ որ իւրն են րնտանի,

Լիբբք և լկաթք յամենայնի...»

Հիշատակագիրը միաժամանակ զգուշացնում է դալիք սերունդին, որ նրանք զգաստան են չպահեն նման պետեր.

«Ի բաղմաց սուղ որ յիշեցի,
Փոքր վեհեցն աստ գրեցի,
Բանիս ընթացը կընքեցի,
Եւ լուսեմաւք եզր կայցի:
Զի մի՛ յանբաւըս յառաջի,

Կամ սաստկագի՛նքն յիշեցի,
Այդ զոր աստ գրեալ լինի,
Զկնի եկեղեցի խըրատ լինի:
Զի թե չէաք մեք արժանի՝
Զէաք հանդիպեալ այսմ արքայի,
Ոչ փառամոլ առաջնորդի,
Կամ հացկատակ վարդապետի:
Այդ ըստ գործոց մերոց չարի՝
Զհանդիպեցաք արանց բարի,
Այդ զուք որ գայք ըզմեր կրնի՝
Կացէք ըզգոյշ ձերում գործի...»

Շնտաքքիւր են նաև հիշատակարանի այլ մասերը, որոնք վերաբերում են իրեն՝ Բարսեղի անձնավորութեանը, Հիշատակարանից հրեւում է, որ Բարսեղը հայ գրչութեան սիրահար մեկն է.

«Զի հոգւովս եմ եղկելի,
Մարմինս ցաւաւք միշտ վարակի,
Փափագեմ ամէն տառի՝
Աղքատութիւնս ոչ հասանի:
Վերծանութեան հետեւի՝
Նա՛ գրչութեան սէրն սալպի,
Քանքար չգոյր զի վարձի՝
Մատամբս քանի՛ ես գրէի...»

Եւ գրչութեան այդ աշխատանքի ընթացքում հիշատակագիրը երբեմն հոստեանութեան մեջ է ընկել.

«Յայս միջոցին անձն իմ կոծի,
Եւ վարանի յամենայնի՝
Թե զի՛նչ աղուտ ինձ յայս քանի,
Թե ընթեռնուլ ինձ ոչ լինի...»

Սակայն նկատի ունենալով, որ այդ ձեռագիրը բարի հիշատակ է թողնում դալիք սերունդներին, հիշատակագիրն իրեն հուսադրում է.

«Մի յոյս միայն գերոյս թողի,
Իե եկելոց վայել լինի:
Զի թե այս ոչ գոյր առաջի,
Կարծեմ սակաւ գոյր դիւր յերկրի,
Որպէս և ես վարանէի՝
Աւագ թե ընդ վայր քանս լինի:
Եւ ամենայն որ զայս խորհի,
Սակաւ տանի հոգք այս գործի,
Այդ ըստ յուսոյն որ կայ առչի,
Միշտ յաւժարեալ գիրս ոք ստասցի:
Զի տէրունի րանն յցցի՝

Այլոց վաստակ այլում լինի,
Եւ արդ ի յայս յուսըս յեցեալ՝
Անձն իմ եղկելի...»

Մենք անհրաժեշտ համարեցինք փոքր ինչ երկար մեջբերումներ անել Բարսեղ գրչի հիշատակարանից, ցանկանալով մեր բանասերների ուշադրութիւնը հրավիրել մեր այս տաղանդավոր հիշատակագրի վրա, որի առաջադրած սոցիալական համարձակ խնդիրները որոշ կամուրջ են ձգում դիպի Յրիկի «Կանգնաւոր»:

Մենք չենք պնդում, որ Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 1418 ձեռագրի գրիչ Բարսեղը, անվիճելի, Ֆրիկի Ռան-դատը մշակող հեղինակն է, բայց անհավանական էս ոչինչ չենք տեսնում: Համենայն դեպս, ցանկալի էր, որ Ֆրիկով զբաղվող մեր հայագետները անուշադրությամբ չանցնեն Բարսեղ գրչի կողքով, որպես նրա Ռան-դատը մշակողի և նրա հետևողությամբ սոցիալական հակասությունները տեսնողի և բնագատողի:

§ 14. Մանր այս դիտողություններից և լրացումներից հետո, մենք ուզում ենք նորից վերադառնալ Տիրայր արքեպիսկոպոսի Ֆրիկի «Դիվանի» հրատարակության արժեքա-

վորմանը և այդ առթիվ ուզում ենք հիշել մեր հանձարեղ տաղերգուի՝ Ֆրիկի հետևյալ սոդերը:

«Զիմ միաբա լողնորդ արի, 'ի ի ծովու վասն ա'յն մարգարտին համար, որ

ծովու յատակըն լինիս:
(Դիվան, տաղ ԻԳ, սող 55—56):

Ֆրիկի «Դիվանի» հրատարակիչը, իր ուրախ տաղերգուի օրինակով, մեր մատենագրական ծովի հատակից լույս աշխարհ է հանել հնություն փոշով պատած այդ մարգարիտը, և հանել է ո'չ թե մեկը, այլ տասնյակներ, այդ մարգարիտներից նա մի գեղեցիկ շարան է կազմել և նրանով զարդարել միջնադարյան հայ մատենագրությունը:

ՀԱՄԱՌՈՏ ԲԻՐԼԻՌԴԱՅԻԱ ՀԱՅԱԿԱՆ ՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ՁԵՌՈՂԲԵՐՈՒՄ ԵՂԱՍ ՖՐԻԿԻ ՏՈՂԵՐԻ*

№ 33 (3), թ. 140ր. «Ֆորիկան ասացեալ է ողբ:— Ով որ սիրէ կուք ու կըթխայ...»: Ունի 17-րդ դարի գրչություն: Գրիչն է Հովսեփի որդի Հովհաննեսը: (Դիվան, տաղ ԺԲ):

№ 1661 (1981), թ. 109ա—110ա. անխորագիր: «Յառաջն որ յաշխարհս եկի՝ հանց ըստակ ի պինդ հայելի...»: Ընդօրինակել է Պետրոս արեղան 1594 թվականին, հավանական է Թոխատում: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 1736 (1766), թ. 2ր, չորս տող միայն. «Յորժամ յարխն ի յետ քակի...»: Ընդօրինակված է 17-րդ դարում: (Դիվան, տաղ ԻԷ):

№ 2127 (2139), թ. 132ա—133ա. «Ողբ վասն անձին և վասն ճողոյ:— Յառաջն որ յաշխարհս եկի...»: Ընդօրինակել է Հովսեփի որդի 17-րդ դարում: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 2236 (2253), թ. 447ր—448ա. «Ողբ Ենգեյոց ասացեալ է:— Յառաջն որ յաշխարհս եկի...»: Ընդօրինակել է Լեւոնյան գրիչը 18-րդ դարում, հավանական է նրուաղեմում: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 2394, թ. 176ա—179ա. «Տաղ վասն Աղամայ:— Կուզե՛ս որ ազիկ կենաս...»: Ընդօրինակված է 17-րդ դարում: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 2482, թ. 123ա—124ա. անխորագիր: «Յառաջն որ աշխարհ եկի...»: 16—17-րդ դարի ընդօրինակություն է: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 2676, թ. 177ա—178ա. «Վասն բախտին և ապիտին ասացեալ է ի Ֆոկայ...»: Թերի 18-րդ դարի ընդօրինակություն է: (Դիվան, տաղ ԻԷ):

Նույն ձեռագրում, թ. 178ր—180ա. «Ֆրկան ասացեալ է:— Պատգամն, որ երեստ Աստուած...»: (Դիվան, տաղ ԽԽ):

Նույն ձեռագրում, թ. 185ա—ր. «Ողբ վասն ճողոյ և մարմնի:— Յառաջն որ յաշխարհս եկի...»: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 2939, թ. 440ա—բ. «Ողբ ի վերայ մարդկային ազգիս՝ ի ի՛նչ այլ և այլ գալիք կայ բարի և չար:— Նրա խաչեցար վասն աշխարհի...»: Ընդօրինակել է Մարտիրոս Ղրիմեցին 1799 թվականին Նոր-Նախիջևանում: (Դիվան, տաղ Հավելվածի է):

Նույն ձեռագրում, թ. 94ա—95ա. «Երրատ ոգոյշան խաչատուր Կեչառեցոյ ասացեալ կամ Ֆրերկի»: Ֆրիկի տաղն սկսում է «Կամիմ բան մի խոսել...»: (Դիվանի մեջ չի մտել):

№ 3050 (1135), թ. 269ա—բ. «Տաղ Ֆրկան է ասացեալ:— Է՛ր չես երթար...»: Ընդօրինակել է Ղուկաս սարկավազը 1592 թվականին Կարինում: (Դիվան, տաղ ԽԷ):

№ 3081 (281), թ. 137ր—139ա. «Ֆրկան ասացեալ զայս տաղ— Կուզե՛ս որ ազիկ կենաս...»: Ընդօրինակել է Զաքարիա արեղան 1617 թվականին Կաֆայում: (Դիվան, տաղ ԽԶ):

Նույն ձեռագրում, թ. 139ա—140ր. «Ֆրիկ ի նոյն բանն ասացեալ վասն ձորումս արեղան:— Յիշէ զբանն Աւետարանին...»: (Դիվան, տաղ ԽԽ):

* Ներկա բիրլիոգրաֆիան վերցրել ենք Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի Բենատիկ ցուցակից:

№ 3179 (96), թ. 65ա. «Նորին Ֆրկան ասացել է խորոց սրաից:— Անենք ի հուր վառեցար...» Ընդօրինակել է Հովհաննես արքայան 1449 թվականին: (Դիվան, տաղ Բ):

№ 3228 (603), թ. 14բ. «Այլ տաղ ի վերայ հոգոյ:— Ցառաջն որ աշխարհս եկի...» Վերջը պակաս: 19-րդ դարի ընդօրինակություն է: (Դիվան, տաղ հԶ):

№ 3527 (704), թ. 133ա—134ա. «Տաղ Ֆրիկայ է ասացել վասն կենաց բախտի:— Մարդուն որ տալենն ու պուրճն...» 15-րդ դարի ընդօրինակություն է: (Դիվան, տաղ ԻԲ):

№ 3595 (679), թ. 106ա—109ա. «Բարսղի սմեմն մարդոյ կռիւ եղելայ ընդ Աստուծոյ. կու մեղադրէ և յետոյ կու մեղայ Աստուծոյ:— Աստուած արդար և յիրաւի...» (Վերնագիրը սկզբում գրված է եղել կարմրագեղով, հետագայում խոնացել է և մեկը սև մելանով վերականգնել է այն): Չնայած 15-րդ դարի գրչության ունի: Քրիշն է Հովսեփը (թ. 109ա): (Դիվան, տաղ Հավելվածի ԻԶ):

№ 4296, թ. 76բ—77ա. անխորագիր: «Ցառաջն որ յաշխարհս եկի...» Ընդօրինակված է 1824—1833 թվականներին: (Դիվան, տաղ հԶ):

№ 4370, թ. 1բ. «Ի ձեռնդ Սուրբ Կուսին» տաղի հատվածը, որ մնացել է կտրված կես թերթի վրա: 16-րդ դարի ընդօրինակություն է: (Դիվան, տաղ է, տող 65-ից):

№ 5024 (297), թ. 133բ: Հատված «Ի վերայ չարխիսից» Ընդօրինակել է Կարապետ Էրեցը 1633 թվականին: (Դիվան, տաղ ԻԷ):

№ 5623 (954), թ. 180ա—182ա. անխորագիր: «Ցառաջն որ աշխարհս եկի...» Ընդօրինակել է Հոհան գրիչը 1663 թվականին: (Դիվան, տաղ հԶ):

№ 5985 (1393), թ. 116բ. «Ֆրիկայ ասացել:— Պատգամն որ երեստ Աստուած...» 17-րդ դարի ընդօրինակություն է: (Դիվան, տաղ հԱ):

№ 6974 (1439), թ. 153բ—154ա. անխորագիր: «Ցառաջն որ աշխարհս եկի...» Ընդօրինակել է Քալուստ գրիչը 1553 թվականին: (Դիվան, տաղ հԶ):

№ 7508, թ. 403բ—404ա. «Այլ ողբ ներեցել:— Ցառաջն որ յաշխարհս եկի...» Ընդօրինակել է Ավետիք գալիքը 1670 թվականին: (Դիվան, տաղ հԶ):

№ 7703 (408), թ. 76ա—81բ. «Բանգ ի Ֆրիկ գրոցն:— Աստուած արդար և յիրա-

ւի...» Ընդօրինակված է 1750 թվականին: (Դիվան, տաղ Հավելվածի Զ):

Նույն ձեռագրում, թ. 81բ—83ա. անխորագիր: «Մարդոյ որ տալենն և պուրճն ի ֆալաքն չէ ըզորդած...» (Դիվան, տաղ ԻԲ):

№ 7707 (383), թ. 231ա—232ա. անխորագիր: «Ցառաջն որ աշխարհս եկի...» Ընդօրինակել են Ամիր և Զաքարիա գրիչները 1611 թվականին: (Դիվան, տաղ հԶ):

Նույն ձեռագրում, թ. 239ա—240ա. «Խրատ ողջւն և պիտանի:— Իմ սիրտ, դու վատ մի՛ առնեք...» (Դիվան, տաղ ԻԳ):

Նույն ձեռագրում, թ. 272ա—277ա. «Ֆրիկ ճարտար աշխարհականէ:— Է՛ր անաւրէն և անբարիշտ...» (Դիվան, տաղ Ժ):

№ 7714 (385), թ. 136բ—138ա. «Տաղ Ֆրիկ ասացել:— Է՛ր չես երթար ի միտս ի վայր...» Ընդօրինակված է 1714 թվականին: (Դիվան, տաղ հԶ):

№ 7732, թ. 453ա—բ. «Այլ ողբ ներեցել:— Ցառաջն որ աշխարհս եկի...» Ընդօրինակել է Զաքարիա գրիչը Կաֆայում 1623 թվականին: (Դիվան, տաղ հԶ):

№ 8100 (1296), թ. 157բ—158ա. «Ողբ վասն անցատու աշխարհիս վերայ և մարդու անզոն մեղաւուն:— Է՛ր չես երթար ի միտս ի վայր...» Ընդօրինակված է 1784 թվականին: (Դիվան, տաղ հԶ):

№ 8368 (599), թ. 85ա—86բ. «Ողբ վասն հոգոյ և մարմնոյ:— Ցառաջն որ յաշխարհս եկի...» Ընդօրինակված է 1556 թվականին Կոստանդնուպոլսում: (Դիվան, տաղ հԶ):

№ 8463 (850), թ. 143ա—բ. անխորագիր: «Ցառաջն որ աշխարհս եկի...» Ընդօրինակել է տիրացու Հակոբը 1707 թվականին: (Դիվան, տաղ հԶ):

№ 8605, թ. 119բ—120բ. «Տաղ վասն հոգոյ և մարմնոյ:— Ցառաջն որ աշխարհս եկի...» Ընդօրինակված է 1676 թվականին: (Դիվան, տաղ հԶ):

№ 8968 (599), թ. 78բ—79բ. «Տաղ գեղեցիկ:— Իմ սիրտ, վատն մի՛ լսեք...» Ընդօրինակված է Կոստանդնուպոլսում 1556 թվականին: (Դիվան, տաղ ԻԳ):

Նույն ձեռագրում, թ. 85ա—86բ. «Ողբ վասն հոգոյ և մարմնոյ:— Ցառաջն որ յաշխարհս եկի...» (Դիվան, տաղ հԶ):

Նույն ձեռագրում, թ. 256բ—257բ. «Տաղ Ֆրկան ասացել:— Է՛ր չես երթար ի միտս ի վայր...» (Դիվան, տաղ հԶ):

(ՖՐԻԿԻ ՀԻՄՆԱՆԻ ՄԵՋ ՁՄՏԱՄ ՏԱՂԸ*)

- կամիմ ընդ ձեզ բան մի խօսել անցաւորիս մեղաց վերայ,
 Ով որ լըսէ յօժար սըրտով, թող իմանայ՝ ո՞ւրտի կու գայ,
 Ուղիղ սըրտով ականջ դնէ ու դիր հոգոյն դուռըն յանայ,
 5 Փառաւորի ինքն իր մըտին՝ ականջվընուն անուշ կու դայ,
- Որհնեալ անուն ըմտեղծողին՝ որ հոգուն հանց շնորհք կու տայ,
 Որ կու կարենք հանց բան ասել, որ իմտտնոցըն դուր կու դայ,
 Դա՛ռք Ասաուծոյ անմահ բանին, որ ըզմտացըն լոյս կու տայ,
 Որ մենք պատմենք բանն առակաց աստընուորիս թէ ոնց կու դայ,
- 10 Ծով մ'էր յըխել անցաւորէս, չորեքանկիւն յաժնել է նա,
 Զորսըն ի չորս տեղ զարդարել և չորս անուն առել է նա,
 Զորսէն ի չորս ուղիկ ելել, աստընուորիս բանին վըկայ,
 94բ Զորսըն չորս ցեղ է զարդարել, // ամէն ծաղկանց նըման է նա,
- Մէկն էր դեղին, մէկն էր կարմիր, հետ մէկ մէկի հասել է նա,
 15 Մէկն էր կապուտ, մէկն էր կանանչ, հանց որ իրեն նըման չըկայ,
 Զորեք դիհաց մէկտեղ եկել՝ աստընուորիս բանին վըկայ՝
 Բարձր, ահաւոր ծառ մ'է ելեր, ամէն բանիւ մեղ պիտենայ,
- Երկոտասան ճիւղք է ձըգեր՝ համրով տերեւ տըած նոցա,
 Ամէն ճըղին՝ եռսուն տերեւ, որ արարածք հանգչի ի նա,
 20 Երկու մըկունք առաջ ընկած հանց կու դատին ծառին վըրայ,
 Մէկըն էր սև, մէկն ըսպիտակ, մեղրը բունին ճըղին վըրայ,
- Վերեն դմեղրը կու բանին, աակըն կըռծեն, որ կտորի նա,
 Ըզքաղցրութիւն անկից ցըցնեն, որ կտորիլըն մարդ լիմանայ,
 Վիշապ մի մեծ և ահագին բուն էր զըրել ճըղին վըրայ,
 25 Բերանն ի բաց ու կու հայէր, մարդ որ ընկնէր՝ կուլ աւայր լնա:

* Բնագիրը սխալաշատ ընդօրինակութիւնն է, ուրտի և հարկ համարեցինք որոշ միլիամտութիւններ անել՝ սխալները տեղափոխելով ներքին ծանոթաղբութիւնների մէջ:

2 ընդ ձեզ շի՛

3 իմանայ թէ՛

4 դուռն

5 հոգուն վի՛րս. հոգուն

6 մըտացն

9 աստընուորիս

10 Ծով

10 բխել

10 նա

11 Զորսն

11 դարդարել վի՛րս. զարդարել

11 նա

12 վասնորիս

13 վկայ

13 նա

14 նա

16 դիմաց վի՛րս. դիւաց

16 աստընուորիս

17 Տասերկու վի՛րս. երկոտասան

18 Լըքէր

19 ճըղի

19 հազը

19 ի շի՛

19 նա

21 մէկն

21 մէկըն

22 նա

23 Զքաղցրութիւն

23 ցըցընեն

23 կտորիլս

24 դրէ

25 դեպ

Մարդ մի տեսաւ զքաղցրը մեղրը, խիստ ցանկացաւ ուտել զնա,
 Մըտիկ շարաւ զնա կրօնական մկներն զճիւղքն՝ որ կոխել նա,
 Զանկարծակի ճիւղըն հատաւ, մարդըն անկաւ բունին վերայ,
 Վիշապն վազեց ի դուրս բռնէն, բերանն երաց, կուլ ետ զնա:

- 30 Արդ, Զորիկ, ըզմիտքըդ բա՛ց ու իմացի՛ր զառակս որ կայ,
 Տե՛ս ու քննէ՛՝ թէ՛ զի՛նչ է ծովն ու զի՛նչ է շորս անկիւնն նըմա,
 Կամ զի՛նչ է շորս ուտըն ելել աստընուտրիս բանին վերայ,
 Կամ զի՛նչ է ցեղ, որ զարդարել՝ ամէն ծաղկանց նըման է նա:

- Կամ զի՛նչ էր այն շորս ցեղ վրկայն՝ ի սուտ աստընուտրիս վերայ,
 35 Մէկտեղ եկել են վրկայնն՝ թէ՛ աստընուտրս հանց կու գընայ:
 Կամ զի՛նչ է՝ բարձր, ահաւոր ծառ մի կայ՝ ճըղերն ի հետ նորա,
 Կամ տերեւին, որ համարով երեսնական տըված նոցա:

- Կամ զի՛նչ էր այն երկու մըկունքն, որ հանց դատին ծառին վերայ,
 Կամ զի՛նչ է այն քաղցրը մեղրը, Կամ ի՛նչ՝ կրօնական, որ կոտորի նա:
 40 Կամ ի՛նչ այն մեծ շար վիշապըն, որ բուն էր դրել քնօքին վերայ,
 Կամ ի՛նչ հայիլ՝ որ կու մընայր՝ մարդըն ընկնիլն՝ կուլ տայր զնա:

- Է՛, Զորիկ, բա՛ց ըզբերանըդ ու հասկըցուր զառակս որ կայ,
 Զծովըդ ի վեր բե՛ր ու պատմէ՛, զբանքդ յայտնէ՛ ինչ ցեղ որ կայ,
 Ծովըն է՝ աստընուտրըս ու զարարածըս որ լինենայ:
 45 Շորս անկիւնն է՝ շորս քրնճերն, որ անունով յիշուին նոցա:

- Մէկն արեւելք, մէկն արեւմուտք, մէկըն հարաւ, մէկըն հիւսիս,
 95ա Չորսէն շորս ուտքն որ ելանեն՝ շորս տարերքըն են որ կայ:
 //Մէկըն դեղին, մէկըն կարմիր՝ հոգըն, քամին, որ կու շնչայ,
 Մէկն որ կապուտ, մէկըն՝ կանանչ ջուրն ու հողըն որ լինենայ:

27 զնա շի՛
 27 նայ
 28 Անկարծակի
 29 Վիշապըն
 29 ի դուրս շի՛
 29 ի բաց փոխ. երաց
 29 երես փոխ. ետ
 29 զնայ
 30 զմիտքաւ
 30 զառակըս
 31 նմայ
 32 բանին շի՛
 33 նայ
 35 աստընուտրըս
 35 զընայն
 36 մեր ճըղերն
 36 նորայ
 37 Բարձր ահաւոր, կրկնված տաղի օկգրով
 37 եռանական
 38 հանց շի՛
 39 քաղցր ու

39 նայ
 40 ինչ էր
 40 զնայ բուն փոխ. բուն էր
 41 մնայր
 41 ընկնիլըն
 41 զնայ
 42 զբերանաւ
 43 Զծովու
 43 զբանտ այտնէ եւ պատմէ
 44 Մովն է
 44 զարարածս
 45 նոցայ
 45 յիշվին
 46 յարեւելք
 46 յարեւմուտք
 46 հարաւ
 47 դուտն փոխ. ուտքն
 47 ելանէ
 47 են շի՛

- 50 Զորեք դիհաց որ վըկայել, շորս եղանակս է որ կու գայ՝
Մէկըն աշուն, մէկըն գարուն, ձըմեռն, ամառն որ կու լինայ,
Բարձր, ահաւոր ծառն որ կանգնել՝ բոլոր տարին է մեր վերայ,
Երկոտասան ճիւղքն որ ձըգել՝ իւր ամիսքն է՝ ի հետ նորայ:
- Համրով տերեւ տըված նոցա՝ համրով օրերս որ կու գընայ,
55 Ամէն ճըղքի եռսուն տերեւ՝ ամսոց օրերքն՝ որ կու լինայ,
Մըկունքըն սե ու ըսպիտակ՝ տին ու գիշերն՝ որ կու գընայ,
Մեղրը քաղցրով՝ է՝ սուտ կենցաղս, տակի կըռծելն՝ որ կոտորի նա:
- Վիշապըն մեծ և ահագին՝ մահու օրերս է, որ կու գայ,
Թունն որ դըրել վերայ տակին, գերեզմաններս, որ տի լինայ:
- 60 Մարդն որ տեսաւ ըզքաղցրութիւն, խիստ ցանկացաւ ուտել ըզնա.
Սուտ՝ կենցաղս է, որ կու խարէ, լիմացնելըն՝ թէ մահ վու դայ:
- Հանկարծակի ճիւղքն հատաւ, մարդըն անկաւ ըընին վերայ.
Այն խարին է յաղամորդոյս, որ սատանի րաժին կ'ըլլայ,
Վիշապըն էր վազէր ի դուրս, բերանն երաց, կըլլաւ ըզնա,
- 65 Այն սատանայ է զըժոխոց, որ անդադար ըզմեղ կ'որսայ:
- Մըսկի'ն Զըրիկ ողորմելի, կանգնէ՝ ոտաց, աղօթք արա՝,
Երեսըդ դի'ր վերայ մոխրին ու անդադար ասա՝ մեղայ,
Սիրտըդ ամուր պահէ՝ մեղաց՝ աստընուորիս լի ցանկանայ,
Որ քեզ հասնի Տէրն ու օգնէ ու չի թողու ըզքեզ որսայ:
- 70 Փա՛ռք փառաց Թաղաւորին, որ իմաստնոց դուռն բանայ.
Մեք գոհանամք ողորմածէն, թէ մեղաւորն ոնց կու գընայ,
Որ զանարժանս արժանացոյց և զմեզ փրկել խիստ կու ջանայ.
Փա՛ռք իւր անհաս մարդեղութեանն, յաւիտենից, յայժմ, 'ւ յարակայ:

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2939)

51 լինի
52 կանգնել
53 ամիսն
53 ի շի՛
53 նորայ
56 մըկունքն
57 նա
60 զքաղձրութիւն
60 գնայ
61 յիկամեցելն
61 կու գայ
63 կըլլայ

64 վիշապն
64 ի րաց փոխ. և րաց
64 կըլլաւ
64 գնայ
66 կանգնէ
66 արա՛յ
67 երեստ
67 ասա՛յ
68 Սիրտըս
69 թողուր
72 զանարժանըս
73 յայժմ արակայ





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ ի Մ

1953 թվականի դեկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Հնդկաստանի ակադեմիկոս Հասարակական գործիչներ՝ Խաղաղության համահնդկական կոմիտեի փոխ-նախագահ, Խաղաղության Համաշխարհային հորհրդի անդամ Մադան Մոհանլալ Աթալը և հնդկական գրող Ս. Նապոտերը:

Վանքում հյուրերին պատշաճ ընդունելություն ցուցադրվեց: Հյուրերը հետաքրքրվեցին հնադարյան Տաճարի պատմությամբ, ճարտարապետական կառուցվածքով, մանրանկարչությամբ և այլն: Հյուրերը եղան նաև Տաճարին կից հնագիտական թանգարանում, ուր նրանց հնագիտական արժեքներն պայմանավորված են հնդկական իրերի, սպասանքների և զգեստների մասին մանրամասն բացատրություններ տրվեցին Մայր Աթոռի միահամարյան անդամների կողմից: Վերջում հյուրերը փրենց դոհունակությունն ու շնորհակալությունները հայտնեցին միաբանության կողմից փրենց ցույց տրված ընդունելության և իրենց ստացած լավագույն տպավորությունների համար:

Նույն օրը հյուրերը մեկնեցին Երևան:



Դեկտեմբերի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի արվեստի գործիչների պատգամավորությունը:

Ժամանողների թվումն էին Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի Արվեստի գործերի պետական հանձնաժողովի նախագահի տեղակալ Մարիա Ռեյտմայստերը, Բեռլինի բարձրագույն երաժշտական դպրոցի դիրեկտոր դոկտոր Գեորգ Կնեպլերը, Լայպցիգի Դեմանդատու նվագախմբի զբոսավոր դիրեկտոր, Ազգային մրցանակի լատերենատ պրոֆեսոր Ֆրանց Կոնվիցին, Ֆրեյտիստ պրոֆեսոր Էրվին Միլցկոտը, Ազգա-

յին մրցանակի և Բախի մրցանակի լատերենատ օրգանիստ Ամադեուս Վերերդինկեն, Դրեզդենի պետական օպերայի մենակատարուհի Դորա Չիլեն, կոմպոզիտոր Դյունտեր Կորանը և դաշնակահար Դիտեր Յիսլինը:

Վանքում պատգամավորության անդամները հետաքրքրվեցին հնադարյան Տաճարի պատմությամբ, ճարտարապետական կառուցվածքով, մանրանկարչությամբ և այլն, եղան Տաճարի հնագիտական-եկեղեցական թանգարանում, ուր դիտեցին հազվագյուտ հնադարյան եկեղեցական սպասներ, զգեստներ և այլ իրեր: Հյուրերին տեղեկացում և սիրով մանրակրկիտ բացատրություններ էին տալիս ավագ լուսարար բարձրագույն Ս. Գեորգ վարդապետ Վաթյանը և միաբանության ալ անդամները:

Հյուրերը ծանոթացան հայկական խաղաղությունից հետ և հետաքրքիր բացատրություններ լսեցին նրա մասին:

Վերջում հյուրերը եղան Վեհարանում, ուր նրանց ընդունեց գերաշնորհ Ս. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը: Սրբազան հայրը մտերիմ զրույց տնեցավ պատգամավորության անդամների հետ և ցույց տվեց արվեստի ալ գեղեցիկ նմուշները, որ պահվում են Վեհարանում: Մեկնեցուց առաջ հյուրերը իրենց շնորհակալությունները հայտնեցին միաբանության կողմից իրենց ցույց տրված ընդունելության և իրենց ստացած լավագույն տպավորությունների համար:



Հունվարի 5-ին, Ս. Մենդյան ճաղալույցի երեկոյան, հավատացյալների խումբն արգմտության ներկայությամբ մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ: Պատարագում էր բարձրագույն Ս. Գեորգ վարդապետ Վաթյանը: Սուրբ պատարագից առաջ տեղի ունեցան Մենդյան ճաղալույցի երեկոյան նվիր-

ված հանդիսակատարությունները Պատարագի ավարտից հետո ատյանում, ամբողջ միաբանության մասնակցությամբ, կրգվեց ժողովուրդ մեծ սքանչելի շարականը և ապա միաբաններից ավագագույնը՝ գերաշնորհ Տ. Վահան Արքեպիսկոպոս Կոստանյանը, հավատացյալ ժողովրդին շնորհավարեց Փրկչի Ս. Մենդյան և Աստվածահայտնության տոնի կապակցությամբ Կրոնական արարողությունների վերջանալուց հետո, մինչև սուրճերի բաց էին Տաճարի դռները և հավատացյալների նորանոր խմբեր էին այցելում Տաճար:



Հունվարի 6-ին, Ս. Մենդյան տոնի օրը, Մայր Տաճարը լեւի-լեցում էր հավատացյալների բազմությամբ: Երաժշտու հնարավորություն չկար. եկել էին (չնայած սաստիկ ձյունին և սառնամանիքին) շրջակա դպրոցներից, քաղաքներից. վանքի բակն անգամ լիքն էր ժողովրդով: Օրվա պատարագին էր քննաշնորհ Տ. Ասհակ Կպիսկոպոսը: Սուրբ պատարագի ավարտից հետո տեղի ունեցան Ջրօրհնյաց հանդեսի գեղեցիկ ու խորհրդավոր արարողությունները: Հանդիսադիրն էր գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը:

Սրբազանը կարդում է Ս. Բարսեղի աղոթքը, որից հետո Ս. Տաճարի հնաշարյան կամարները թնդում են «Ո՛վ զարմանալի» և «Կյսօր ձայն» հրաշալի տաղերի ելեւելներից: Ապա խաչը ջուրն են զցում: Այնուհետև Եպիսկոպոսը մյուստնաթափ աղամբիով ջուրը տառնագրելուց հետո, «Առաքելուց աղանդու» շարականի վսեմ հնչյուն-

ների տակ, մյուստնաթափ աղամբուց հոսող Սրբաշույս Մյուստնի կաթիլներով սրբազոր-ծում է ջուրը:

Ավարտվում է Ջրօրհնյաց հանդեսը: Հավատացյալները ցնծության մեջ են. բազմությունը անկոծկում, հորձանք է տալիս Տանարում, ամեն ոք ցանկանում է ժամ առաջ ձեռք բերել օրհնյալ ջուրը, տրով այդ օրը խորհրդանշվում է Աստվածորդու խոնարհարար Հորդանան իջնելը և մկրտվելը Մեծ Կարապետից: Ամբողջ օրը հավատացյալների բազմությունից չի դատարկվում Տաճարը: Հայ հավատացյալի հոգու թերկրության ու խնդության մեծ տոնն է այսօր, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնում է Փրկչի Ս. Մենդյան և Մկրտության վսեմ խորհուրդը:

Ենորհավոր Ս. Մնունդ և Մկրտություն:



Մյուս օրը, հունվարի 7-ին, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ մեռելոց հիշատակին: Օրվա պատարագին էր բարեկրոն Տ. Հակոբ քահանա: Հայերսանը, Սուրբ պատարագի ավարտից հետո տեղի ունեցան հոգեհանգստյան արարողություններ՝ «վասն համօրէն ննջեցելոց»:



Ամանորի և Ս. Մենդյան տոնների կապակցությամբ Ս. Էջմիածնի Հոգեոր Ճեմարանի ուսանողությունը և դասախոսական կազմը արձակուրդ ստացան, Ուսանողները մեկնեցին իրենց տները, ծնողների մոտ հանգրստանալու: Հունվարի 11-ից կանոնավորապես կսկսվեն Հոգեոր Ճեմարանի երկրորդ կիսամյակի դասերը:





ՎԱԶԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍԹԱՆ

(Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանի
9 լսարանի ուսանող)

Մ Ե Ր Վ Ա Ն Ք Ե Ր Ը

Ո՛ւր էլ որ լինես ամբողջ աշխարհում,
Ո՛ւր որ ապրել է մի ցեղ մարդկային,
Քե որ չգտնես այնտեղ հայ մարդուն,
Մի վանճ կգտնես՝ հայ գիրք հակտին:

Աստղերի նման հայերն են ցրվել,
Ցրվել, շաղ եկել շորս կողմն աշխարհի,
Ու ումանձ լացով ուրիշի ձուլվել՝
Երենց վանքերն են թողել այսօրօրի:

Ու քարծուներում գյուղ ու քաղաքի,
Հայքց աշխարհի ամեն մի հովտում,
Կոթողներ ունենձ հանճարեղ մաքի,
Որ դեռ լալիս են ու դեռ աղոթում:

Կարծես անթառամ ծաղիկներ լինեն,
Լեռների վրա, վիհերի եզրին,
Որոնց գմբեքներն՝ ավերակ քե շեն՝
Բույն են հալածված աղավենիներին:

Մարդկային ձեռքի հետքեր չեն կարծես,
Ծնունդ են ձեռքի մի աստվածային,
Նրանք գիտության բերդեր են պես-պես՝
Վանան են եղել իմ ժողովրդին:

Փռկության, հույսի ու լույսի բերդեր,
Մեր մշակույթի ճեղքներն անշեջ,
Նրանք են տվել միացում ու սեր,
Եվ անմահ ոգին են շնչել մեր մեջ:

Նրանք են մեր սուրբ լեզուն մայրենի,
Նրանց զանգերի ղողանջն՝ ահագանգ՝
Որ շմռանանք մեր հողն հայրենի՝
Արքայություն սրբոցն՝ համայն լուսնի տակ:

Ինչի՞նչ էլ լինենք իրարից հեռու,
Ու ցրված մեզնի աշխարհում նսեմ,
Դարձյալ անմահ է կապը հայ Ոգու՝
Հայրենի սերն ու հավատը վսեմ:

Ու ամեն մի վանք՝ մի ըմբոստ ոգի,
Մի Մասիս սառ է ամեն մի գմբեթ,
Մի վառ կանթել է հույս ու տենչանքի
Ամեն մի հայի սրտի մեջ հավետ:

Որպես խոր հավատ, մթնում լայս, փառոս,
Որպես հայ հոգի՜՝ իրա շղթայված,
Կանգուն կմնան գմբեթներն հայոց,
Մասիսների պես հավերժին զամված:





ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՖԻԶԻԱԼՈՐԳԱՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ.— Երեւանը ոչ միայն Հայաստանի, այլև Սովետական Միության կուլտուրական խոշոր կենտրոններից մեկն է։ Այսօր հաճախ հրավիրվում են անգրկոմկապան և համաժողովրդական նշանակություն ունեցող գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, հավաքություններ։

Անցյալ դեկտեմբերի սկզբներին տեղի ունեցավ ֆիզիոլոգների գիտական նստաշրջան (սեսիա), նվիրված բարձր նյարդային գործունեության հարցերին։ Նստաշրջանը հրավիրված էր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտի և ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիական լաբորատորիայի կողմից։ Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էին Մոսկվայի և Երևանի մեծ թվով գիտնականներ։

Բացելով նիստը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գ. Բունիաթյանը նշեց համատեղ նստաշրջանի նշանակությունը Երևանի և Մոսկվայի գիտնականների փոխադարձ ստեղծագործական կապի հետագա ամրացման գործում։ Մի քանի օր տեղի աշխատանքների ընթացքում լավեցին 15 գեկուլցիստների նվիրված գանգառնեղի ֆիզիոլոգիայի ընդհանուր և մասնակի հարցերին, Հիմնական գեկուցիստով հանդես եկավ ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիական լաբորատորիայի վարիչ, ռուս հռչակավոր գիտնական-ֆիզիոլոգ Ի. Պավլովի սաղանդակով աշակերտ Նվրասա Հասրաթյանը։ Մյուս գեկուցիստները կարողացան Երևանի և Մոսկվայի գիտնականները։

Նստաշրջանը մեծ հետաքրքրություն առաջ բերեց Երևանի գիտական հասարակայնությանը շրջաններում և կարևոր նշանակություն ունեցավ ֆիզիոլոգիական գիտության հետագա զարգացման համար Հայաստանում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ.— Հայաստանի Պետական թանգարանը, որն այժմ գտնվում է Գիտությունների ակադեմիայի իրավասության տակ, ամենօրյա հարստանում է։ Սկսվել է թանգարանի

վերականգնումը և ընդարձակումը։ Գլխում, Աշտարակում, Արթիկում, Գառնիում կատարվող Վնագիտական պեղումների շնորհիվ թանգարանի պատմական քաղաքի ստացել է բազմաթիվ նոր նմուշներ, Գրանցքով կան ապակյա մի շարք հետաքրքիր իրեր, որոնք վկայում են, որ դեռևս 17-րդ դարում Հայաստանում գոյություն է ունեցել ապակու արտադրություն։ Ստացված են նաև մեծ քանակությամբ պղնձյա, արծաթե, բրոնզե և հախճապակյա իրեր։ Նմուշների ընդհանուր քանակը ավելացել է մի քանի հազարով։

Թանգարանի նորագույն քաղաքի համարվում է մի ամբողջ շարք նոր նմուշներով, որոնք արտացոլում են Հայաստանի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի զարգացումը սովետական իշխանության տարիներին։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՑՈՒՂԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ.— Սովետական Հայաստանի կառավարությունը մշտապես հաջատար է գյուղական վայրերի քակելով խնամքով պահպանել և կատարմամբ, ներկայումս ռեսպուբլիկայի գյուղերում գործում են 864 ակումբներ, 308 զրադարաններ, բազմաթիվ կինո-թատրոններ, Բաղինո մոտոց և գործել ամենահեռավոր լեռնային գյուղերում։ Միայն 1953 թվականի ընթացքում ռադիոցանցը ընդարձակվել է լուրս հազար կետով։ Գյուղական զրադարանների դրքերի ընդհանուր թիվը համարվում է շուրջ մեկ և կես միլիոն հատորի, նրանք ժամանակին ստանում են Երևանում հրատարակվող բոլոր նոր գրքերը։ Այժմ լկա ռեսպուբլիկայում այնպիսի դպրոց, որի թանկիչները լատանան մի քանի տասնյակ, իսկ խոշոր գյուղերը՝ մի քանի հարյուր օրինակ թերթեր և այլ պարբերականներ։

ՀԱՄԱՄԱՐՈՒԹՅՆԱԿԱՆ ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ-ԵՐԿՐԱՑԱՓԱԿԱՆ (ГЕОДЕЗИЯ) ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՐԱԾԱՆՄԱՌՆԵ ՈՐԵՎԱՆՈՒՄ.— Անցյալ դեկտեմբերի կեսերին Երևանում տեղի ունեցավ Բյուրականի աստղագիտության ռադիոտեղեկների, միջնակարգ ուսուցիչների և բարձրագույն ուսումնական հաստատությունների աստղագիտության ու երկրաչափական առարկաների

դասաւորներին և դասախօսներին ընդհանուր ժողովի մընութիւնը անուշիկ չափով ընդհանրացնելու արագացնելու և երկրաչափական ընկերութեան հաշիւական քաժանութեան ստեղծելու հարցը, Ընկերութեան խնդիրներին մասին զեկուցեց Հայկական ՍՍՐ Փիտոլոթիներին ակադեմիայի պրեզիդէնտ, ակադեմիքոս Վ. Համբարձումյանը, ժողովը ընտրեց քաժանութեան խորհուրդը, որի նախագահ ընտրվեց պատվարժան դիտնական Վ. Համբարձումյանը:

Ընկերութեան իր առաջ խնդիր է դրել՝ ընկերութեան մէջ տարածել աստղագիտական-երկրաչափական գիտելիքներ, հրատարակել այդ հարցերին վերաբերող հանրամատչելի գիտական քրոշյութներ և նպատակել աստղագիտութեան ու երկրաչափութեան դասավանդման բարելաւմանը ռեսպուբլիկայի դպրոցներում ու քարձրագոյն ուսումնական հաստատութիւններում:

ԻՆՏԵՆՍԻՎ ԱՐՎԵՍՏԱԳՆՏՆԵՐ.— Սովետական Հայաստանում շատ կան ինքնուսարկնատագնաներ՝ տաղանդավոր ուկրեյներ, գրեզագրողներ, փորագրիչներ, քարտաշներ, քանդակագործներ, ասեղնագործներ, նկարիչներ: Նրանց բոլորին համախմբում, ուղղութիւն և զգուշութիւն է ցույց տալիս ժողովրդական ստեղծագործութեան ռեսպուբլիկական տունը:

Վերջերս Տոժի ձեռք բերեց ինքնուսարկնատագնաների մի շարք նոր գործեր: Այդ գործերի թիւում են հայտնի քանդակագործ-վարպետ Հարութիւն Տարակյանի նոր գործը: Վարպետը քաղաքիկ հմտութեամբ և ճաշակով գոյնզգոյն թելերով գործել է ինչ մէկ ժողովրդի առաջնորդ Մառ Յիւզ-գունի նկարը՝ երկրպագ լինակա՛ն մանրանկարչութեան նմուշներով:

Մյուս գործերից աչքի է ընկնում ինքնուսարկնատագնոր Արտաշէս Պետրոսյանի նախընտրած թանդակը, որը պատրաստված է ֆիլդիտ կոշիկի քարից և պատկերում է մրցելու ու զինով լինելու՝ իր զավթով: Այդ թանդակը աստղագիտական արվեստագետի հինգերորդ գործն է:

Քարտաշ-վարպետ Զովսեփ Մարգարյանը ներկայացրել է Մովսէս Խորենացու, Միքայել Նալբանդյանի և Զովհաննէս Թումանյանի կիսանդրիները՝ պատրաստված քաց մարմնագոյն քարից: Վարպետի աշխատանքը անուշիկ մէկ արժէք է ստանում այն պատճառով, որ նա կիսանդրիները պատրաստել է առանց կտրիւնների:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԵՏԱԿԱՆ ԳԵՏՆԷԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԵՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.— Անցյալ դեկտեմբերին նրանում տեղի ունեցավ Քաղաքական և դիտական գիտելիքների տարածման Հայկական ընկերութեան երրորդ համագումարը:

1953 թվականի ընթացքում ընկերութեան անդամներին միջոցով ռեսպուբլիկայի քաղաքներում և գյուղերում կարգապահել է շուրջ 9500 դասախօսութեան քաղաքական, գիտական, հասարակական, տնտեսագիտական, գրական և այլ հարցերի մասին: Համագումարն ընտրեց պատգամավորներ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման Համախմբական ընկերութեան ներկորդ համագումարի համար:

ԸՆԾԱՔՔԻՐ ՀԱՄԱՐԳ.— Դեկտեմբերի 25-ին, 26-ին և 27-ին նրանում, Հայֆիշարմիայի համերգային մէկ դահլիճում կատարվեց նորվեգական հայկավոր գրամատուրգ Լենրիկ Իքսենի և ակաւմոր երաժշտագետ էդ. Գրեդի Պլոնտո գրական-երաժշտական հայտնի ստեղծագործութեանը, Համախմբական քաղաքիկ հաշտութեամբ և կարևոր իրադարձութեան հանդիսացան նրանի երաժշտական կյանքում:

Լենրիկ Իքսենը իր հայտնի աշխատութեան համար հիմք է ընդունել նորվեգական ժողովրդական հերթերից մեկը և սուր խարաղանման է ներթափել իր ժամանակակից հասարակութեան ներկայացուցիչներին համարելով: Ու քարայկան ունշուողները Պլոնտոյի երաժշտութեան մէջ, որը գրել է էդ. Գրեդը, իր արտայայտման է գտել նորվեգական ժողովրդական հարուստ մեղօր, նրա ազգային յուրահատկութեան, խորը հուզականութեանը:

«Պէր Գլոնտոյի կատարմանը մասնակցում էին Մոսկվայի և Նրանի հայտնի արվեստագետները, Հայֆիշարմիայի երգիչիկ խումբը և սիմֆոնիկ նվագախումբը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՏԱՐԱԿԱՆ ՅՈՒՑԱԿԱՆ ԴԵՐՈՒՄ.— Դեկտեմբերի 27-ին Պետական պատկերասրահում քաղվեց Հայաստանի նկարիչների 1953 թվականի ցուցահանդեսը, Յուցահանդեսում ներկայացված է մոտ 400 գործ՝ յուզանկարներ, քանդակներ, գրաֆիկ աշխատութիւններ, կիրառական արվեստի նմուշներ: Անանաւոր արվեստագետների նոր գործերի հետ միասին լայն տեղ է տրված ներկայացուցիչներին, որոնք իրենց վրձինի համար նշուք են ընտրել հայրենի երկրի ընկերային, կուլտուրական վերելքը, մարդկանց ստեղծագործական առօրյան:

Յուցահանդեսը մեծ հետաքրքրութեան է առաջ բերել: Ամեն օր սրահներում կարելի է հանդիպել քաղաքիկ այցելուներին:

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ 30 ՏԱՐԻՆ.— Լրացավ նրանի կոմիտայի անվան Պետական կոնսերվատորիայի գոյութեան 30 տարին: Այդ նշանակալից տարեթիւը Սովետական Հայաստանի հասարակարկութեանը նշեց յերմեռնը: Հայֆիշարմիայի համերգային մէկ դահլիճում այդ առթիւ տեղի ունեցավ հանդիսավոր երեկո: Կոնսերվատորիայի գործունէութեան մասին զեկուցումով հանդես եկավ ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Գ. Բուգայանը:

Պետական կոնսերվատորիան դարձել է Սովետական Հայաստանի կուլտուրական խոշորագոյն, զգալիներից մեկը, որտեղ պատրաստվում են երաժշտական ընթացիկ գործիչներ: Իր գոյութեան ընթացքում այն տվել է անվերջ ճան 400 հոգի տարրիկ մասնագիտութեան ներառագործներին, նրդիչներ, երաժիշտներ: Այստեղ են ստացել իրենց կրթութեանը մի շարք աղանդավոր երաժշտագետներ, ինչպիսիք են Ա. Սոթյանը, Ա. Հարութիւնյանը, Ա. Բաքաչանյանը, Թ. Ալթունյանը և ուրիշներ:

Հորեյլանի առթիվ Կոնսերվատորիայի դասախոսներին և ուսանողներին ողջունեցին ռեսպուբլիկայի պետական և հասարակական մի շարք մարմինների ներկայացուցիչները: Ստացվել էին ողջույնի բազմաթիվ հեռագրեր: Սովետական Միության եղբայրական ռեսպուբլիկաների, Մոսկվայի ու Լենինգրադի հասարակական կազմակերպություններից և անկախորդ երաշխագրողներին:

Երեկոյն ավարտվեց ճոխ համերգով, որին մասնակցում էին Կոնսերվատորիայի սաները:

ԺՈՂՈՎՈՐԴԱԿԱՆ ՄՏՆԳՄԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆՈՎԱՐՎՆԱԿԱՆ ԻՆՓԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՄՊԻԱԴԱ— Ամեն տարի աշնանը, սովետական կարգերի հաստատման տարեգարծի առթիվ, Հայաստանում տեղի է ունենում ժողովրդական ստեղծագործության և զենարվեստական ինքնագործունեության ստուգատես՝ օլիմպիադա:

Օլիմպիադան սկսվում է գյուղերում և ապա շքույններում: Առավել շնորհալի խմբերը և անհատ կատարողները իրավունք են շահում մասնակցելու ռեսպուբլիկական ստուգատեսին, որը տեղի է ունենում Երևանում: Վերջում տրվում է առաջնությանը շահած խմբերի և մենակատարների եղբայրակից համերգ:

Այդ ստուգատեսները, որոնց մասնակցում են ինքնուրույն երգիչներ, նվագողներ, պարողներ, արտասանողներ, կատակարարներ, դերասաններ, միշտ էլ դառնում են ժողովրդական ստեղծագործության իսկական առև, ցույց են տալիս զենարվեստական ինքնագործունեության զարգացումը ռեսպուբլիկայում:

Անցյալ 1953 թվականի օլիմպիադային մասնակցեցին 980 ինքնագործ խմբեր՝ շուրջ 22.000 կատարողներով:

Իրենց հմուտ կատարմամբ աչքի ընկան Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի և Կիրովականի քաղաքային կուլտուրայի տան սիմֆոնիկ նվագախմբերը, Արտաշատի շրջանի կուլտուրայի տան և Երևանի արհեստագործական ուսումնարանների սաներից կազմավորված երգի ու պարի խմբերը, Շահումյանի շրջանի Ստալինի անվան գործվածքեղենի գործարանի և Լենինականի ուսուցիչների տան երգեցիկ խմբերը, ինչպես նաև մի շարք անհատ կատարողներ:

Առաջնությունը շահած խմբերը և անհատ կատարողները արժանացան Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի և Կուլտուրայի մինիստրության պատվոգրերի, ինչպես նաև դրամական պարգևների:

ԱՐԴՅՈՒՆԱՐՈՐԱԿԱՆ ՆՈՐ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի արհեստագործական կոոպերացիան ընդարձակում է իր արտադրական ձեռնարկությունների թիվը: Ներկայումս Երևանում կառուցվում է մասնակալների արտադրության Նոր գործարան: Այն կլինի ռեսպուբլիկայում գոյություն ունեցող այդ կարգի գործարաններից ամենախոշորը և տարեկան կարտադրի մինչև 45.000 հատ մասնակալ:

Երևանում, Լենինականում և Նոր Բայազետի շրջանի Սարուխան գյուղում կառուցվում են գորգագործական ձեռնարկություններ: Կիրովականում ավարտվում է պատրաստի հագուստեղենի և կոշիկի գործարանների շինարարությունը: Ընթացիկ տարում Երևանում կառուցվելու են նաև կահույքի, ինչպես և ցինկապատ ամանեղենի գործարաններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՆԱԳՐՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԸ— Դասին իրավամբ համարվում է Հայաստանի յոնեագործների քաղաքը: Գնալով գեղեցկանում և բարեկարգվում է այն: Զգալի աշխատանքներ են կատարվել անցած 1953 թվականին: Զանգեզուրի պղնձահանքերի վարկությունը, արդյունաբերական մյուս ձեռնարկությունները և քաղաքային Սովետը քնակարանային շինարարության և քաղաքի բարեկարգման վրա ծախսել են զրեթե երկու անգամ ավելի միջոցներ, քան նախորդ 1952 թվականին: Բացվել են երեք նոր փողոցներ: Ասֆալտապատվել է մի քանի հազար քառակուսի մետր տարածություն: Կառուցվել են քաղմահարկ մի քանի շենքեր: Բացի այդ 50 քնտնիթեկ: Իրենց համարի կառուցվել են նոր տներ:

Կառուցվել է միջնակարգ դպրոցի Նոր շենք: Բուսական, հանքափոքների հանգստի տուն, պահածանիսի և հացի գործարան: Այժմ կառուցվում է մսի կամրիկնատ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ— Սովետական Հայաստանը հարուստ չէ բուսականությամբ: Անտառները կազմում են երկրի ընդհանուր մակերեսի միայն 10%—ը: Վերջին 15—20 տարում զգալի ալիստունք է կատարված եղած անտառները թարմացնելու, նոր անտառներ տնկելու ուղղությամբ: Մի շարք շրջաններում աշխատանք է տարվում ծառերի նոր տեսակներ աճեցնելու համար: Անտառային տարածությունները տարեցտարի ընդարձակվում են: Երկրորդ տարին էլ ինչ աշխատանքներ են տարվում Անանի ավազի անտառապատման ուղղությամբ: Այս տարի այդ աշխատանքներն ավելի մեծ ծավալ կընդունեն: Նախատեսված է լճի ավազի տնկել մի քանի տասնյակ հազար հեկտար անտառներ:





Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ

(Գիտական աշխատակից
Լուսնաշնորհ Գաղղիկ Կարողկոսի)

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

ԵՐԱՆԱՇՆՈՐԸ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՁԵՌԱԳԻՐՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ*

Ձ. Բնագիրներ՝ եկեղեցական հին հայեր-
բու և հայ հեղինակներու Կարելի է ըսել, թե
ամենեն ավելի այս խմբավորման գործերը
պատրաստ են հրատարակության համար։
Այս շարքն են Ստ. Սյունեցիի երկու մեկ-
նությունները — «Զորից անտառանշաց» և
«Ջեկկիելի», որոնց տպագրությունը վերջա-
ցած է գերաշնորհ Տ. Գնել ծայրագույն վար-
դապետի խմբագրությամբ, և ի մոտո անոնք
լույս կտեսնեն։

Վերոհիշյալ երկուքն զատ՝ կա նաև
(Ստեփանոս Սյունեցիի ?) ուրիշ մեկնություն
մը, վերցված էջմիածինի № 1306 ձեռագի-
րեն, ուրկե վերցված է Ստ. Սյունեցիի վերո-
հիշյալ Եղեկիելի մեկնությունը։ Այս մեկնու-
թյունը բաղկացած է 228 էջերի։

Մնացյալ բնագիրներու մեջ շատ կարևոր
են Որոգինեսի և Հիպպոլիտի հատակոտոր-
ները և Գրիգոր Մադիստրոսի նամակները։
Որոգինեսեն կան երկու ծրարներ, առաջինը
բաղկացած՝ 76 միջակ էջերի, որոնց մեջ սա-
կայն չկան (և թերևս գտնվին) 41—64 էջերը.
երկրորդը՝ 81 էջերի։ Հիպպոլիտեն կան
նույնպես երկու ծրարներ. առաջինը՝ 12, իսկ
երկրորդը՝ 74 մեծ էջերի բաղկացած, Գրի-
գոր Մադիստրոսի նամակները (Թուղթք)
կրաղկանան 460 էջերի, մաքուր գրված և

համեմատված բազմաթիվ ձեռագիրներու և
տպագիր աղբյուրներու հետ։

է. Դասագիրքներ — ա) Ուսումն Ս. Գրոց,
Գեորգյան ճեմարանի Ե. դասարանի համար.
չէ մշակված և ավելի ծրագրային վիճակի
մեջ է. կրաղկանա 24 էջերի։ ք) Ուսումն Ս.
Գրոց, Գեորգյան ճեմարանի Ձ. դասարանի
համար. կրաղկանա 61 միջակ էջերի։ գ)
Ներածություն Դործ և Առաքելոց-ի. նույնպես
չէ մշակված և կրաղկանա միայն 4 միջակ
էջերի։ դ) Ընդհանուր եկեղեցական պատմու-
թյուն (1914/5 ուսումնական տարի), խմո-
րատիպ, կրաղկանա 153 մեծագիր էջերի (4
օրինակ)։

Ը. Կրեական եյութեր, որոնք կրաղկանան
գլխավորապես թարգմանություններն են, ջա-
րոգներն և հոգվածներն։ Անոնց մեջ շատ
կարևոր է ու հետաքրքրական Զորս Ավետա-
րանների աշխարհաբար բարգմանությունը,
լրացած՝ 1906 թվի սեպտեմբերի 30-ին, Ա-
նուր հրատարակության արտոնության գիրը
ևս կա 1911 թվի հունվարի 27-են, ստորա-
գրված՝ տեղակալ Գեորգ արքեպիսկոպոս
Սուրենյանեն (ապա, քիչ հետո Կաթողիկոս
Ամենայն Հայոց)։ Կրաղկանա 230 միջակեն
մեծ էջերի, ծրանաշնորհ Հայրապետի արխի-
վին մեջ կգտնվեր նաև Կարապետ վարդա-
պետի (Տեր-Մկրտչյան) կատարած Մատթեո-
սի Ավետարանի թարգմանությունը (լրացած՝
նույնպես 1906 թվի դեկտեմբերի 27-ին)։

* Սկզբը տե՛ս ամսագրի 1953 թվականի սեպտեմ-
բերի համարում։

Ուրիշ գործընթացներ, սեփական վիճակով, բաղկացած 150 մեծագիր էջերի, կկրեն ինտելլիգենտ խորագիրը. «Կրոնի գոյության իրավունքի մասին», որ հավանորեն թարգմանություն է, նկատի ունենալով գրողի լուսանցքին նշանակված իջանմանները, Հավանորեն այս գրությունն քաղվածք է երանաշնորհ Հայրապետի մեկ անավարտ կամ ավելի ծրագրային վիճակի մեջ գտնվող հոդվածը, գրեթե նույն խորագիրով. «Կրոնի գոյության իրավունքը»:

Որ կրոնական նյութերում մեջ լայն տեղ կգտնվեն իր խոսած բաղամասի վառ գեղերը: Անոնիմի ոմանք իր կողմից գրի առնված են իբրև «քաղաքի քաղվածք», որի մեջ ավելի ծրագիր ու նյութ են. հետո անշուշտ գրականորեն կամ քարոզագրության համաձայն առնոք պիտի մշակվեն իր կողմից, ինչպես կարևոր թիվով եղած են իր Գնալի լույս և կյանք հատորին մեջ: Սակայն իր քարոզչության մեծ թիվ մը, զոր ան խոսած է նոր-նախընթացին մեջ 1927—1932 թվականներում ընթացքին, գրի առնված է գովելի մանրամասնությամբ և խղճամիտ եռանդով նույն շրջանի քահանաներին արժանապատիվ Տ. Պողոս Բեդեյանցի կողմից: Այս բոլորը կներկայացնեն 1.000—1.500 մեծ ու խիտ էջեր: Ասոնց վրա ավելցնելու է նաև իր նոթագրությունները, առանձնական պահանջներ խոսքերը (ամիտքերը) և նկատողությունները, որոնք իր կողմից ներշնչման իսկ պահով տողված են մեծ կամ հաճախ թուղթի մանր կտորներում վրա, ինչպես նաև իր կրոնական հոդվածները՝ անտիպ, անավարտ կամ շմշակված:

Առանձին, լուրջ, սրտաբույս ու երկարատև աշխատանք կպահանջեն այս բոլորը կարողալը, դասավորելը, համադրելը, անոնց մեջ լրացումներ բնելն ու տպելը:

Բ. Գրական և հրապարակագրական նյութեր, որոնք համեմատաբար փոքր քանակությամբ մը կներկայացնեն և որոնց մեջ շտապագրված քիչ բաներ կան: Գրական բաժինի մեջ կան 7—8 քերթվածներ, հավանորեն գրված մտերիմ բարեկամներու ալրոմներում համար: Իսկ հրապարակագրական հոդվածները հաճախ անավարտ են և անոնց մեջ կարելի է շատ քիչ բան գտնել ավարտած ու հրատարակելի:

Ժ. Օրագրություն.— Դժբախտաբար իր օրագրությունները, որոնք մեր վերջին շրջանի լոթանաստուն տարիներում համար անփոխարինելի արժեք մը կրնային ներկայացնել, չեն գտնվիր իր յարխիվին մեջ, եթե երանաշնորհ Հայրապետը սովորություն ունեցած է օրը օրին մանրամասնությամբ պահելու իր կյանքի բոլոր շրջաններում օրագրությունները, ինչպես, օրինակի համար, զարմանալի

կանոնավորությամբ և մանրամասնությամբ ըրած է լուսահոգի Բարգեն կաթողիկոս: Մենք կկարծենք, որ (նկատի ունենալով իր խառնվածքը, որ կխուսափեր առօրյային կապվելու համար անցյալին ու գիտականին), երանաշնորհ Հայրապետը պահած է օրագրությունները իր կյանքի որոշ շրջաններում, մանավանդ երբ գիտական գործն ական հեռացած էր: Իր արխիվին մեջ այժմ կան երկու օրագրություններ, առաջինը կազդկանա 22 էջերի, զոր 1945 թվին իրեն հետ բերած է Հայաստանեն, ինչպես նշանակված է այն ցուցակին մեջ, որ պատրաստված է 1945 թվին և որ կպարունակե «Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի անձնական արխիվից իրեն հանձնելու համար առանձնացված արխիվային նյութերը»: Այդ ցուցակին մեջ, թիվ 22 հատվածի տակ նշանակված է. «Օրագրեր 12 քերթից [ընդ. ցուցակի № 17]»: «12 թերթից» կամ ըստ մեր հաշվարկման 22 գրված էջերի բաղկացած այս օրագրությունը փրցվելով հանված է հավանորեն ավելի ընդարձակ հուշամատյանի մը, իր նեղ և շատ անձնական՝ բնութիւն պատճառով: Մնացյալ մասը, որ հավանորեն զերծ էր այսքան անձնական բնույթի, մնացած է երանաշնորհ Հայրապետի անձնական արխիվին մեջ (Հայաստան):

Երկրորդ օրագրությունը տեսրակ մըն է, զոր մենք մեր կողմից կոչեցինք «Օրագիր նստի վերա» և որում կարևոր մասերը կամ մեծագույն մասը հրատարակեցինք իրեն նվիրված ՀԱՍԿի բացահայտի մեջ (1952, հուլիս—սեպտեմբեր, էջ 334—7): Կազդկանա 15 միջակ և գրված էջերի, 1945 թվականին Ամերիկային դեպի Անթիոխա ուղևորության ընթացքին, նավի վրա գրի առնված օրագրություն է: Տեսրակին մնացյալ մեծագույն մասը դատարկ է, վասնզի երանաշնորհ Հայրապետը իր Աթոռը հասնելի ետք չէ շարունակած օրագրություն պահել, իր գործերուն առատության և անկե ավելի իր խառնվածքի պատճառով, զոր վերև մատնանշեցինք:

ԺԱ. Բազմաթիվ եռտաղանթյուններ, որոնք առհասարակ գրված են մանր թուղթերու վրա և որոնք նկատողություններ են իրենց ծնրողյան վայրկյանին իսկ տողված: Այս բազմաթիվ ու խառնված թուղթերը ցրվելի են վերև նշանակված մեծ խմբավորումներում մեջ: Այդ դրոշմ ևս կրնա իր գիտական աշխատակիցին պարտավորության ծիրին մեջ, հառաչիկա ամիսներու ընթացքին:

1. Այս օրագրության տարեթիվը չէ նշանակված, ըստ մեզի կրնա 1900—ական թվականներում մեջ, երբ երանաշնորհ Հայրապետի անձնական հակառակորդները դենք մեղադրած են ամենն անհիմն մեղադրող:

ԺՈՒ. ԻՐ ՏՐԱՄԱՐԱԿՎԱԾ ԳԻՐԴԵՐՈՒՆ և ճողվածներուն ձեռագիրները— Ընդհանրապես արտասահմանի մեջ հրատարակված իր գիրքերուն և հոգովածներուն ձեռագիրներն են անոնք, որոնք կարևոր են իր գործերուն երկրորդ տպագրության ատեն, անոնց առաջին տպագրության վրիպակներուն սրբագրման և պակասներուն լրացման, և վերջապես ընդհանուր կերպով անոնց ստուգման համար։ Նույնպիսի աշխատանքի մը համար կրնան մեծ շահով օգտակար ըլլալ նաև իր տպագրված գործերն անոնք, որ իր անձնական օրինակներն են և որոնց մեջ ինք կատարած է լրացումներ, նկատողություններ և սրբագրություններ։ Իր այդ անձնական օրինակները, որոնց կողքին վրա հաճախ ինք գրած է ժամ օրինակը, ձեռագրի համարժեք են. այդ իսկ պատճառով անոնք չփոխանցվեցան Կաթողիկոսարանիս մատենադարանը և դժբաղանք իր ձեռագիրներու րաժինին մեջ։



Այս գլխավոր 12 խմբավորումները ընելի ետք, երանաշնորհ Տ. Գարեգին Հայրապետի գիտական արխիվին Քննիչ մարմինը հասավ հետևյալ եղբակացությանց.

1. Երանաշնորհ Տ. Գարեգին Կաթողիկոսի անտիպ ձեռագիրներուն և նյութերուն մեջ ամենեն ավելի հրատարակելի են (թեպետ մեծամասնությամբ ոչ ընդորովին ավարտած) Ձեռագրաց հիշատակարաններու ժողովածուները, «Քարտես հայ մանրանկարչության», «Երզնկայի մանրանկարչական դպրոցը», «Գրչության արվեստը հին հայոց մեջ», Քնա-

գիրները (Որոգիներսի և Հիպպոլիտի հատակոտորները և Գրիգոր Մագիստրոսի նամակները) և «Զորս Ավետարանների աշխարհաբար թարգմանությունը»։

2. Երանաշնորհ Հայրապետի անտիպ ձեռագիրներուն և նյութերուն մեջ կան կարևոր մասով անավարտ գործեր, որոնց պետք ունին լրացվելու, դասավորվելու և խմբագրվելու, որպեսզի կարելի ըլլա հրատարակել դանոնք։

3. Թուղթի մանր կտորներու վրա իր ձգած բաղմահագար նոթագրությունները, որոնք կպարունակեն արժեքավոր նկատողություններ, մտնելու են իր անտիպ գործերուն համապատասխան մասերուն մեջ, անոնց տպագրության ժամանակ։



Երանաշնորհ Տ. Գարեգին Հայրապետի անտիպ ձեռագիրները կրողկանան երկու մեծ խումբեր.

Ա. Անոնք, զորս 1934 թվին ձգեց Հայաստան և 1945 թվին երբ Հայաստան զացած էր մասնակցելու—համար Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության, իրեն հետ Անթիլիաս բերավ։

Բ. Անոնք, զորս 1934 թվականն սկսյալ մինչև իր վերջին ժանր հիվանդությունը և մահը պատրաստեց կամ գրեց արուստահմանի մեջ։

(«ՀԱՍԿ», պաշտոնաթերթ Կիլիկիո Կաթողիկոսության, Անթիլիաս, օգոստոս—սեպտեմբեր 1953)





ՀԱՅԵՍՏԱՆՈՒԹ ՍՈՎԵՏՏԿԱՆ ԿՍՐԴԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՅՅ-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԻ ՆՇՈՒՄԸ ՍՓՅՈՒՌՔՈՒԹՈՒՄ

(Քաղված Սիյուտի հայկական մամուլից)

ՐՈՒՆԵՆՈՍ-ԱՅՐԵՍՈՒՄ

Սովետական Հայաստանի հռչակման տարեդարձի աննախընթաց տոնակատարության ժողովրդային լայն զանգվածներ մասնակցեցին. կարծես տեղաշարժ էր. և մենք կողմից, մոտ ու հեռու արվարձաններից, ամեն սեռից ու տարիքից մարդիկ շարժվում էին և իրաժեշտ զենքի հանդիսասրահ. Ռրի՝ հողն էր աննպաստ օդը, սաստիկ տոթը, ուշ գիշերին վերադարձի ժամանակ փոխադրական միջոցների պատճառելիք դժվարությունները. Ազգի իրական ազատության հասկացողությունը խոր արմատ է ձգել հայ մարդկանց ու երիտասարդ սեփեղի մտքին մեջ ու հողուն խորը:

Նոյեմբեր 28, շաբաթ երեկոյան ժամը 8-ն է: Գնում ենք գլխավոր հանդեսին. Հայ կենտրոնում առեղ ձգելիք տեղ չի մնացել: Մանրանք ճամբա են խնդրում. մոտենում ենք սրահը. Մօր նազելի աղջիկներից երկուսանյակից ավելի պաշտոնի վրա են Սովետական Հայաստանի դրոշի գույներով թևակերպված և ժպտալիս ու բարեկիրթ հյուրասիրություն, ճերմակ մեխակներով զարդարում են հանդիսականների կուրծքերը:

Ժամը 9-ն է. Դիտում ենք սրահը բնիկներից, օթյակներից: Մարդկային հեղեղ է: Բազմաթիվ անձեր ոտքի վրա են: Խայտում են սրտերը Հայրենիքի բոցավառ սիրով: Բեմավար պարոն Վ. Օզգայան մոտենում է բարձրախոսին: Մանուշակ է ներկայությունը Սովետական դեսպանատան բարձր պաշտոնյաների և բարեկամ երկրների— Ռումինիա, Լեհաստան, Բուլղարիա, Չեխոսլովակիա, Ալբանիա և այլն— դիվանատների ներկայացուցիչներին: Հոտնկայա ծափահարվում էր յուրաքանչյուր զինվորայինի մոտքը: Առաջին շարքերում նստած հյուրերի մեջ նշմարելի են հայկական կազմակերպություն ու Ֆայրենակցական միությունների վարչական անդամները և Ռուսարիտ Հայ գաղթականներ:

Իր միության մեծահարգ ատենապետ պարոն Տիրան Յուսուֆյանը: Բացվում է վարագույրը: Բեմի կողմերին դետեղվել են պատկերներ Արգենտինայի վսեմաշուք նախագահ զոր. Փերոնի և հանգուցյալ տիկնոջը՝ Եվային: Մեջտեղից՝ Սովետական Հայաստանի մեծահարգ զորապետ ՅՅ-րդ տարեկիցի վերտառություն, որ կարծես ժպտում է իր ժողովրդին, և ժողովուրդը ոգևորություն և երկարատև ծափերով ողջունում է Մայր Հայրենիքի սրբազան զորապետ: Բացման խոսք ասում է կազմակերպիչ հանձնախմբի նախագահ պարոն Զորջ Միրաքյանը՝ դրավոր, կարծ և իմաստալից, արժանի գնահատանքի: Սուղվել են բազմաթիվ հեռագրեր երիտասարդական կազմակերպություններից, Գորգորայից և բարեկամ հաստատություններից: Արգենտինայի պետական կազմից շնորհավորական հեռագրեր դրվել են Բանակի, Մոսկվային, Հաղորդակցությանը, Հանրային շինարարությունների և այլ նախարարությունների կողմից: Երբ ծանուցման կարգին ընթերցվում է նախագահ Փերոնի հեռագիրը, բուխնդակ սրահը հոտնկայա երկարատև ծափերով գնահատում է արգենտինա-սովետական բարեկամության քաղաքականությունը: Տիրում է լուռություն: Կրկին ոտքի է կանգնում ժողովուրդը: Երկյուղած հարգանքով ունկնդրում է Արգենտինայի և Սովետական Հայաստանի հիմները: Բեմի վրա է հանձնախմբի քարտուղար Հ. Ղրիտյանը՝ մեկը անխոնջ աշխատողներից, երիտասարդ համալսարանական: Սպաններեն և դրավոր է նրա ճառը. խոսմված, գուցա և կուտ. որ համախ ընդհատվում է ծափերով: Մափեղի տակ բեմ է բարձրանում ռեպրեզենտանտ խմբագիր Ար. Օլմեդ, որ հայրենաշունչ բանախոսությամբ գովքն է հյուան Հայաստանի իրական ազատագրության և հոն կատարված հրաշանման վերելքին:

Վարջին ու գլխավոր բանախոս՝ պարոն Արամ Տեյիրմենջյան:

Արահր ոտքի կանգնած՝ երկարատև ծափահարում է, երբ կարմիր վարդերից կազմված խոշոր ծաղկեփունջ է նվիրվում Առվետական դեսպանատան մշակութային կցորդին: Թունդ ու ոլորտընդուստ ծափողջույններով վավերացվում են պատճենները երկու հեռագրերի, որոնք հետագային ղրկվեցին Արգենտինայի վսեմաշուք նախագահ ղորավար Փերոնին, հայ հայրենասեր գաղութի երախտիքն ու քաղաքացիական հավատարմությունը ներկայացնող, իսկ մյուսը Նրեան, Հայաստանի նախագահ Մ. Պապյանին, արգենտինահայ գաղութի սերը, համակրանքն ու մաղթանքները հայտնող՝ Մայր Հայրենիք Առվետական Հայաստանի մշտական անասանություն համար:

Ակում է ընտանեկան պարահանգեսը, որ տևում է մինչև կիրակի առավոտյան լուսաբացը, և 3.000-ից ավելի հայ հայրենասերներ լաժանկում են Հայ կենտրոնից, իրենց հետ տանելով հայրենական տոնակատարության լավագույն ասորումները:

ՄԱՐՍԵԼՈՒՄ

Նոյեմբեր 28-ի շաբաթ երեկոն Մարսելի և շրջակա քաղաքներու հայության համար մեծ տոնի օր մըն էր զարձած: Սրեր առաջ ամեն հայ տուն իրարանցումի և մեծ պատարաստության վրա էր՝ փառավորապես և արժանավոր կերպով դիմավորելու համար Առվետական Հայաստանի 33-րդ տարեդարձը:

Կազմակերպիչ հանձնախումբը ըստ ընկալյալ սովորության ընտրած էր իտալական Վերդիի անվան թատրոնը իր հարակից լայնարձակ, շքեղ սրահներով:

Հավարավոր հայեր երեկոյան ժամը 8-ին իսկ ոչ միայն ընդարձակ թատերասրահը իր խոշորադույն ամփիթատրոնով լեցուցած էին, այլև հարակից ընդարձակ սրահները խիտ կերպով, բերնե բերան սեղմված, պարտավորեցին ուշացողները ետ վերադառնալու և ղրկվելու այդ փառահեղ և մեծաշուք հավաքույթին:

Բացումը կատարեց Գապուան լարվարձանի ԺԱՅ-ի՝ երկսեռ երգչախումբը՝ երգելով «Մարսելից» և «Առվետական ազատ աշխարհ Հայաստան» հիմները:

Օրվան առաջին ճառախոսն էր օրիորդ Զաքարյան, ժաֆիստ, որ սահուն ֆրանսերենով մը հանուն ծագումով հայ ֆրանսուհիներու, իր հիացումը հայտնեց Առվետա-

կան Հայաստանի հսկայաքայլ հառադի-մություն, և ծանրացավ խաղաղության դատին վրա, որուն փարած են միլիոնավոր անձինք, առանց ազգի, ցեղի, դավանանքի և դադափարի խարություն:

Երկրորդ քանախոսն էր ֆրանսահայության քաջածանոթ, Թունդ հայրենասեր Թադվոր Նաշիկյանը:

Մեղրնդմեջ տեղի ունեցան արտասանություններ, երգեր և աղագային պարեր:

Ապա ներկայացվեցան Առվետական Հայաստանին նոր ստացված ժապավեններ:

Կես գիշերին վերջ սկսան եվրոպական պարերը մինչև արեւածագ:

Ժողովուրդը և պարող ղուլգերու բանակը կիրակի առտու ժամը 5-ին դժվարով բուժվեցան այդ հավաքական, տաքուկ ու խանդավառ մթնոլորտեն, ղեղեցիկ և տնմոռանալի հիշատակներ տանելով իրենց հետ:

ԲՈՍՏՈՆՈՒՄ

Բոստոնի հայրենասեր հայությունը, ինչպես ամեն տարի, այս տարի ևս իր պարտականության մեջ էր, այդ երջանկարեր թվականի՝ Հայաստանի սովետականացման տարեդարձին առթիվ, իր ղդացած գիտակցական սիրույն արգասիքը տալու համար փութացած էր նոյեմբեր 29-ի կիրակին, նյու-ինգլենդ Մյուլլուրը սրահ, Բոստոնի Ազգային խորհուրդի նախաձեռնած տոնակատարություն:

Տարեդարձի այս հանգիստությունը սկսավ Ամերիկյան աղագային ու Առվետական Հայաստանի պետական հիմներով, զորս նվազեց ղաշնամուրի վրա օրիորդ Մերի Հարությունյան, ներկաները հոտնկայս ունկնդրեցին երկու երգերն ալ՝ հարգանքով և խոր ղդացումով:

Այնուհետև օրվա ատենապետ՝ Ա. Ճանձիկյան հայրենասիրական կարճ ելույթով մը րացավ ժողովը, արտահայտվելով նախ նոյեմբեր 29-ի նշանակության մասին: Ողջունեց արտագին կերպով Առվետական Հայաստանի 33-րդ և Ամենայն Հայոց Հայրապետի ծննդյան 85-րդ տարեդարձները: Անոր հայրենասիրական հորդուն ղդացումով արտահայտությունը բուռն ծափերով ղնահասովեցավ:

Նախ հրավիրվեցավ հայրենակցականներու ներկայացուցիչ ղարուն Մ. Ալլայան, որ կարճ ողբերգով մը րսավ թե՛ «Թեև ովկիանոսները կրածին հաղարավոր մղոններով մեղ մեր Հայրենիքեն, րայց արյունի եղբայրությունը ղեն կրնար երբեք րաժնել և մեր ղդացումներն ու սերը կմիախառնվին ալսօր մեր Հայրենիքի եղբայրներու ցնծություններուն»:

1. ԺԱՅ (Jeuneurs Arménienne de France) - Ֆրանսահայ երիտասարդություն — Ֆրանսիայում հայկական երիտասարդական առաջադիմական կազմակերպություն:

Մի առ մի հիշեց նաև հայրենակցականներու հիմնած ավաններու անունները, անոնց մեծ-նալն ու հառաջդիմությունը, Ըսավ նաև թե այդ «հին» ավանները «նոր» անուններով պիտի հորջորջվին մեր Հայրենիքին մեջ, որպես խնկելի կոթողները:

Ապա հրավիրվեցավ առաջին ատենախոսը՝ Արմեն Միրիջանյանը, Նյու-Յուքեն, Հարգելի ատենախոսը իր հանդարտ և բացատրողական ատենախոսությամբ, իրեն կապված պահեց մինչև վերջ ներկաները:

Հարգելի ատենախոսին իրատես վերլուծումներով և դաստիարակիչ այս ատենախոսությամբ զոհունակությամբ ունկնդրվեցավ ներկաներեն և արժանացավ շերմ ծափահարությամբ:

Վերջին խոսողը եղավ Ամերիկահայ Ազգային խորհուրդի վարիչ-տնօրեն վերապատվելի Ծ. Անդրեասյանը: Ան նախ րոպե թե՛ «33 տարի առաջ քաղաքական մեծ և փայլուն իրողություն մը տեղի ունեցավ մեր Հայրենիքին մեջ — Հայաստանը սովետականացավ: Այն ատեն, երբ մեր ժողովուրդը կապրեր վերջին ծայր հուսահատական և վճռական րոպեներ, որ այլևս անդունդին եզրը հասած էր, պիտի ջնջվեր, պիտի անհետանար վերջապես, եթե հայ ժողովուրդին փափաղին և պահանջին վրա չհասներ օգնության ուս մեծ ու պնդիվ ժողովուրդը: Հետո ցցուն փաստերով, օտարներու վկայությամբ իսկ հայտնեց թե՛ այսօր մեր Հայրենիքը այնքան շատ ու շուտ կհառաջդիմե քույր ճակատներու վրա, դիտու պտույտ տալու սուտիճան, որ դարձած է բացարձակապես ճարտարաբանականացած երկիր մը, դեռ-անց-ներով շատ մը ուրիշ երկիրներ: Այդ երկիրը կհասցնե այնպիսի աչքառու դեմքեր, որոնք միջազգային համբավի կտիրանան:

Երկու ատենախոսներն ալ շեշտեցին Ազգային խորհուրդի հզորացումը մեր գաղութներուն մեջ, և կոչ քրին բոլորին միա-նալ անոր շուրջ՝ զայն ազգու մարմին թը դարձնելու և պայքարելու համար մեր նվիրական դատին ի խնդիր: Երկուքն ալ զնահատակեցան ժողովուրդին շերմորեն:

Ամենեն վերջ ներկայացվեցավ «Կաթողիկոսի քննությունը» շարժապատկերը, որ շատ պատշաճ ու հարմարազուն էր Ամենայն Հայոց Հայրապետի 85-ամյակի առթիվ: Պատահական վրա տեսանք աշխարհական թե կղերական բոլոր պատգամավորները, տեղի ունեցող ժողովները ու խոր հավատքով դիտեցին անոր քննությունն ու օծումի արարողությունը:

Պատկերի վերջանալուն, տոնակատարությունն ալ լրացավ և ժողովուրդը խանդավառ զգացումներով լեցուն, հայրենասիրական ոգիով աույցում՝ բաժնվեցավ սրահին:

ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈՅՈՒՄ

Ազգային խորհուրդի նախաձեռնությամբ նոյեմբերի 29-ին Ռեշիլեն Սոսայիտիի սրահին մեջ հայրենասերներու կոկիկ բազմության մը ներկայությամբ տոնվեցավ Հայաստանի խորհրդայնացման 33-րդ տարեդարձը:

Օրվան ատենապետ Տաճատյան ժողովը բանալով, րոպե:

Այսօր ազգային տոնի և ցնծության օր է մեզ համար: Այսօր հոս հավաքված ենք տոնելու Հայաստանի խորհրդայնացման և հետևաբար հայ ժողովուրդի ազատագրության 33-րդ տարեդարձը:

1920 նոյեմբեր 29 բախտավոր թվականը հայ ժողովուրդի ազատագրության տոնն է կրսնեք անոր համար, որ հայ ժողովուրդը իր արյունի և դուրամի դարավոր պատմութենեն առած դասերով՝ վերջապես դիտցավ ընտրելու նոր ուղեգիծ մը...»:

Ատենախոսութենեն վերջ տեղի ունեցավ մոմավառությունը:

Ցուցադրվեցան «Հայաստանն այսօր» և «Հայաստանի երգն ու պարը» շարժանկարիկները, և ներկաները տեսնելով ակնարկված վերիջի և շինարարության իրական ապացույցները՝ զոհունակությամբ և ծափերով ողջունեցին:

Երեկոյան ուշ ատեն ներկաները բաժնվեցան մեծ զոհունակությամբ, իրենց հետ տանելով տոնակատարության շինիչ և խանդավառ տպավորությունները:

ՓԱՐԻԶՈՒՄ

Համայն հայ ժողովուրդը, երկրին մեջ թե երկրեն դուրս, միևնույն հավատքով և խանդավառությամբ այս տարի ևս տոնեց նոյեմբեր 29-ը:

Պայե դը Մյուլալյուսիտե-ի հսկա սրահներ վերով ու վարով լեցված էին: Անհնարին էր նույնիսկ ոտքի վրա տեղ մը գտնելու: Հարյուրավոր մարդիկ ստիպվեցան ետ վերադառնալ տեղի չդրություն պատճառով: Սեյա տարի աննախընթաց տարի մըն է, կրսնին շատեր: Արդարև, պետք է խոստովանել, որ այս տարվա բազմությունը աննախընթաց էր:

Ամենուրեք հայ ժողովուրդը իր անհուն երախտագիտությունը հայտարարեց հանդեպ ուս մեծ ժողովուրդին, որու եղբայրական աշակցության շնորհիվ հայ ժողովուրդը փրկվեցավ իրեն սպառնացող ֆիզիկական, բարոյական և տնտեսական փճացումեն և տիրացավ պետական անկախության:

Ինչպե՞ս շատ իրավադի կերպով հայտնեց նախկին միսիստը և հայ ժողովուրդի լավագույն բարեկամ պարոն Ժյուստեն Գոուար,

որ կենսագաճելի Փարիզի տոնակատարության հանդեսին,— «Այդ սպառնական ձյունազարդ Արարատը, որուն դադաթեն թուով աղավնին ու ձիթենիի ճյուղը կտուցին վերադարձավ ավետելով չրհեղեղի վերջը, այդ աղավնին հակառակ իրեն սպառնացող ժողովրդին երևում ու մրրկներուն, դարերն է վեր կապրի ու կշարունակե իր թռիչքը և այսօր, երբ դարձյալ աշխարհ անկայուն վիճակ մը ունի, ուր խաղաղությունը միշտ վտանդի առկ է, և համայն մարդկության դիմուն վրա թողված է արդիական կործանարար զենքերու ահալոր ստվերը: Մագթենք, որ մոտ օրեն այդ միևնույն աղավնին ձիթենիին ճյուղը իր կտուցին գա մեզի ավետելու, որ վերջապես ժողովուրդներու եղբայրությունը տարած է խաղաղության մեծ հաղթանակը»:

ՖԻԼԱԴԵԼՖԻԱՑՈՒՄ

Տարին անդամ մը, արտասահմանի հայությունը հրճվանքով և հպարտությամբ կտոնեն Սովետական Հայաստանի հիմնադրության և հայ ժողովուրդի ազատագրության տարեգարձը:

Դարերու դերութենե, չարչարանքներն և կոտորածներն հետո, 1920 թվեն ի վեր մեր ազգակիցները կապրին ազատ և ապահով կյանք մը ու նվիրված են Հայրենիքի վերաշինության սրբազան աշխատանքին:

Ազգային խորհուրդի տեղվույս մասնաճյուղի նախաձեռնությամբ այդ օրը նշելու և ուրախությամբ տոնելու ժողովուրդի տեղի ունեցավ Ֆիլադելֆիո Վաշ Դրլլու Մի էլ-ի սրահին մեջ, ղեկավարելի 13-ի կիրակին, ատենապետությամբ րանաստեղծ Կարապետ Միտալի:

Կ. Միտալը ամփոփ կերպով թվեց Մայր Հայրենիքի մեջ ամեն ճակատի վրա կատարված հսկա հառաջդիմությունները, որոնք հպարտությամբ կհիշվին նույնիսկ նվիրույթի և զանազան երկիրներն Հայաստան այցելող օտար պատգամավորություններու կողմն և ավելցուց, որ այդ բոլոր հաջողությունները մենք կպարտենք հոն տիրող խաղաղության, բարի դրացիական հարաբերության և սովետական ժողովուրդներու օժանդակության:

Ապա կարճ ուղերձներ ըրին Ազգային խորհուրդի կողմն Ավետիս Երամյան, Արաբկիրի հայրենակցականեն՝ Համազասպ Սարգիսյան, Մայաթիացիներու կողմն՝ Դ. Պաղտասարյան, Սեբաստացի հայրենակիցներեն՝ Բ. Թերճանյան, Ս. Դ. Հնչակյան կուսակցության ներկայացուցիչ Թորգոմ Մովսեսյան և Հայաստանի բարեկամ Հակոբ Գույումջյան:

Բոլոր խոսողներն ալ նշեցին օրվա կարևորությունը, և կոչ ըրին ներկաներուն զորավիգ կանգնել Ազգային խորհուրդին և րանկամ կազմակերպություններուն, մինչև մեր դատի արդար հաղթանակը:

Վերջին խոսողն էր Ազգային խորհուրդի անօրեն վերապատվելի Վրթանես Աղնակյան, որ բնավ, թե՛ մենք կտոնենք Սովետական Հայաստանի տարեդարձը, որովհետև ան մեր ժողովուրդին խաղաղություն, ապահովություն, լույս ու ուղղություն տվավ, կաճի, կզարգանա և կհառաջդիմե մեր երկիրը, անընդհատ կարտադրեն մեր գործարանները և մեր ժողովուրդը կապրի լիառատ կյանք, զոր կարելի չէր բաղդատության դեմ որևէ երկրի հետ ամեն կերպով:

Վերջավորության ներկայացվեցավ «Հայաստանն այսօր» գունավոր շարժանկարը, որը լավ տպավորություն թողուց և ժողովուրդը մեկնեցավ հայրենասիրական ջերմ դաջցումներով:

ՌՈՒՆԱՐԵՍՏՈՒՄ

Կիրակի, 29 նոյեմբեր, Սովետական Հայաստանի դուրսյան 33-րդ պանծալի տարեդարձին առթիվ, Ռումեն-սովետ բարեկամության տան, Առլուաի և Ստեփան Շահումյանի անվան Մշակույթի տան կազմակերպությամբ տեղի ունեցավ հանդիսավոր նիստ Ռումեն-սովետ բարեկամության տան սրահին մեջ:

Հանդիսության բացումեն դեռ շատ առաջ խոսուն բազմություն մը լեցուցած էր սրահը, որ շքեղորեն զարդարված էր դրոշներով և լողունգներով:

Ներկա էին մայրաքաղաքի բազմաթիվ աշխատավորներ, արվեստի, մշակույթի ներկայացուցիչներ և հայ աշխատավոր մարդիկ:

խանդավառ մթնոլորտի մը մեջ հանդիսությունը սկսավ Ռումեն ժողովրդական Ռեսպուբլիկայի, Սովետական Միության և Սովետական Հայաստանի հիմնելու, զորս երգեց Ստեփան Շահումյանի անվան Մշակույթի տան երգչախումբը:

Օրվա պրեզիդիումին բնմ բարձրանալն հետո, ակադեմիական Շտեֆան Միլքու բացված հայտարարեց հանդիսավոր նիստը, խոսք տալով ղոկո. Գր. Բամպուլջյանի, նախագահ՝ Ստեփան Շահումյանի անվան Մշակույթի տան:

Հանդիսավոր նիստին հաջորդեց խնամքով պատրաստված ճոխ հայտադիր մը, որուն առաջին մասին, հայ արվեստագետներ ալ ներկայացուցին հայկական, ռումանական և ղուսական երգեր:

Նիստի վերջավորության Գարեգին Սաղաթեյան կարգաց ողջունի հեռագիրներ՝ ուղղված Սովետական Միության և Ռուսին ժողովրդական Ռեսպուբլիկայի կառավարությանն և Սովետական Հայաստանի Գերագույն Սովետի Նախագահ Մացակ Պապյանի:

ՈՈՖԻԱՅՈՒՄ

Նոյեմբերի 29-ի առավոտը ամեն հայ տունն են կյուսնա ապատության հրճվանքով: Բոլոր հայրենասերներու սրտերը կուտին անխառն բերկրանքով մը, որմն ներշնչված բազմությունը ալիք-ալիք կխուժե «Գեորգի Դիմիարով» սրահը:

Ընդարձակ սրահը արդեն նեղ կուգա խուռներամ բազմության առջև: «Մեր Հայրենիքի ազատության տարեդարձն է այսօր», — կըսեն անցքերու առջև հանդիպողները ու զիրար կողջունեն ջերմեռանդ զգացումով:

Կհնչեն Բուլղարական, Սովետական և Հայկական հիմները, որմն հետո բեմին վրա տեղ կգրավեն գործոն նախագահության անդամները, գլխավորությամբ «Երևան» Կեդրոնական վարչության նախագահ Գարրիկ Գաբրիելյանի:

Պանծալի տարեդարձի առթիվ խնամված զեկույցով հանդես կուգա Գարրիկ Գաբրիելյան: Ան պատկերալից ոճով և ուժեղ փաստերով կվերլուծե Սովետական Միության խաղաղասեր քաղաքականությունը, կընդգծե Սովետական Միության եղբայրական ժողովուրդներու ամուր կապը և ծաղկող մեր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի րարգավաճումը տնտեսական և կուլտուրական շահանիշերով:

Ողջունի խոսքեր րրին՝ Բուլղար և սովետական միության կողմն դոկտ. Տիմ. Պոպով և «Մայրիկա» շաքարեղենի գործարանի րանվորական կուլեկտիվի ներկայացուցիչները:

Վերջավորության տեղի ունեցավ գրական-երաժշտական ճոխ համերգ մը:



Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՅ

Հայ ժողովուրդը, որպես աշխարհի հնագույն և ստեղծագործող ժողովուրդներից մեկը, հարուստ ու թանկարժեք ժառանգություն է թողել հողերը մշակույթի գրեթե բոլոր ասպարեզներում: Գիտական հետազոտությունները պայծառ լույս են սփռում հայ ժողովրդի ստեղծագործական ուղու վրա և ցույց տալիս այն թանկարժեք ավանդը, որ նա մուծել է համաշխարհային կուլտուրայի զանազան բնույթի:

Հայ ժողովրդի կուլտուրական հարուստ ժառանգությունը, պետք է ասել, որ բավականաչափ ուսումնասիրված է: Սակայն եթե կա հոգևոր մշակույթի մի ճյուղ, որը, համեմատաբար, քիչ է ուսումնասիրված, այդ հայ թատերական արվեստի հաղորամյակներ ընդգրկող հարուստ պատմությունն է: Այդ պակասությունն է, որ առիթ է տվել քանասիրական որոշ շրջաններում տարածելու այն սխալ կարծիքը, թե իբր հայկական կուլտուրան, այդ թվում և թատերական արվեստը, իր սկիզբն է առնում 4-րդ դարից (Ք. Հ.), Այսպիսով հոգևոր մշակույթի այն ողջ հարբստությունը, որ ստեղծել էր հայ ժողովուրդը իր ծագման օրից մինչև 4-րդ դարը, գրվանի տակ էր դրվում: Այստեղից պարզ է դառնում, թե ինչ կարևոր նշանակություն ունի հայ հին թատրոնի պատմության գիտական հետազոտությունը:

Պետք է նշել, որ այդ ուղղությամբ վերջերս գիտական լուրջ ներդրում հանդիսացավ արվեստագիտական գիտությունների դոկտոր Գևորգ Գոյանի արժեքավոր մի աշխատությունը¹, որը նյութական կուլտու-



րայի հուշարձանների, բանասիրության և լեզվաբանության հարուստ տվյալների վրա հեղինակի կատարած տեսական ու տեքնալոգիական ստեղծագործական աշխատանքի արժանիքն է հանդիսանում:

Գ. Գոյանը, հենվելով անառակելի փաստերի վրա, հիմնականում, ապացուցում է հայկական ինքնուրույն, ինքնատիպ թատրոնի անընդհատ գոյությունը 2.000 տարվա ընթացքում:

Հեղինակի կարևոր հետազոտությունը մեծ նշանակություն ունի ոչ միայն հայկական արվեստի, այլ նաև ողջ Միջին Ասիայի հին թատերական կուլտուրայի պատմության ուսումնասիրու-

թյան համար:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Զիվելեզովը, բարձր գնահատելով դոկտ. Գ. Գոյանի նշված աշխատությունը, գրում է. «Արվեստագիտական գիտությունների դոկտոր Գ. Գոյանի աշխատությունը ներկայացնում է նշանակալից ներդրում նաև Սովետական Միության ժողովուրդների կուլտուրայի ընդհանուր պատմության մեջ: Այն բացահայտում է սովետական բողոքական կուլտուրայի պատմական խորը արմատները՝ ցուցադրելով ՍՍՌԽ ժողովուրդների կուլտուրական դարդացման վեհությունը դեռևս հնագույն պատմական անցյալում...»²:

Ավելորդ չէր լինի դիտարկել Գ. Գոյանի ուշադրով աշխատության մեջ զարգացված հիմնական դրույթների լույսի տակ ընթերցողի հիշողության մեջ վերականգնանալ հայկական թատերական հարուստ կուլտուրայի պատմական ակունքները:

1. Գևորգ Գոյան, «Հին Հայաստանի թատրոնը», հատոր 1-ին, Մոսկվա, 1952 թ. (ռուսաց լեզվով) — նույնի «Միջնադարյան Հայաստանի թատրոնը», հատոր 2-րդ, Մոսկվա, 1952 թ. (սուսաց լեզվով):

2. Գ. Գոյան, «Հին Հայաստանի թատրոնը», էջ 36:

Հայկական հին թատրոնի ժառանգական արվեստները պետք է փնտրել Դավթյան շրջանում՝ դեռևս հայերի որպես ժողովրդի ձևավորման ժամանակաշրջանում: Այդ շրջանը, որ դուրս է Գ. Գոյանի համարում է հայ թատրոնի նախապատմությունը, բնորոշ է ժողովրդական խաղերի և բնության պարթոնների, արեհի և Արա Գեղեցիկի հեթանոսական պաշտամունքի թատերականության:

Վաղ անցյալում Հայաստանի հողի վրա գոյություն է ունեցել գուսանական ինքնատիպ թատրոն, որը բավականաչափ զարգացած է եղել և սերտորեն կապված կրոնապաշտամունքային արարողությունների հետ: Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ի մեջ արժեքավոր հիշատակություն կա այն մասին, որ հայկական հին գուսանները ինքնաստեղծ կրթչության գործիքի հրեշտակների տակ իրենց երգերով, պարերով և խաղերով օգնում էին իրենց նշանավոր նախնիների գործերը, պառնկելով և գովերգելով նրանց սխրագործությունները: Գուսանական թատրոնը հող է պատրաստել թատերական արվեստի զարգացման համար տարով նրան ինքնուրույնության և ինքնատիպության ընկալի:

Հին հունական նշանավոր պատմիչ Պլուտարքոսի վկայությամբ, Տիրան 2-րդը իր նվաճած հելլենիստական քաղաքներից Հայաստան քերեց ժառանգական շատ դրամաներ, որոնք չէին կարող բարեբար ազդեցություն չունենալ արդեն վաղուց ի վեր Հայաստանում գոյություն ունեցող գուսանական թատրոնի զարգացման վրա:

Հայ ժողովրդը հելլենիստական թատերական կուլտուրան յուրացրեց ինքնատիպորեն զարգացնելու ճանապարհով՝ օրնկալածը ենթարկելով ազգային կերպարանափոխման:

Ձևայնը, — գրում է Գ. Գոյանը, — յուրացրին անտիկ թատրոնը և օգտվում էին նրանից՝ ելնելով իրենց շահերից, թատրոնը վերածելով հին Հայաստանի կուլտուրայի օրգանական բաղկացուցիչ մասի: Այլ խոսքով ասած, նրանք ստեղծեցին հելլենիստական թատրոն, այսինքն տեղական և հելլենական կուլտուրայի յուրահատուկ դուզակցում, որի ինքնատիպության գծերը պարզորոշ տեսանելի են հաջորդաբար կենտրոնավորված միջոցներով:

53 թվականին (Ք. Ա.) Հայաստանի մայրաքաղաք Արտաշատում բեմադրվել է հույն հռամպստիկ դրամատուրգ Էվրիպիդեսի «Բարսառհիներ» ողբերգությունը: Այդ ՍՄԻՄ

ժողովուրդների թատրոնների պատմության մեջ մեկ ստույգ հայտնի առաջին ներկայացումն է: Նշանակում է 2.000 տարի առաջ մեր Հայրենիքում արդեն բարձր զարգացման է հասած եղել թատերական արվեստը: Մինչև վերջերս հայ ժողովրդի կուլտուրական կյանքում սեղի ունեցած այդ կարևոր իրադարձությունը առանձին բանասերների նրկելով էր գտել իր պատշաճ դաստիարակություն: Այսպես, տարածված է եղել այն սխալ կարծիքը, թե իբրև «Բարսառհիներ» բեմադրվել է ի պատիվ պարթևների թագավոր Ռոնդեսի որդու և Արտաշատի քրդամուսնության: Այնպես, բեմադրվել է հռոմեացիների դեմ տարած հաղթանակը նշանավորելու համար: Այդ է պացուցում այն փաստը, որ դերասան Յասոնը, իրագործելով Արտաշատի մտահղացումը, բեմադրության մեջ պահանջվող բոլոր արվեստական գլխի փոխարեն, հաղթանականերից ցույց է տալիս կրատիկ կտրված գլուխը և արտասանում ողբերգության հետևյալ տողերը: «Տո՛ւմ վերադառնալով, մենք բերում ենք լեռներից նոր սպանված եղջերուն՝ բախտավոր մի որս: Էվրիպիդեսի «Բարսառհիներ» բովանդակության խորագրին ուսումնասիրողները և այն ներկայացման նկարագրության հետ բաղդատելով նոր լույս է սփռում Արտաշատում «Բարսառհիներ» բեմադրության փերաքերյալ Պլուտարքոսի արժեքավոր տեղեկությունները: Պարզվում է, որ հույն նշանավոր դրամատուրգ կլասիկ ողբերգության ուժեղ տրամադրական փայլուն մտահղացումը Արտաշատի կողմից նայատակ է տեղեցել բարոյական հարված հասցնել հայ ժողովրդին մեծ տառապանքներ հասցրած հռոմեացիներին, ի դեռ հանել հռոմեացիների բանակի ճանապարհորդությունը առասպելը և ամրապնդել հայ ժողովրդի հավատը օտարերկրյա զավթիչների դեմ տարած պայքարում: Այդ իրողությունը ակնառու ապացույց է, թե ինչպիսի մեծ դեր է խաղացել թատրոնը հին Հայաստանի քաղաքական կյանքում: Հայ ընտան, «Բարսառհիներ» բեմադրությունը, անտիկ աշխարհի հանճարեղ դրամատուրգի անունը սերտորեն կապվում է հայ թատրոնի պատմության հետ: Հայկական թագավոր Արտաշատի, Պլուտարքոսի վկայությամբ, գրել է ողբերգություններ, պատմական ներկայություններ:

Հայկական հելլենիստական թատրոնի ունիքը կազմված էր անտիկ կրասիկ դրամատուրգիայի (Էվրիպիդես և ուրիշներ) նրկերից և հայկական օրիգինալ ողբերգություններից (Արտաշատի): Մենք ունենք Պլուտարքոսի արժեքավոր վկայությունը, որ դեռ մինչև «Բարսառհիներ» բեմադրությունը

1. ՏՊՄ Մովսես Խորենացի, «Պատմություն Հայոց», Տիֆլիս, 1938 թ., գիրք Ա, գլուխ 6, էջ 27.

2. Գ. Գոյան, «Հին Հայաստանի թատրոն», էջ 55.

նը Արտաշատում, ախտեղ ներկայացվել են ճշմարիտական շատ ներկայացումները: Այն փաստը, որ Արտավազդից հետո ևս Արտաշատի թատրոնը շարունակել է իր գոյությունը, ցույց են տալիս հին Արմավիր քաղաքի մոտ հայտնաբերված արձանագրությունները: Այդ արձանագրությունների ուսումնասիրությունը ավագնեփկոս Յա. Ի. Սմիրնովին հանգեցրեց այն եզրակացության, որ Նրանց մեկի մեջ, ամենայն հավանականությամբ, մենք ունենք Արտավազդի ողբերգություններից մեկի տողերը:

Մեզ հայտնի է, որ առաջին հայկական թատրոնի շինքը կառուցվել է Տիգրանակերտում 69 թվականին (Ք. Ա.): Տիգրանի յոթի Արտավազդը շարունակելով հոր գործը, Արտաշատում ստեղծեց Հայաստանում երկրորդ հելլենիստական տիպի թատրոնը:

Հայ թատերական արվեստի պատմությանը նվիրված աշխատության հեղինակը՝ Գ. Գոյանը հին Հայաստանում գուսանների թատրոնի առկայությունը ցույց տալու համար օգտվում է Կենյաս հնագույն դրավոր տեքստերի, այնպես էլ լեզվաբանության տվյալներից: Այսպես, նա զգուսան բառի իմաստի բացահայտման հիման վրա, ցույց է տալիս, որ հին Հայաստանում այդ բառը նշանակում էր ոչ թե աշուղ, այլ ժամհոս: Այդ բառի գործածումը հայոց լեզվում ապացույց է հին Հայաստանում գուսանական արվեստի առկայության: Մովսես Խորենացու վկայությամբ գուսանները երգում, պարում էին բամբուկների նվագակցությամբ: Բացի երաժշտական այդ գործիքից, հին Հայաստանի բնակիչները օգտվում էին նաև սնարից, տավրդից, վինից, սրինգից, փողից, շնփողից, թմբուկից, ձնձղալից և այլն:

Հետաքրքրական է, որ հունական ժամհոս բառի դործածությունը հայոց լեզվում դուրս է մղում զգուսան բառը, որը համիմաստ նշանակություն ունի վերջինիս հետ: Հին հայերենում վարձակա բառի գործածումը ակնառու ապացույց է հին Հայաստանում մունջ դերասանուհիների առկայությանը, որոնք, ինչպես ցույց են տալիս նյութական կուլտուրայի հուշարձանները, ոչնչով չեն չէին մնում Աթենքի և Հռոմի դերասանուհիներից: Դերաստարար, այդ մասին քիչ տեղեկություններ կան գրավոր հիշատակարաններում: Մովսես Խորենացին վկայում է, որ կար նազենիկ անունով մի վարձակ, որ սերգում էր ձեռքերով:

Հայ հին թատրոնի պատմության նվիրված աշխատության հեղինակը, Հայաստանի տարբեր վայրերում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերված բազմաթիվ բրոնզյա արձանիկների տաումնասիրության հիման վրա, եզրակացնում է, որ դրանք

պատկերում են գուսան-միմոսներին, ձայնարկուհիներին, նրանց խմբերի ներկայացումները հայկական հելլենիստական թատրոնի բեմում:

Այն փաստը, որ հին Հայաստանում ժամհոս բառը հայերենում արտահայտված է ոչ թե հունարենից փոխառնված ժամհոս, այլ զգուսան բառով, իսկ լեզվագիտական հետազոտությունը, տրագիկան՝ ռոդերգությունը բառերով, ցույց են տալիս կերպով արտահայտում է հայ հելլենիստական թատրոնի ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը:

Հին Հայաստանում զարգացած են եղել կոմեդիան և սատիրան: Այդ մասին է խոսում հին հայերենում այնպիսի բառերի գործածումը, ինչպիսիք են՝ լեզատակախաղ, լեզատակերգ, լեզատակերգակ, լեզատակազուսան և այլն: Հին հայերենում լեզատակաբառ բառը նշանակել է ռոդերգակ: Ձայնարկու գուսանները զովերգում էին զոհվածի սիրտագործությունները, որոնք նախատարել էր իր կենդանության ժամանակ, ողբում կորստի առթիվ, միախառնում մահացածի հարազատներին: Այդ մասին վկայում են հայ պատմիչները, Ձայնարկու, լեզատակաբառ գուսան՝ բառերի գործածությունը հին հայերենում ինքնին խոսում է հին Հայաստանում ողբերգակ թատրոնի առկայության մասին:

Այդ միտքը հաստատում են ոչ միայն մեր գրավոր հին տեքստերը, լեզվաբանությունը, այլև հնագիտության տվյալները: Պեղումների ժամանակ հին Հայաստանի տարբեր վայրերում գտնվել են մեծ քանակությամբ արձանիկներ, որոնց խորագրերն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք պատկերում են ողբերգակ գուսաններին: Օրինակ, այդպիսին են Արմավիրում գտնված մարդկային կերպարաններ պատկերող ոսկյա մեդալիոնները: Հետաքրքրական է նշել, որ հին պատմիչների մոտ ռոդերգակ նշանակելիս է եղել ոչ միայն ողբերգության դերասան, այլև նրա հեղինակը:

Հայ թատրոնի պատմությանը նվիրված աշխատության հեղինակը այն միտքն է հայտնում, որ Հայաստանի հելլենիստական թատրոնում բեմադրությունները տեղի վրա տեղանում ոչ միայն հունարեն, այլև հին հայերեն լեզվով:

Հայ հին թատրոնի պատմության համար կարևոր է պարզել, թե մինչև 5-րդ դարը գոյություն ունեցել է արդյոք հայերեն լեզվով գրի առնված դրամատուրգիա, հայկական գիր, գրականություն: Գ. Գոյանը իր աշխատության մեջ բերելով քաղվածքներ 5—7-րդ դարերի հայ գրավոր աղբյուրներից, եզրակացնում է, որ դեռ մինչև Մեսրոպ

Մաշտոցը գոյություն է ունեցել հայերեն լեզվով գրականությունում: Նա գտնում է, որ հայերը իրենց մտքերն արտահայտում էին հայերեն լեզվով՝ օգտվելով հունական, պարսկական և այլ օտար լեզուների տառերից, և որ հայ հին պատմիչների երկերում հանդիպող այն ասույթները, որոնց մեջ նշվում է, որ տեքստերը գրվում էին հույն կամ պարսկական տգրգռված, վերջին րադը պնդք է հասկանալ ոչ թե ղեզվով, այլ՝ ճառառերով: Նշանակությունը: Իր միտքը հաստատելու համար նա հենվում է նաև պեղումների ժամանակ հայտնաբերված այն արձանագրությունների վրա, որոնք գրված են հայերեն լեզվով, րայց օտար այբուբենի տառերով: Այս ամենից հետո Գ. Գոյանը անում է այն լեթագրությունը, որ մինչև 5-րդ դարը գոյություն է ունեցել հայերեն լեզվով գրի առնված դրամատուրգիա, ինչպես օրիգինալ, այնպես էլ թարգմանական:

Գ. Գոյանի քարձրացրած հարցը կարևոր նշանակություն ունի հայ թատրոնի և առհասարակ հայ մշակույթի պատմությունը ուսումնասիրելու համար և պնդք է գրավիրանասերների, լեզվարանների, հնագետների ուշադրությունը:

Հայ հին թատրոնի պատմության ուսումնասիրության համար կարևոր աղբյուր են հանդիսանում Հովհան Մանգակունի կաթողիկոսի (478—490) երկերը, որից պարզվում է, որ 5-րդ դարի հայաստանի թատրոնները գործելիս են եղել ժամեն ժամ, ամեն օրը, և որ թատերական արվեստը լայն տարածում էր գտել հին Հայաստանում: Հայոց հայրապետի գրավոր հիշատակարանից երևում է, որ ներկայացումները բեմագրվել են թատրոնի համար կառուցված հատուկ շենքերում: Այդ մասին է խոսում նաև այն, որ հին հայերեն լեզվում արմատացել էր «թատերատես» բառը: Այս ամենը ակնառու կերպով հերքում է Մ. Գ. Զարհանալյանի այն կարծիքը, թե միջնադարում հայ թատրոնը վարդապատ չի եղել, չի ունեցել իր հատուկ շենքը, կարծիք, որ արտահայտել է նա իր «Հայկական հին դպրության պատմություն» աշխատությունում:

Զարգացած թատերական արվեստի առկայությունը հին Հայաստանում ինքնին խոսում է այդ ժամանակաշրջանում նկարչական ու քանդակագործական արվեստի զարգացման մասին, առանց որի չէր կարող գոյություն ունենալ թատերական դեկորացիոն արվեստը: Եվ իրոք, հայ նշանավոր պատմիչ Սյրիշեն, իր «Վարդանանց պատերազմը» աշխատության մեջ, վկայում է, որ հայ նախարարների կոնալք խորը վիշտ ապրելով այն առթիվ, որ իրենց ամուսինները գերի էին վերցվել պարսիկների կողմից, սրբությունը

պահպանում ու պաշտում էին իրենց ամուսինների նկարներն ու արձանները: Մեզ են հասել Տիգրանի և Արտավազդի նկարներով արձաթյա և պղնձյա դրամներ, ոսկյա մեղալիտներ, որոնց վրա նուրբ կերպով պատկերված են արձավիրյալ ողորդականներ: Այս ամենը օրոշակի պարզություն է մտցնում Վրթանես Քերթոզի (6-րդ դարի վերջը—7-րդ դարի սկիզբը) այն մտքի մեկնարանության մեջ, թե իրր այդ շրջանում հայերը չէին կարողանում պատրաստել նկարներ և դրանք լեծուծված էին Հունաստանից: Տարակույս չկա, որ Վրթանես Քերթոզի մոտ խոսքը այն սրբանկարների մասին է, որոնք բերվում էին Հունաստանից:

Որ նշված ժամանակաշրջանում հին Հայաստանում զարգացած են եղել նկարչությունն ու քանդակագործությունը, այդ մենք իմանում ենք նաև Ձեռնակների իմաստասիրի Օձնեցույ մատենագրությունից: Նորին ընդդէմ պաղիկիանց աշխատությունից, որի մեջ կա հավաստի տեղեկություն, որ հայերը զբաղվում էին և՛ քանդակագործությամբ, և՛ նկարչու արվեստով: Պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական կուլտուրայի հուշարձանները ցույց են տալիս, որ հայ քանդակագործությունն ու նկարչությունը գոյություն են ունեցել առնվազն մեր թվարկությունից առաջ 1-ին դարից սկսած:

Հայ մտավոր մշակույթի, այդ թվում և հայ թատերական արվեստի գիտական պատմության ստեղծման համար կարևոր աղբյուր է նաև հայ նշանավոր մտածող Դավիթ Քերականի տեսական ժառանգությունը, որի խորազնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս խորը միջնադարում հայ էսթետիկական միտքը հասել էր այնպիսի բարձրության, որ գտնում էր, թե արվեստի կատարելագործությունն և հավերժականությունն պայման է հասարակությանը սպասարկելը: Արև արվեստը, որը չի ծառայում հասարակությանը, չի կարող մնալուն լինել և շմահանալ, և ընդհակառակը, գեղարվեստական երկը կատարյալ է և անմահ, երբ այն ծառայում է հասարակությանը, նպաստում է նրա հոգևոր զարգացմանը:

Որ իրոք միջնադարի ամբողջ ընթացքում Հայաստանում գոյություն է ունեցել թատերական արվեստը, վկայում են նյութական կուլտուրայի հուշարձանները: Դոկտոր Գ. Գոյանի արժեքավոր աշխատության մեջ այդ հուշարձաններից բերված են մեծ քանակությամբ նմուշներ: Հայ թատրոնի պատմության համար րացառիկ կարևոր նշանակություն ունեն Աղթամարի տաճարի պատերին պատկերված թատերական դիմանկերը, որոնք արտահայտելով մարդկանց արտաքին գիմագետի բազմազանությունը, զադափար

են տալիս հին հայկական թատրոնի հարուստ ունեւորութեան մասին: Աղթամարի տաճարի պատերին փորագրված կենդանիների դիմակները, որոնք հիշեցնում են հին հայկական մանրանկարչության վրա պատկերված պարող զուսանների գլխիկներին դրված դիմակները, Լոռուի հայտնաբերված մեր թվարկությունից առաջ 8-րդ դարին վերաբերող բրոնզե մանրանկարի վրա թռչունների և արջերի դիմակներ կրող մարդկանց պատկերները, պերճախոս կերպով խոսում են, ինչպիսիք՝ վաղեմի պատմությունում հայ թատրոնը:

Քանդակագործի կողմից Աղթամարի տաճարի պատերին մարդկանց դիմագծերի հարստության պատկերումը խոսում է հայ հին քանդակագործական քարեր սարվածքի, ինչպես և այն մասին, որ հին Հայաստանում անընդհատ գործելիս է նրանց իր ժամանակին պարզացման քարեր մակարդակի վրա կանգնած թատերական արվեստը: Այդ հուշարձաններից մենք իմանում ենք, որ դիսուսանները հաճախ են նկարվում հատուկ կերպով պատրաստված դիմակներով և թատերական հագուստով:

Միջնադարից մեզ են հասել մեծ քանակությամբ մանրանկարներ, որոնք օգնում են մեզ լույս սփռելու հին հայկական թատրոնի այնպիսի մանրամասնությունների վրա, ինչպիսիք են դերասանների հագուստը, դրվարները, դիմանկարները և թատերական այլ իրեր: Միջնադարի հայ նշանավոր մանրանկարիչների վրձինի տակ պայծառությամբ

կենդանություն է ստացել դերասանների հոգեկան աշխարհը, որը իր դրսևորումն է գտել պատկերված դերասանների դիմախաղի, դեմքի շարժումների մեջ, վերջիններս հաճախ գործածել են հրկակի, ծառի դեմքեր սրտկերող դիմակներ, որոնք նրանց հնարավորություն են տվել միաժամանակ խաղալու մի քանի դերեր:

Մենք ներկա հոգեպետում համառոտակի փորձեցինք շարադրել արվեստագիտական գիտությունների դոկտոր Գ. Գոյանի աշխատության հիմնական գրույթները, որը ընդգրկում է հայ թատրոնի քանդակարա պատմության միայն առաջին կեսը: Գ. Գոյանը իր մենագրության վերջում տալիս է նաև «նախնական հաղորդումներ», որի մեջ տրված է հայ թատրոնի զոյությունների կրկնող հազարամյակի համառոտ ուղիագիծը:

Գ. Գոյանի ներկա աշխատությունը սրժիքավոր ներդրում է հայ արվեստի, այդ թվում և թատերական կուլտուրայի պատմության մեջ: Այդ աշխատությունը ընթերցողին պատկերում է հայ ժողովրդի դարավոր կուլտուրայի հարուստ պատմությունը: Գոյանի այս աշխատությունը միաժամանակ ցույց է տալիս, թե ինչպիսիք նշանակալից հաջողությունների կարող է հասնել դիմախաղը՝ իր ուսուցանան, մեղվաջան, ստեղծագործական աշխատանք է կատարում նյութական կուլտուրայի հուշարձանների և հնագույն գրավոր աղբյուրների վրա:

ՔԱՆԱՍԵՐ

